Վ.Ս. Ն եր ս ե ս յ ա ն ց ի « ք աղ ա ք ա ց ի ա կ ա ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն » ն մ ա ն հ ա յ ե ց ա կ ա ր գ ը մ ի ա ս ն ա կ ա ն պ ե տ ա կ ա ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ա յ ն պ ի ս ի ի մ ա ս տ ա վ ո թ ու մ է , ո թ ը չ ի կ ա ր ո ղ ու ն ե ն ա լ ք աղ ա ք ա ց ի ա ի ր ա վ ա կ ա ն ն շ ա ն ա կ ու թ յ ու ն , ք ա ն ի ո թ ա յ ն չ ի հ ա ն դ ի ս ա ն ու մ ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն ա յ ն ի մ ա ս տ ո վ , ի ն չ պ ե ս ո թ հ ա ս կ ա ց վ ու մ է ք աղ ա ք ա ց ի ա կ ա ն ի ր ա վ ու ն ք ու մ : Ա պ ա ս ո ց ի ա լ ի գ ա ց վ ա ծ ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն մ ե ջ բ ո լ ո թ ք աղ ա ք ա ց ի ն ե թ ի հ ա մ ա ր հ ա վ ա ս ա ր բ ա ժ ն ի ի ր ա վ ու ն ք ը գ ո թ ծ ն ա կ ա ն կ ի ր ա ռ ե լ ի ու թ յ ու ն ու ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ու ն ե ն ա լ չ ի կ ա ր ո ղ ա յ ն ք ա ն ո վ , ո թ ք ա ն ո վ ն մ ա ն բ ա ժ ն ի ի ր ա վ ու ն ք ի ս ու բ յ ե կ տ ը չ ի կ ա ր ո ղ ա ռ ա ն ձ ն ա ց ն ե լ ա յ ն կ ա մ կ ա տ ա ր ե լ ա յ ն պ ի ս ի գ ո թ ծ ո ղ ու թ յ ու ն ն ե թ , ո թ կ հ ա ն գ ե ց ն ի ա յ դ « բ ա ժ ն ի » օ տ ա ր մ ա ն ը : Պ ե տ ու թ յ ա ն ց ա ն կ ա ց ա ծ ք աղ ա ք ա ց ի տ վ յ ա լ պ ե տ ու թ յ ա ն ի ն ք ն ի շ խ ա ն ու թ յ ա ն կ թ ո ղ ն է , ի ն չ ը ժ ո ղ ո վ թ դ ի ք աղ ա ք ա ց ի ն ե թ ի մ ի մ ա ս ի կ ո ղ մ ի ց յ ու ե ր ա ց վ ե լ չ ի կ ա ր ո ղ : Ո թ պ ե ս ժ ո ղ ո վ թ դ ի բ ն ա կ ա ն ան օ տ ա ր ե լ ի ի ր ա վ ու ն ք , ա յ ն չ ի կ ա ր ո ղ օ տ ա ր ե լ ա ն գ ա մ ո ղ ջ ժ ո ղ ո վ ու թ դ ը : Ա յ ս տ թ ա մ ա ք ա ն ու թ յ ա մ ք , Վ.Ս. Ն եր ս ե ս յ ա ն ց ի « ք աղ ա ք ա ց ի ա կ ա ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն » հ ա յ ե ց ա կ ա ր գ ու մ մ ե գ հ ա մ ա ր ը ն դ ու ն ե լ ի մ ի ա յ ն ա յ ն է , ո թ հ ա ն թ ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն ը հ ա մ ա տ ե ղ ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն դ թ ս ն ո թ ու մ է : Մ ի ն չ դ ե ռ , ք ա ն ի ո թ ա յ դ պ ի ս ի դ թ ս ն ո թ ու մ ն ու ն ի ո թ ա կ ա կ ա ն ա յ լ հ ա տ կ ու թ յ ու ն , ք ա ն ք աղ ա ք ա ց ի ա կ ա ն ի ր ա վ ու ն ք ի ի մ ա ս տ ո վ հ ա մ ա տ ե ղ ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն ը , ու ս տ ի ճ ա ն ա չ ե լ ի է յ ու ե ր ա ք ա ն չ յ ու ե ր ք աղ ա ք ա ց ու ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի ր ա վ ու ն ք ը ո չ թ ե գ ու յ ք ի ո թ ո շ ա կ ի մ ա ս ի , ա յ լ ի ր ա վ ա գ ո թ ու թ յ ա ն ի ր ա վ ա ք ա ն ա կ ա ն հ ն ա ր ա վ ո թ ու թ յ ա ն ի ր ա կ ա ն ա ց մ ա ն մ ա ս ն ա ք ա ժ ն ի ն կ ա տ մ ա մ ք :

Ա յ ս պ ի ս ո վ , ի մ ի բ ե թ ե լ ո վ վ ե թ ո գ թ յ ա լ ը գ ա լ ի ս ե ն ք ա յ ն ե գ թ ա հ ա ն գ մ ա ն , ո թ թ ե ն Յ Յ ք աղ ա ք ա ց ի ա կ ա ն օ թ ե ն ս դ թ ու թ յ ու ն ը կ ա ր գ ա վ ո թ ու մ է պ ե ա կ ա ն և

համայնքային սեփականությունները հետ կապված հարաբերությունները, այնուամենայնիվ □հանրային սեփականություն □ընդհանուր եզրը չի գործածվում և չի կարգավորում հանրային սեփականության հետ կապված հարաբերությունները որպես իրավունքի ինքնուրույն ինստիտուտ: Այս առումով՝ առաջարկում ենք ազգային օրենսդրության մշակման և կատարելագործման գործընթացում շրջանառության մեջ դնել «հանրային սեփականություն» հասկացություն-եզրը, որի ներքո անհրաժեշտ է հասկանալ գույքի նկատմամբ հանրային իրավական կազմավորումնե հիմնական թի գույքային իրավական իշխանություն (plenitudo potestas in re) համատեղ սեփականության որակական այլ մակարդակի դրսևորում, որի նկատմամբ ճանաչելի է պետություն կամ համայնքի յուրաքանչյուր անդամի հանրային գույքի սեփականատիրոջ իրավագործության իրականացման մասնաբաժինը:

12.3 անրային սեփականության իրավունքի սոցիալական գործառնությունները

Յանրային սեփականության իրավունքը՝ որպես սուբյեկտիվ իրավունք ունի ինչպես իր ներքին, այնպես էլ արտաքին դրսևորումները: Եթե հանրային սեփականության սուբյեկտիվ իրավունքի ներքին կողմն արտացոլվում է երեք իրավագործություններում, ապա արտաքին կողմն արտահայտվում է դրա ձևերում և գործառնությունում:

Սեփականության սուբյեկտիվ իրավունքի հայեցակարգի հեղինակներն են 19-րդ դարի ռոմանիստները: Նրանց հակադրվեցին

պոզիտիվիստներն իրենց սեփականության սոցիալական տեսությունով: Այս տեսության հեղինակները (Օ. Կոնտ, Լ. Դյուգիսայլք) կարծում էին, թե սուբյեկտների մոտ բացակայում են իրավունքները, և նրանք պարտավոր են ենթարկվել սոցիալական նորմերին՝ կատարել իրենց վրադրված սոցիալական գործառնությունները:¹⁴ Սեփականությունն ուղղված է ձևավորելու և կառավարելու կապիտալները, որտեղ յուրաքանչյուր սերունդ պատրաստում է հաջորդի աշխատանքները (Օ. Կոնտ):¹⁵ Լ. Դյուգիսայլքը համարելով «սոցիալական գործունեության միջակայք», փորձում էր վերացնել իրավաբանական գիտություն մեջ որոշ մետաֆիզիկական հասկացություններ, ինչպես էր «անձի սուբյեկտիվ իրավունք» հասկացությունը՝ ներկայանալով որպես իրավունքի սոցիալական-իրավաբանական ընկալման պաշտպան: 20-րդ դարի սկզբում նա ամեն ջանք գործադրեց Ֆրանսիայի քաղաքացիական իրավունքը սոցիալականացնելու համար: Լ. Դյուգիսայլքը գրեց. «Սեփականությունն իրավունք չէ, սեփականությունը սոցիալական գործառնություն է»:¹⁶

Արդի իրավագիտությունում սեփականության իրավունքը ներկայանում է որպես այդ երկու տեսությունների համաձուլվածք, ըստ որի՝ սեփականության իրավունքը՝ որպես սուբյեկտիվ իրավունք ունի ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական գործառնություն, այսինքն՝ սեփականատերը գույքի նկատմամբ ունի ոչ միայն իրային կամ գույքային իրավունքներ, այլև կրում

¹⁴ Տե՛ս *Кулагин М.И.* Предпринимательство и право: опыт Запада. – М.: Дело, 1992, էջ 109,

¹⁵ Տե՛ս *Carbonnier J.* Droit civil. Tome 3, Les biens. Paris. 1992, էջ 148,

¹⁶ Մեջբերումն ըստ *Айкянц А. М.* Актуальные проблемы совершенствования частного права в Армении. Дисс. на соискание ученой степени др. юр. н., М., 2006, էջ 255,

Ե պոզիտիվ և նեգատիվ պարտականություններ
երրորդ անձանց առջև:

Գործառույթ-ֆունկցիան հասկանում են որպես
պարտականություն: Գործառույթի նման
պատկերացումներ սահմանվում է մի շարք
սահմանադրություններով: Բայց եթե գործառույթ
և պարտականություն հասկացությունները
նույնացնենք, ապա իմաստագրվում է դրանք
տարանջատելու անհրաժեշտությունը: Ըստ այդմ՝
գործառույթը յուրահատուկ, բարդ և
վեկտորավորված պարտականություն է: Այդ է
վկայում նաև 1940 թվականին գերմանական
օրենսդրության մեջ function (գործառույթ) օտարածի
տերմինի «գտարյուն» գերմաներեն *aufgabe* բառով
փոխարինելու փորձը, որն ունի □առաջադրանք □¹⁷
իմաստը:

«Սոցիալական» ածականի, որն ուղղակիորեն
վերագրվում է գործառույթ հասկացությանը,
հայերեն փոխադրությունը ևս դժվար է: Այն չի
փոխարինում ո՛չ հանրային, ո՛չ հասարակական, և
ո՛չ էլ պետական հասկացությունները, այլ
ամբողջական է միայն այս բոլոր
հասկացություններում ներառելու դեպքում:¹⁸
«Հասարակության և պետության կարիքների համար
սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ
հոդվածի առաջին մասի համաձայն՝ հանրային շահը
հասարակության և պետության կարիքների համար
սեփականության օտարման սահմանադրական հիմքն է:
Ըստ այդմ՝ գործող օրենսդրությամբ հանրային

¹⁷ **Անդրեասյան Գր. Մ.** Գերմաներեն-հայերեն բառարան / խմբագիր
Ե.Գ.Տեր-Մինասյան, Եր.: ԵՊՀ հրատ., 1976, էջ 51,

¹⁸ □Սոցիալական գործառույթ□ հասկացության տիրույթն
ավելի լայն է. սոցիալական գործառույթը պարտավորեցնում է
բնակարանի սեփականատիրոջն իր իրավունքներն իրացնելու
և գույքահեռ կատարել բազմաբնակարան շենքի պահպանման
ուղղված գործողություններ և ձեռնպահ մնալ այն
գործողություններից, որոնք կարող են վնասել ընդհանուր
բաժնային սեփականությանը:

հասկացողությունն ապելի լայն է և իր մեջ է ներառում հասարակական և պետական հասկացողությունները:

«Սեփականություն սոցիալական գործառույթը» հասկացողությունում սոցիալականը նշանակում է ինչ-որ կոնկրետ (պետական, համայնքային կամ այլ մասշտաբի) հասարակություն-սոցիումի հանդեպ պարտականություններ, այլ ոչ թե ընդգծում է պարտավորությունների բնույթը, որոնք շաղկապված են պետության՝ տնտեսական, քաղաքական, բնապահպանական, մշակութային և այլ գործառույթներին:

Յուրաքանչյուր երկրի սահմանադրությունն ամրագրում և արտահայտում է տվյալ պետական հասարակության ձևավորված արժեհամակարգը:¹⁹ Այս հանգամանքով պայմանավորված հանրային սեփականություն գործառնական էություն վեկտորները պետք է փնտրել սահմանադրության հոդվածներում: ԶԶ Սահմանադրության այն դրույթը, որով Սահմանադրության 1-ին, 2-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն (ԶԶ Սահմանադր. 203-րդ հոդվ.), հաստատում է, որ նշված հոդվածներում սահմանված սահմանադրական դրույթներն ամրագրում են պետական հասարակության բարձրագույն արժեքները: Սահմանադրության 1-ին՝ սահմանադրական կարգի հիմունքները վերտառությունամբ գլուխն ամրագրում է մի շարք հիմնարար դրույթներ, որոնք դետերմինացնում են սոցիալական պարտավորությունների բնույթը: Դրանք են՝ մարդ, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ դիտարկելը (ԶԶ Սահմանադր. 3-րդ հոդվ.), ԶԶ անվտանգությունը,

¹⁹ Տե՛ս Grundzüge des deutschen und internationalen Wirtschaftsrechts. Lehrmittel / H.-J. Schmidt-Trenz, J. Plate, M. Paschke u.a. – St. Petersburg, 2007, էջ 59,

պաշտպանու թյու նը և տարածքային
ամբողջականու թյու նը, նրա սահմաններին
անձեռմխելի ու թյու նը (ՅՅ Սահմանադր. 14-րդ հոդվ.),
շրջակա միջավայրին պահպանու թյու նը և
վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ
օգտագործումը (ՅՅ Սահմանադր. 12-րդ հոդվ.),
պատմու թյան և մշակույթի հուշարձանները,
մշակու թային այլ արժեքները գտնվում են
պետու թյան հոգածու թյան և պաշտպանու թյան ներքո
(ՅՅ Սահմանադր. 15-րդ հոդվ.):

Մասնավոր իրավունքում սեփականու թյան
իրավունքի անհատական և սոցիալական
գործառույթների գուգակցված կիրարկումն
ապահովելու համար անհրաժեշտ են հստակ
մեխանիզմեր: Այդպիսի մեխանիզմ կարող է լինել
փոխակերպումը կամ պայմանական
պարտավորու թյու նները:

Սեփականու թյան իրավունքի սոցիալական
գործառույթ-պարտավորու թյու նների
սոցիալականու թյան բանաձևի հիմքում իրավունքի
այն արքսիոման է, որ ով իրավունքը հանդես է գալիս
որպես փոխգիջման միջոց. մարդույ ուրաքանչյուր
իրավունքի իրագործումը հանդիպում է միայն այն
սահմաններին, որոնք ապահովում են հանրու թյան
այլ անդամների, այդ թվում՝ պետու թյան, նույն այդ
իրավունքների ցօգտվելը (իմ իրավունքը սկսվում
է այնտեղ, որտեղ վերջանում է քոնը):²⁰ Յետևաբար,
սոցիալական գործառույթի նման ըմբռնման
դեպքում սոցիալական գործառույթի կողմից
սահմանափակված սեփականատիրոջ

²⁰ Այս արքսիոման ունի պատմական և կրոնական խոր արմատներ.
բազմաթիվ հասարակու թյու նների բարոյաընկալման մեջ
ընդհանուր է և կազմում է հեթանոսական կու նեցող
ավետարանական հետևյալ կարգախոսը. «Ինչ է սցանկանում քեզ,
մի՛ արան ուրիշ ներին» (Կոնֆուցիոս, Արիստոտել, Էպիքթետոս)
// **Կոնֆուցիոս**՝ Չրույցներ, Եր. 1991, էջ 88; Աստվածաշունչ,
Մատթեոս 7:12, էջ միածին, 2001; **Спиноза Б.** Богословско-политический трактат, 1670, Г. XVI; Антология
мировой философии, Т. 1, Ч. 1, М. 1969, էջ 519;

սեփականատիրական ազատությունը
 սահմանազատվում է այլոց նույնաբնույթ
 իրավունքներով կամ ազատություններով:
 Սեփականատերը սեփականության իրավունքի
 իրավազորություններն իրականացնում է՝ մշտապես
 հաշվի առնելով հանրային կամ սոցիալական
 պահանջները:

Սեփականության սոցիալական գործառնություն
 օրենսդրական ամրագրման ակունքները կարելի է
 գտնել հռոմեական ինստիտուցիաներում, ուր
 նշվում է *expedit reipublicae ne sua re quis male utatur*, ասել է թե՛ շահ
 պետության այն, որպեսզի ոչ մեկ չչարաշահի իր
 սեփականությունը²¹: Այնուհետև, Վեյմարյան
 սահմանադրությունն (Weimarer Verfassung) առաջինն էր, որ
 նախատեսեց սեփականության իրավունքի
 սոցիալական գործառնություն վերաբերյալ դրույթ՝
 սոցիալապես պայմանավորելով
 սեփականությունը²²: Վեյմարյան
 սահմանադրության 150-րդ հոդվածը, որը սահմանում
 էր՝ սեփականությունը ոչ միայն իրավունք է, այլև
 պարտականություն, սեփականության սոցիալական
 գործառնություն վերաբերյալ սահմանադրական
 դրույթով «պատվաստվեց» գերմանական իրավունքի
 տարբեր ճյուղերը, հատկապես՝ հողային իրավունքը:
 Յետագայում, այսօրինակ նորմեր ներառվեցին
 աշխարհի բազմաթիվ երկրներին (\$րանսիա, Մեծ
 Բրիտանիա, ԳՖՅ, Նիդերլանդներ, Բրազիլիա, Իտալիա,
 Իսպանիա, Յունաստան և այլն)
 սահմանադրություններում, որոնք ևս
 բովանդակում են սեփականության իրավունքի
 սոցիալական գործառնություն հայեցակարգն
 ամրագրող իրավական նորմեր: \$րանսիայում այս

²¹ Տե՛ս Լատինские юридические изречения // составитель и автор предисловия проф. Е.И. Темнов. – М.: Изд. “Экзамен”,
 Право и Закон, 2003, էջ 155,
²² Տե՛ս Якушев А.В. Конституционное право зарубежных стран. Общая часть. Особенная часть. Конспект лекций. – М.:
 Приор-издат, 2005, էջ 107,

հայեցակարգը և սօրենսդրական լայնածավալ ամրագրում ստացավ: 1948 թվականին սեփականության սոցիալական գործառույթի տեսությունն անգամ ճանաչվեց ֆրանսիական չորրորդ հանրապետության կիսապաշտոնական դոկտրինա (doctrine quasi-officielle):²³ Սոցիալական գործառույթի դրսևորումներն առկա են նաև անգլոսաքսոնական իրավական ընտանիքի անդամ երկրների համակարգերում: Դելիկտային իրավունքում «duty of care» հասկացությունն անհատին, այդ թվում՝ սեփականատիրոջը, վերապահում է հասարակության այլ անդամներին և հասարակության հանդեպ իրավական պարտականություններ:

Վերլուծելով աշխարհի մի շարք երկրների սահմանադրություններում առկա սեփականության իրավունքի սոցիալական գործառույթներ սահմանող իրավական նորմերը՝²⁴ գալիս ենք այն եզրահանգման, որ սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի սահմանադրական նորմերը լինում են երկու տիպի՝ առաջին մոդելի դեպքում սեփականության իրավունքը ծանրաբեռնված է սոցիալական պարտավորություններով, իսկ մյուս մոդելի

²³ Տե՛ս *Carbonnier J. Droit civil. Tome 3, Les biens. Paris. 1992, էջ 149,*

²⁴ Այսպես, 1990թ. Խորվաթիայի սահմանադր. 48-րդ հոդվ. մատնանշում է, որ սեփականությունը ենթադրում է պարտականություններ // տե՛ս <http://right777.ru/konst.html#id38>: Յետևաբար, նման պարտականությունները սոցիալական գործառույթների հետևանք են, իսկ սոցիալական գործառույթը՝ պարտականությունների հիմք և պատճառ: 2011թ. ՅուՆԵՍԿ-ի սահմանադրությունը, որն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ին, ընդգծում է այն հանգամանքը, որ գույքի սեփականատերը կրում է սոցիալական պարտականություն (XII հոդվ.՝ *Owning property carries a social responsibility*) // http://www.euractiv.com/sites/all/euractiv/files/CONSTITUTION_in_English_DRAFT.pdf): Իսպանիայի սահմանադրությունը սահմանում է, որ ըստ օրենքի՝ սեփականության իրավունքի սոցիալական գործառույթը սահմանափակում է նրա բովանդակությունը (33-րդ հոդվ., 2-րդ մ.): 1975թ. ՅուՆԵՍԿ-ի սահմանադրությունը ընդգծում է, որ «սեփականության իրավունքը չի կարող իրականացվել ի վնաս հասարակական շահին» (17-րդ հոդվ.) // <http://www.hri.org/docs/syntaxma/artcl25.html#A17>), իսկ 1982թ. Թուրքիայի սահմանադրությամբ ամրագրվում է, որ այդ իրավունքի իրականացումը չպետք է հակասի հասարակական շահին (XII հոդվ.) // <http://right777.ru/konst.html#id38>),

դեպքում՝ սոցիալական պարտականությունները
սեփականության ազատության իրացման
սահմանափակման հիմքերն են²⁵: Ըստ առաջին մոդելի՝
գոյքի նկատմամբ իրավունքներն իրացվում են՝
մշտապես հաշվի առնելով հանրային շահը՝ դրանց
հավասարակշռման կամ դրանցից մեկի
գերակայությունը ընդունելով, իսկ ըստ երկրորդ
մոդելի՝ գոյքն անձեռմխելի է, քանի դեռ
սոցիալական շահերի նժարը չի ծանրացել կամ
հանրային շահը չի գերակայել: Վերջին
ձևակերպման մեջ առավելապես առարկայանում է
սեփականության անձեռմխելիությունը, և նման
ձևակերպումը հատուկ է հատկապես մշակութային և
պատմական արժեքների այնպիսի օբյեկտներին:

Սեփականության իրավունքի սոցիալական
գործառնությունը միայն մասնավոր սեփականության
սկզբունք է, այլ վերաբերելի է նաև հանրային
սեփականությանը. հանրային սեփականության
իրավունքը՝ որպես սուբյեկտիվ իրավունք, ունի
ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական
գործառնություններ:

Սոցիալական գործառնությունը թաղված է
հենց հանրային սեփականության իրավունքի
հիմքում և բնորոշում է նրա գործառնական
էությունը: Հանրային սեփականության
գործառնություններից էլ ածանցվում են հանրային
սեփականության իրավունքի սուբյեկտների
գործառնությունը հանրային սեփականության
կառավարման ոլորտում: Ընդ որում, պետական և
համայնքային սեփականության տեսակների
գործառնությունների պատկերները զգալիորեն
տարբերվում են:

²⁵ Այս մասին մանրամասն տե՛ս *Խաչատրյան Մ.* Հանրային սեփականության իրավունքի սոցիալական գործառնությունը // «Արդարադատություն», 2012, N3(2), 40-48 էջեր,

Պետտոլթյան գոլյքի անհատական գործառույթը առերևույթվում է միջազգային հասարակության ընդհանուր սեփականության գոլյքի նկատմամբ, որպիսին են Անտարկտիկան, Արկտիկան, տիեզերական տարածությունը և այլն: Միջազգային հարաբերություններում պետական սեփականության անհատական գործառույթներն ընդունում են պետության մեջ համայնքային սեփականության իրավունքի անհատական գործառույթներին տեսք: Պետական սեփականության իրավունքի անհատական գործառույթի անհատականացումը պայմանավորված է «միջազգային հասարակության ընդհանուր գոլյքի» առկայությամբ: Յուրաքանչյուր պետության պարտականությունն է հանրային սեփականության իրավունքի օբյեկտներին կառավարման գործընթացում պահպանել միջազգային հասարակության համար արժեք, ինչպես նաև դրա ժառանգություն համարվող գոլյքը: Մեր օրերում նման գործառույթ-պարտականությունների չպահպանման համար միջազգային հանրությունը համապատասխան սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու համար արդյունավետ իրավական լծակներ չունի (օրինակ, ԱՖՊանստանում, Իրաքում, Սիրիայում, Ջուդայում, ծայրահեղ իսլամիստների կողմից Բուդդայի, պատմամշակութային արձանների և կոթողների ոչնչացման կանխարգելման հարցում միջազգային հանրությունն անգործունակ է): Ամերիկյան և եվրոպական իրավական ու տնտեսագիտական հայեցակարգերում առաջարկվում է «միջազգային հասարակության ընդհանուր գոլյքի» իրավական կարգավիճակ տալ բնական օգտակար այն հանածոներին, որոնք ունեն միջազգային հանրության կեսնագործունեության համար

ծայրահեղ անհրաժեշտ բնույթ: Այդպիսիք են համարվում նաև թը, գազը և այլն: Բացի այդ, պետությունները ծանրաբեռնված են միջազգային հասարակության, հարևան պետությունների բնակչության, գոյություն ունեցող կամ պատմության գիրկն անցած ազգերի թողած մշակութային արժեքների և ժառանգության պահպանման սոցիալական գործառնություններով: 1990-ականներից սկսած տարբեր հեղինակներ և հաստատություններ, այդ թվում՝ ՄԱԿ-ը, առաջ բերեցին «համաշխարհային հանրային գույք» եզրույթը, որի պահպանման և շահագործման հոգսը դրված էր համաշխարհային հասարակության՝ որպես սեկ միասնական միավորի ուսերին: Ավելին, այս հասկացության առաջ գալու պատճառներից մեկն էլ միջազգային հանրությանը մեկնված մարտահրավերներն էին (ինչպես օրինակ, կլիմայական փոփոխությունը, համաշխարհային \$ինանսական և մշակութային ճգնաժամը և այլն), որոնք ժամանակակից հանրության առջև դրել են «մարդկության ընդհանուր հոգսերի լուծման խնդիրը»²⁶: Ի տարբերություն ՄԱԿ-ի կողմից պաշտպանվող հայեցակետի՝ տնտեսագիտական հայեցակետը չի պարտադրում համապատասխան գույքի «համաշխարհայնացում» և հնարավոր է համարում գույքի պետությանը կամ մասնավոր անձին սեփականություն իրավունքով պատկանելը, միայն թե սեփականությունը պետք է ծանրաբեռնված լինի համաշխարհային հանրության նկատմամբ պարտականություններով:

Համայնքային սեփականության պարագայում անհատական գործառնություններով անդակությունն այլ է. այն պայմանավորված է մասնավոր և պետական սեփականությունների գոյությամբ: Այսինքն՝

²⁶ *Auby J.-B.* La globalisation, le droit et l'Etat, 2e éd., Paris, 2010, էջեր 175-182,

պետու թյան մեջ համայնքը՝ որպես մեկ
սուբյեկտային միավոր, սեփականութան
իրավունքի օգտագործման և տնօրինման
իրավագործություններն իրականացնում է ի շահ
համայնքի՝ միաժամանակ ապահովելով պետու թյան և
հասարակութան հանդեպ գործառնությունների
իրականացումը: Այս տեսանկյունից համայնքի՝
պետու թյունից ինքնուրույն միավորի
սեփականությունն ունի իր ինչպես անհատական,
այնպես էլ սոցիալական գործառնություններ:
Համայնքային սեփականութան իրավունքի
անհատական գործառնություն իր բնույթով և սոցիալական է,
սակայն այլ հզորություն ու
հարթություն:

Պետական կամ համայնքային սեփականությունը
ձևավորվում և գործում է պետական կամ
համայնքային՝ հանրային խնդիրներին լուծման և
պահանջներին բավարարման համար: Սակայն հանրային
պահանջները ևս ունեն որոշակի մակարդակներ:
Նման դեպքում պետական հասարակութան շահը
համայնքային հասարակութան շահի նկատմամբ
գերակա է: Այսպիսի դատողություն հիմքերը ՀՀ
օրենսդրությունն է: «Տեղական ինքնակառավարման
մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝
պետութան կարիքների համար համայնքին իր
սեփականությունն համարվող գույքից զրկելը
կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում,
օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք
փոխհատուցմամբ: Այսպես, սույն օրենքը
սահմանում է հանրային դիտարկվող համայնքային
սեփականութան օտարելիությունը նույն
մասնավոր սեփականութան օտարելիության
հիմքով, պայմաններով ու կարգով՝ չսահմանելով
համայնքային գույքի այն շրջանակը, որն օտարվել
չի կարող: Համայնքային սեփականութան օտարման

հիմքը և կարգը, սեփականության օտարման դիմաց տրվող փոխհատուցման հետ կապված հարցերը սահմանվում են «Յասարակության և պետության կարիքների սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով:²⁷ Նման հղում կատարում է նշված օրենքի 2-րդ հոդվածում, որով օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին սեփականության իրավունքով և ՀՀ-ում գտնվող կամ ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած բոլոր օբյեկտների վրա:

Լուսավորության դարաշրջանից և թպետության ծագման ու գոյության հասարակական դաշիների հարացուցային տեսությունը հատկապես կարևորվում է որպես նոր ժամանակի կարգախոս: Յասարակական դաշիների տեսության համաձայն՝ պետությունը մարդկանց միությունն է միմյանց փոխադարձաբար հարգելու և միասնաբար միության անդամների կյանքը, ազատությունը, ունեցվածքը և այլ բարիքները պաշտպանելու նպատակով:²⁸ Ժամանակակից պետության հիմնական գործառնությունը, որը բխում է պետության պայմանագրային տեսությունից, մարդու և իրերի քաղաքացիների հիմնական իրավունքներն ու ազատություններն ապահովելն է: Դրանց պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ են նյութական միջոցներ, որոնք մեծապես գոյանում են հարկերից: Այսինքն՝ սահմանադրությամբ նախատեսված բոլոր մեխանիզմների ու ինստիտուտների, կարգավորումների նպատակային վերջնահանգում մարդու իրավունքների պահպանությունն է:

²⁷ «Յասարակության և պետության կարիքների սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 27.11.2006թ.,

²⁸ Տե՛ս *Locke J.* Treatise of Civil Government, 1690, ed. Charles Sherman (New York: Appleton-century-Crofts, 1937), էջ 82,

Սեփականությունը սոցիալական գործառույթի ծավալն ուղիղ համեմատական է օբյեկտի հանրային նշանակությունը: Պարտավորություններն ունենե՞րի ծավալի մեծացումը հաջորդաբար հանգեցնում է հնարավոր պատասխանատվության դաշտի մեծացմանը:

Սեփականությունը երաշխիքների գործողությունն ունի որոշակի նշանակություն է սեփականությունը բովանդակությունը և սահմաններով: Գույքի կազմի վերաբերյալ երաշխիքները, կարգավորմանն առնչվող հանձնարարությունները և սոցիալական պարտավորություններն անքակտելիորեն կապված են: Թվարկված գործունեության և ոչ մեկը չի կարող փոխարինվել կամ փոքրացվել հարկերի կամ այլ պարտադիր վճարների գանձմամբ: Այդ բոլորը պետք է հարաբերականորեն և համաչափորեն հավասարակշռված լինեն:²⁹

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը հանդիսավոր ձևով հռչակում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն լինելը: Հաջորդիվ բոլոր հոդվածները հստակեցնում են այս սկզբունքների մաստային բովանդակությունը:

Սեփականությունը իրավունքի սոցիալական գործառույթը լիազորում է օրենսդրին՝

- սեփականատերերին ծանրաբեռնել սովորականից ավելի պարտավորություններով (օրինակ՝ հողը)՝ ըստ օբյեկտների հանրության համար նշանակություններ կայացնելու աստիճանի, ասել է թե՛ պարտավորեցնել սեփականատիրոջը օգտագործել գույքը, օգտագործել ըստ նպատակային նշանակություն, չնչնչացնել գույքը և այլն.
- ծանրաբեռնել մասնավոր գույքը հանրային իրավական սերվիտուտներով:

²⁹ Տե՛ս *Штобер Р.* Хозяйственно-административное право. Основы и проблемы. Мировая экономика и внутренний рынок; пер. с нем. – М.: Волтерс Клувер, 2008, էջեր 199-200,

Իրավունքի տեսությունը մեջ ընդունված է պարտավորությունները բաժանել պոզիտիվ և նեգատիվ: Սակայն պարտավորությունների նման դասակարգումը, կարծես թե, թերի է: Բազմաթիվ երկրների սեփականության իրավունքի սոցիալական գործառույթին վերաբերող իրավական դրույթերի վերլուծությունը թույլ է տալիս սոցիալական պարտավորությունների խմբի մեջ ներառվող պարտավորությունները ենթարկել նաև այլ գիտական պայմանական դասակարգումների: Պարտավորական իրավունքի տեսությունը հայտնի է ժամանակի ընթացքում և տարածության մեջ պարտավորությունների անցումայնության կամ փոխակերպման հատկությունը: Սոցիալական գործառույթի հենց այս ընկալումով է պայմանավորված պարտավորությունների այլ դասակարգման անհրաժեշտությունը: Պարտավորության մեկ վիճակից անցումը մեկ այլ վիճակի կախված է ապագայում հնարավոր, տեղի ունենալիք, որոշակի փաստից կամ փաստական կազմից: Սեփականության անձեռմխելիության դեպքում սոցիալական գործառույթի ներքո համախմբված պարտավորությունները կրում են նեգատիվ պարտականության ներքին հատկություն, իսկ հանրային շահի գերակայության դեպքում նույն այդ պարտականությունները սերտաճում են պոզիտիվ պարտականությունների: Արդյունքում, սեփականության բացարձակ հարաբերությունները վերածվում են հարաբերական հարաբերությունների: Այլ կերպ ասած, սոցիալական գործառույթը ներկայանում է որպես փոխակերպվող պարտականությունների փաթեթ, որոնք ստեղծում են պայմանականության մեծ դաշտ: Ուստի, պարտավորությունների նման բնույթը կարելի է բանաձևել հետևյալ կերպ. այն

պարտավորությունը, որի իրականացումը կախվածություն մեջ է դրված ապագայից և անհայտ ժամանակում վրա հասնող որոշակի իրադարձությունից, պետք է անվանել **պայմանակալ պարտավորություն**՝ ներառելով պարտավորության առանձին դասակարգման մեջ:

Պարտավորության հենց այս մոդելը կարող է գործնական մեխանիզմ լինել հայրենական օրենսդրությունում սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի մասնավոր իրավունքում «շահագործելու» համար: Պատերազամային և երկրաշարժային գոտում գտնվող երկրում սեփականության սոցիալական գործառույթների իրացումն ապահովող հստակ մեխանիզմների ներդրումը հնարավորություն կընձեռի ռեկվիզիտային և այլ միջոցներով հասարակության և պետության շահի համար մասնավոր և համայնքային սեփականության իրավունքի սահմանափակումն ու դադարումը իրավաչափ և ովկազմակերպել:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ սեփականության իրավունքը (ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային) իրականացնում է անհատական և սոցիալական գործառույթներ, որոնց ծավալն ու բնույթը կախված է սեփականության իրավունքի սուբյեկտի առանձնահատկություններից, գույքի հասարակական նշանակություն ներկայացնելու աստիճանից և այլ հանգամանքներից: Մասնավոր իրավունքում սեփականության իրավունքի անհատական և սոցիալական գործառույթների գույքակազմ կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ են հստակ մեխանիզմներ, որպիսին որ կարող են լինել փոխակերպվող կամ պայմանակալ պարտավորությունները:

1.3.3 անրային սեփականություն և թյան ձևերը

Յանրային սեփականություն դրսևորումներն ամբողջացնում են հանրային սեփականություններևյթը: Ուստի, հանրային սեփականություն էությունը հնարավորինսսլիարժեքբացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրա դրսևորումները:

Յայաստանի անկախություն մասին հռչակագրում ամրագրվել է սեփականություն բազմաձևություն սկզբունքը, որի հիման վրա 1995 թվականից ի վեր ՅՅ Սահմանադրություն և խատեսվել էր սեփականություն ձևերի հավասար զարգացման ու պաշտպանություն դրություն՝ չհստակեցնելով դրա առանձին տեսակները (ՅՅ Սահմանադր. 10-րդ հոդվ.):³⁰ ՅՅ Սահմանադրություն այս իրավանորմի համաձայն՝ պետություն պոզիտիվ պարտականությունն է երաշխավորել, ապահովել ու պաշտպանել սեփականություն իրավունքը՝ դրա համար ստեղծելով իրավական անհրաժեշտ նախադրյալներ:

Քանի դեռ մեր հասարակությունն անցում է կատարում «անցումային սոցիալիզմի» կապիտալիզմի, սեփականություն ձևերի և դրանց հավասարություն մասին սկզբունքն ամրագրելու անհրաժեշտությունը գործնական տեսանկյունից զգացվում է: Սեփականություն ձևերի մասին դրություն պահպանելու անհրաժեշտությունը նրանում է, որ հետխորհրդային հասարակությունում անհրաժեշտություն կասեփականություն ձևի կարգավորումն իրավունքի ընդհանուր ազատական սկզբունքներով պայմանավորելու համար: Ուստի, 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրություն

³⁰ Տե՛ս ՅՅ Սահմանադրությունը / Ի. գ. դ. Վլ. Նազարյանի ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Երևան, 1995, էջ 19,

տեքստում սեփականության ձևերի մասին դրոյթի վերականգնումն արդարացված է նման կարևորություններ:

Ասվածը հաստատվում է նրանով, որ «սեփականության ձև» հասկացությունն իր պատշաճ մեկնաբանությունը չի ստացել ազգային իրավագիտության մեջ:³¹ Հետագոտողների շրջանում միասնականությունն չկա, անգամ, տերմինների հարցում. դասակարգման չափանիշները և սեփականության տիպ, ձև, տեսակ հասկացությունների հստակ տարանջատումը բացակայում է,³² վիճարկվում է ընդհուպ սեփականության տարատեսակների նքնորոյն գոյությունն ու դրանց իրավական կարգավորում տալու հարցը³³:

Հետխորհրդային երկրների դոկտրինայում գերիշխում էր այն կարծիքը, թե «սեփականության ձև» հասկացությունը բացառապես տնտեսագիտական է (այս կարծիքին է Ե. Ա. Սուխանովը՝ Լոմոնոսովի անվան համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչը), որը բացառում է «սեփականության ձևերի» հասկացությունը և դրա գոյությունն իրավական իմաստով: Նման պնդում կատարելով հանդերձ՝ Ե. Ա. Սուխանովը որոշակի վերապահում է անում՝ նշելով, որ եթե անգամ պետք է խոսել սեփականության ձևերի մասին, ապա պետք է ընդհուպ ընդամենը երկուսը՝ մասնավորն ու հանրայինը: «Մասնավոր սեփականության իրավաբանական հասկացությունը, որը տարածված է նաև զարգացած իրավական համակարգերում, կապված է միայն հանրային սեփականությանն այն

³¹ Տե՛ս **Քրմոյան Ս.Կ.** Սեփականության իրավունքի սահմանադրական հիմունքները: Ատենախոսություն, 2002, էջ 105,

³² Управление государственной собственностью: Учеб. / Под ред. В. И. Кошкина. М. 2002, էջ 35-36, Лоскутов В.И. Экономические и правовые отношения собственности. Ростов-на-Дону, 2002, էջ 15,

³³ Սույն ատենախոսության հետագա շարադրանքում ձև և տեսակ հասկացություններն օգտագործելու ենք որպես հիմանիշներ:

հակադրելու հետ: «Մասնավոր», ըստ է. Սուխանովի, նշանակում է «ոչ հանրային» և ոչ ավելին³⁴: Քաղաքացիական իրավունքի գիտություն մեջ կան նաև սեփականության ձևերի տնտեսաիրավական հասկացության կողմնակիցներ (Ա.Վ. Վենետիկով, Ա.Վ. Կոլպակովա, Օ.Ն. Սադիկով, Յ.Կ Տոլստոյ և ուրիշներ):³⁵ Սեփականության իրավունքի մեկ այլ հանրահայտ մասնագետ Կ.Ի. Սկլովսկին ընդգծում է, որ «սեփականության իրավունքն անմիջականորեն չի արտացոլում սեփականության տնտեսական հարաբերությունները, եթե անգամ վերջիններս և գոյություն ունեն»:³⁶ Վերջինիս կարծիքով՝ սեփականության ձևերի բազմազանությունը հնարավոր է հայտնաբերել իրավունքի զարգացման պատմությունում, որն ինքնըստինքյան քննարկման նյութ է, համեմայն դեպս գոնե այս տեսանկյունից:³⁷

Սեփականության ձևերի բաժանումը, սեփականության իրավունքի մեթոդաբանական խնդիրներից է: Ձևը երևույթի տարասեռ քաղաքատարրերի համադրումն ու ամբողջացումն է: Այն երևույթի միայն արտաքին դրսևորումը չէ, այլ ներքին և արտաքին գործոնների փոխկապակցված կազմակերպվածքն է: Ուստի, սեփականության հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը պետք է ապահովի, որպեսզի սեփականության իրավունքի տարրերի՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող առանձնահատկություններն անդրադառնան և արտահայտվեն սեփականատիրական հարաբերությունների կազմակերպման վրա՝ դրանով

³⁴ Տե՛ս Գրաжданское право: В 4 т. Том 2, отв ред. – Е.А. Суханов.- 3-е изд., перераб. и доп.- М.: Волтерс Клувер, 2005, էջ 22-26, **Суханов Е.А.** Право собственности в современной России // Собственность в XX столетии. М., 2001. էջ 772,
³⁵ Տե՛ս **Соловьев В.Н.** Гражданско-правовое регулирование отношений собственности в социальной сфере, автореферат дисс. на соискание ученой степени д. юр. н., М., 2011, էջ 24,
³⁶ Տե՛ս **Скловский К. И.** Собственность в гражданском праве. М., 2002, էջ 159,
³⁷ Նուև տեղում, էջ 160,

ի ս կ տարբերակված կարգավորում տալով
սեփականություններին:

Սեփականություն առանձին ձևերը
պայմանավորում են առանձնացված իրավական
կարգավորման անհրաժեշտությունը, որով
օբյեկտիվորեն գոյություն ունեցող տարբեր
դրսևորումների համար նախատեսվում են
իրավունքի իրականացման բովանդակային առումով
հավասար պայմաններ: Յուրաքանչյուր իրավական
ժողովրդավարական, հետևաբար և ազատչուկայական
տնտեսությունը պետությունում գույքային
չըջանառությունը սկզբունքորեն պահանջում է
սեփականատերերի գույքային իրավունքների
հավասարություն: Այսպես, վրացական իրավունքում
հրաժարվել են սեփականություն ավանդական ձևերից:
Սեփականություն ձևի բազմազանություն
սկզբունքից նահաջը հիմնավորովում էր նրանով,
որ սեփականություն ձևերի հավասարության մասին
դրույթը վերացնում է սեփականություն ձևերի
տարբերակված իրավակարգավորման, հետևաբար և,
սեփականություն ձևերն առանձնացնելու
անհրաժեշտությունը:³⁸

Այս դատողությունն ունի տրամաբանական
թերություն «հավասարություն» մեծությունը
խեղաթյուրելու հարցում: Երկու իրարից տարբեր
երևույթների միջև դրված հավասարության նշանը
չի նույնացնում դրանք և չի բացառում դրանց
ինքնուրույն միմյանցից անկախ գոյությունը:
Երևույթների առանձնահատկություններով
պայմանավորված հարաբերությունների
բազմազանությունը կարող է ապահովել այնպիսի
տարբերակված իրավակարգավորում, որը դրանց

³⁸ Սավրաց իրավագետների կարծիքով վրացական իրավունքի
առանձնահատկություններից: Տե՛ս *Чантурия Л.Л.* Введение в общую часть гражданского
права (сравнительно-правовое исследование с учетом некоторых особенностей постсоветского права). М.: Статут, 2006, էջ
56,

իրացման համար կապահովի հավասար երաշխիքներ: Սեփականությունն ձևերի հավասարությունը ենթադրում է սեփականությունն ձևերի տարբերակված այնպիսի իրավական կարգավորում, որը կապահովի դրանց իրացման կշիռային, այլ ոչ մաթեմատիկական հավասարությունը: Ուստի, այդ հավասարությունը պետք է հասկանալ բացառապես իրավական իմաստով:

Սեփականությունն ձևերի տարբերակումն օրենսդրորեն պայմանավորվում է գույքի իրավական առանձին ռեժիմով, որն արտահայտում է սեփականության իրավունքի ձևը կամ տեսակը, ինչպես նաև ապահովում է դրա ճկունությունը: Իրավական ռեժիմն իրավական կարգավորման հատուկ կարգ է, որն արտահայտում է իրավաբանական միջոցների որոշակի համադրություն, ստեղծում է սոցիալական ցանկալի վիճակ և որոշակի հարմարավետություն կամ անհարմարավետություն աստիճան իրավունքի սուբյեկտների շահերը բավարարելու համար:³⁹ Իրավական առանձին ռեժիմներ սահմանելիս պետք է հաշվի առնել, որ սեփականությունն տարբեր ձևերի առանձնահատկությունները շաղկապված են սեփականության իրավունքի տարրերի առանձնահատկություններով: Իրավագիտության մեջ սեփականության իրավունքի ձևերը բաժանում են՝ հիմք ընդունելով իրավահարաբերության այդ տարրերը՝ սուբյեկտը, օբյեկտը և բովանդակությունը:

Ըստ սուբյեկտի՝ սեփականությունն իրավունքը բաժանվում է ֆիզիկական, իրավաբանական անձի, պետական, համայնքային, արտասահմանյան երկրների, միջազգային կազմակերպությունների և

³⁹ Գույքի իրավական ռեժիմների մասին մանրամասն տե՛ս Современное вещное право России: учеб. пособие для студентов вызов, под ред. Е.В. Богданова, Н.Д. Эриашвили. – М.: Закон и право, 2014, էջեր 45-49,

այլ տեսակներին: Արտասահմանյան գրականությունում սեփականության դրսևորման սյուսհիմքով բաժանումն անվանում են օրգանական: ԱՊՀ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, սեփականության տեսակները բաժանվում են սուբյեկտի հիմքով, որով հանրային է այն գույքը, որը պատկանում է հանրային իրավական կազմավորումներին:

Ըստ օբյեկտի սեփականության ձևերն առանձնացվում են՝ հիմք ընդունելով օբյեկտի առանձին տեսակները (օրինակ, հողային, առևտրային, գյուղատնտեսական, ատոմային և այլն)⁴⁰, կամ ըստ օբյեկտներին դասակարգման հիմքերի (անշարժ-շարժական, մարմնական-չմարմնական): Ծվեյցարիայում, օրինակ, օրենսդրորեն առանձնացնում են սեփականության նյութական և ոչ նյութական ձևերը:

Գրականության մեջ առաջարկվում է նաև սեփականության ձևերը տարբերակել ըստ գույքի ոլորտային գործառնական նշանակության (բժշկական, կրոնական և այլ տեսակի):⁴¹

Եթե սեփականության ձևերի ըստ սուբյեկտի և օբյեկտի բաժանումը տեսական և գործնական հարթություններում խնդիրներ չի առաջացնում, ապա սեփականության ձևերի ըստ բովանդակության բաժանելու ըմբռնումն արդի իրավագիտության առջև ծառայող գործողություններին: Այսպես, ռուս իրավագետներ Ե. Ա. Կիկոտն ու Մ. Ի. Կուլլազինը, վերլուծելով կապիտալիզմը մենաշնորհային փուլում, եզրակացրել են, որ սեփականության

⁴⁰ Տե՛ս Современное вещное право России: учеб. пособие для студентов вузов, под ред. Е.В. Богданова, Н.Д. Эриашвили, М.: Закон и право, 2014, էջ 45: Ի դեպ, Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում և այլուր, որտեղ մտավոր սեփականության իրավունքը սեփականության իրավունքի ենթաճյուղ է, սեփականության ձևերն ըստ օբյեկտներին բաժանման արդյունք է:

⁴¹ Տե՛ս *Колпакова А.В.* Формы собственности и их соотношение // Актуальные проблемы гражданского права / под ред. С.С. Алексеева; Исследовательский центр частного права. М., 2000, էջեր 126-147,

ձևերի բովանդակության հիմքով բաժանելը դրսևորվում է նրանում, որ իրականացվում է մեկ օբյեկտի սեփականատիրոջ լիազորությունների վերաբաշխումը բազմաթիվ սուբյեկտների միջև, այսինքն՝ գույքի հասարակության համար կարևորության աստիճանի և դրան կատմամբ օգտագործման և տնօրինման իրավազորությունների և պարտականությունների ծավալի բաշխման:⁴² Ուստի, եթե օրգանական հայեցակարգի պարագայում՝ հանրային սեփականություն է հանրային իրավական կազմավորումներին պատկանող գույքը, ապա գործառնականի դեպքում՝ պետական կամ համայնքային՝ հանրությանը ծառայող գույքը:⁴³

Այն հարցը, թե որ դասակարգմանը պետք է տալ առավելությունը, որոշում է գործնական նպատակահարմարությունը: Այս առումով չենք կիսում Կ.Ի. Սկլնովսկու դիրքորոշումն այն, որ սեփականության իրավունքի ձևերի հարցում քաղաքացիական օրենսդրությունում ըստ սուբյեկտի ընդունված բաժանումը միակ թույլատրելի է:⁴⁴ Հանրային սեփականության ձևերի բաժանումը պետականի և համայնքայինի ներքին խնդիր չէ: Խնդիրը տեսնում ենք պետական կամ համայնքային սեփականության տարբեր տեսակները չառանձնացնելու և այդ տեսակներին առանձնացված կարագավորում չտալու մեջ: Թե՛ հանրային, թե՛ մասնավոր իրավունքում հնարավոր է սեփականության իրավունքի ձև-տեսակների առանձնացումն ինչպես ըստ սուբյեկտների, օբյեկտների և բովանդակության առանձին-առանձին,

⁴² Տե՛ս **Суханов Е.А.** О понятии и видах вещных прав в российском гражданском праве // Актуальные проблемы права собственности - Материалы научных чтений памяти профессора С. Н. Братуся (Москва. 25 октября 2006 г.). - М.: ИД "Юриспруденция", 2007, էջեր 36-45,

⁴³ Տե՛ս մանրամասն **Yolka P.** La propriété publique: éléments pour une théorie, Paris, 1997, էջ 7,

⁴⁴ Տե՛ս **Скловский К.И.** Собственность в гражданском праве, М.: Издательство "Дело", 2002, էջ 166,

այնպես էլ բաժանման երկու կամ երեք հիմքերի միաժամանակյա առկայությամբ: Այսպես, օրինակ, հողային պետական սեփականությունը, որը հանձնված է հասարակության անմիջական օգտագործմանը, պահանջում է իրավական բոլորովին այլ կարգավորում, քան հողային մասնավոր սեփականությունը:

Չարգացած իրավական համակարգերում ընդունված է համարել, որ սեփականության ձևերի բաժանումն ըստ բովանդակության ավելի առաջադեմ է, քան սեփականության ձևերի՝ ըստ սուբյեկտների կամ օբյեկտների բաժանումը: Այդ իսկ պատճառով իրավական այդ համակարգերում իրավաբանական գրականությունում առաջարկվում է օրենսդրորեն կարգավորել սեփականության ձև-տեսակները՝ հիմք ընդունելով սեփականատիրական հարաբերությունների բաժանումն ըստ բովանդակության:

Յուրաքանչյուր ինստիտուտ իր զարգացման տարբեր փուլերում բարդանում է: Չլինելով բացառություն՝ հանրային սեփականությունն էլ բարդացել և ճյուղավորվել է: Այս եզրույթին գուցահեռ, իսկ երբեմն դրա փոխարեն, գրականությունում հաճախ են օգտագործում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ հանրային, ազգային, ժողովրդական, պետական, հանրապետական (համաժողովրդական) վարչական, համայնքային, հասարակական հասկացությունները:⁴⁵

«Հասարակական սեփականություն» բառակապակցությունը հաճախ է գործածվում հանրային, ազգային, ժողովրդական

⁴⁵ Ազգային սեփականության վերավերյալ տե՛ս *Խաչատրյան Մ.* Հանրային սեփականության իրավունքի էությունը // «Դատական իշխանություն», 2013, N 5 (166), 52-59 էջեր,

սեփականությունը հասկացություններին գուցահեռ, որոնք ամենևին սովետական կարգերից մնացած ժամանակությունը չեն: Այս բանակապակցությունը հաճախ է հանդիպում թե՛ առօրյա խոսքում, թե՛ գրականությունում, թե՛ բանարաններում:⁴⁶ Ո՞րն է «հասարակական սեփականությունը», ինչպիսի՞ բնույթ ունի այն և ինչպե՞ս է փոխհարաբերակցվում հանրային սեփականությանը տեսակներին հետ:

Արդի գարգացած իրավական համակարգերում հանրային սեփականության տեսակների շարքում հասարակական սեփականության առանձնացման ավանդույթները հռոմեական իրավունքից են: Թեպետ հանրային սեփականության հասարակական տեսակը ծանոթ է եղել նաև այլ համակարգերին:⁴⁷ «Հասարակականը», ըստ *Է. Ադայանի* նույն բանարանի, դիտվում է որպես հասարակությունը հատուկ, հասարակությունը վերաբերող:⁴⁸ Լեզվական խոսքում հաճախ են օգտագործվում «հասարակական կյանք», «հասարակական վայր» արտահայտությունները, որոնցում «հասարակական» ածականին տրվում է «հանրային» իմաստը: Այդպես էլ «հասարակականը» նույն բանարանում սահմանվում է որպես «հասարակության՝ բոլորի օգտագործման համար նշանակված՝ ստեղծված», «հասարակության սեփականությունը կազմող, հանրային»:⁴⁹ Հետևաբար, հասարակական է այն գույքը, որը հանձնվել է հասարակության յուրաքանչյուր անդամի ազատ օգտագործմանը (*res in usu publico*):

⁴⁶ Տե՛ս **Ադայան Է. Է.** Արդի հայերենի բանարան, (Ա-2), Երևան, 1976, էջ 828,

⁴⁷ օրինակ, միջնադարյան Չինաստանի վերաբերյալ տե՛ս **Կյանով Է. Ի.** *Основы средневекового китайского права (VII-XIII)*, М.: Наука, 1986, էջ 190 // **Մեջբերումն ըստ Քրմոյան Ս. Կ.** *Սեփականություն իրավունքի սահմանադրական հիմունքները: Ատենախոսություններ*, 2002, էջ 105,

⁴⁸ Ադայան Է. Է., նույն տեղում,

⁴⁹ Ադայան Է. Է., նույն տեղում,

Ի ն չ վ եր աբ եր ու մ է « հ ա ն ր ա յ ի ն ի » և « հ ա ս ա ր ա կ ա կ ա ն ի » փ ո խ հ ա ր ա բ եր ա կ ց ու թ յ ա ն ն օր ե ն ս դր ա կ ա ն հ ա ր թ ու թ յ ու ն ու մ , ա պ ա Յ Յ գ ո ղ ծ ո ղ օր ե ն ս դր ու թ յ ու ն ու մ « հ ա ն ր ա յ ի ն » ե գր ու յ թ ը « հ ա ս ա ր ա կ ա կ ա ն ի » հ ա մ ե մ ա տ ու թ յ ա մ ք ա վ ե լ ի լ ա յ ն է և ի մ ա ս տ ա յ ի ն առ ու մ ո վ ն եր առ ու մ է վ եր ջ ի ն ի ս : Ա յ ս պ ե ս , « Յ ա ս ա ր ա կ ու թ յ ա ն և պ ե տ ու թ յ ա ն կ ա ր ի ք ն եր ի հ ա մ ա ր ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն օ տ ա ր մ ա ն մ ա ս ի ն » 2006 թ վ ա կ ա ն ի Յ Յ օր ե ն ք ի 3-ր դ հ ո դ վ ա ծ ի 1-ի ն մ ա ս ը ք ա ց առ ի կ ` գ եր ա կ ա հ ա ն ր ա յ ի ն շ ա հ ը ն ա խ ա տ ե ս ու մ է ո ր պ ե ս հ ա ս ա ր ա կ ու թ յ ա ն և պ ե տ ու թ յ ա ն կ ա ր ի ք ն եր ի հ ա մ ա ր ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն ն օ տ ա ր ե լ ու ս ա հ մ ա ն ա դր ա կ ա ն հ ի մ ք : Օր ե ն ք ո վ մ ի մ յ ա ն ց ի ց առ ա ն ձ ն ա ց վ ու մ է « հ ա ս ա ր ա կ ա կ ա ն » և « պ ե տ ա կ ա ն » հ ա ս կ ա ց ու թ յ ու ն ն եր ը ` ն եր առ ե լ ո վ ա յ դ եր կ ու ս ը « հ ա ն ր ա յ ի ն » հ ա ս կ ա ց ու թ յ ա ն մ ե ջ :

Յ ա ս ա ր ա կ ա կ ա ն գ ու յ ք ի տ ա ր բ եր ա կ ի չ հ ա տ կ ա ն ի շ ն եր ի ց է հ ա ս ա ր ա կ ա կ ա ն գ ու յ ք ի հ ա ն ր ա մ ա տ չ ե լ ի ու թ յ ու ն ը դր ա օ գ տ ա գ ո ղ ծ մ ա ն ձ ն ո վ : Գ ու յ ք ի հ ա ն ր ա մ ա տ չ ե լ ի ու թ յ ու ն ը չ ի ե ն թ ա դր ու մ մ ի ա յ ն գ ու յ ք ի ֆ ի զ ի կ ա կ ա ն օ գ տ ա գ ո ղ ծ մ ա ն հ ա ն ր ա յ ի ն հ ա ս ա ն ե լ ի ու թ յ ու ն ը : Յ ու ր ա ք ա ն չ յ ու ր հ ա ն ր ա յ ի ն գ ու յ ք հ ա մ ա ր վ ու մ է հ ա ն ր ա մ ա տ չ ե լ ի , ե թ ե ա յ լ ք ա ն ն ա խ ա տ ե ս վ ա ծ չ է օր ե ն ք ո վ կ ա մ վ ա ր չ ա կ ա ն ա կ տ ո վ : Դր ա ն ք ե ն ` փ ո դ ո ց ն եր ը , մ ա յ թ եր ը , պ ու ր ա կ ն եր ը , կ ա մ ու ր ջ ն եր ը , հ ր ա պ ա ր ա կ ն եր ը , ջ ր ա յ ի ն տ ա ր ա ծ ք ն եր ն ու հ ա ր ա կ ի ց ա փ եր ը և ա յ լ ն :

Յ ա ս ա ր ա կ ա կ ա ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն հ ա ն ր ա մ ա տ չ ե լ ի ու թ յ ու ն ը , ա յ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ , հ ա ն ր ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ա յ լ տ ե ս ա կ ն եր ի ց տ ա ր բ եր ա կ ո ղ մ ի ա կ հ ա տ կ ա ն ի շ ը չ է , ք ա ն գ ի հ ա ն ր ա մ ա տ չ ե լ ի ու թ յ ու ն ն ա յ ս կ ա մ ա յ ն ձ ն ո վ հ ա ն ր ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ք ո լ ո ր ձ ն եր ի առ ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն է : « Յ ա ն ր ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն » հ ա ս կ ա ց ու թ յ ու ն ու մ

հասարակական տեսակի առանձնացումը հանրային սեփականության մյուս տեսակներին ցարկորվում է դրա մասնավորեցնելու հնարավորությունն առհասարակ բացառելու առումով: Այն անմիջականորեն շաղկապված է հասարակական սեփականության իրավունքի անձեռմխելիության գաղափարի հետ⁵⁰, որը հատուկ է հանրային սեփականության բոլոր տեսակներին, բայց ավելի նվազ ձևով:

Հանրային գույքը, որպես կանոն, կարող է մասնավորեցվել: Հանրային սեփականության այն գույքը, որը հանձնվել է հասարակության անմիջական օգտագործմանը հարաբերականորեն չի կարող ապահանրայնացվել: Սա նշանակում է, որ այդ գույքի նկատմամբ պետք է արգելվի կնքել նաև անհատույց կամ հատուցելի օգտագործման պարտավորական գործարքներ (վարձակալության, անհատույց օգտագործման հանձնելու պայմանագրեր և այլն), ամրացնել կամ այլ վարչական ակտերով հանձնել պետական կազմակերպություններին: Այսպիսի գույքը մասնավորեցնելու արգելքը պայմանավորված է օբյեկտիվ գործունեության առկայությամբ:

Անկախության անցած տարիներին ընթացքում այդպիսի կանոնների բացակայության պայմաններում հասարակական գույքի մասնավորեցման արդյունքում պատճառված վնասների օրինակները բազմաթիվ են՝ յուրաքանչյուր բնակավայրի կենսագործունեության համար անհրաժեշտ միջմայթային և պուրակային կանաչապատ տարածքների մասնավորեցումը՝ գույքորդված

⁵⁰ Սեփականության անձեռմխելիության պատմական ակունքների մասին մանրամասն տե՛ս **Խաչատրյան Մ., Ազիզյան Յ.** Հանրային՝ տաճարային սեփականությունն ու տնտեսությունը Հին Հայաստանում // օրինականություն , 2012, N73, էջեր 48-54,

ծ առ ա հ ա տ ու մ ն եր ո վ : Լ ա վ օ թ ի ն ա կ Է ն ա ն
բ ա գ մ ա բ ն ա կ ար ա ն շ ե ն ք եր ի առ ը ն թ եր ՝ ը ն դ հ ա ն ու ը
օ գ տ ա գ ո թ մ ա ն հ ա մ ար ա ն հ ի ր ա ժ ե շ տ հ ար ա կ ի ց
հ ա մ ա յ ն ք ա յ ի ն տ ար ա ծ ք ն եր ը բ ար ձ ը ա հ ար կ շ ե ն ք եր
կ առ ու ց ե լ ու հ ա մ ար հ ա տ կ ա ց ն ե լ ու փ ո թ ձ ը : Ա յ ս
դ ե պ ք ու մ բ ն ա կ ի չ ն եր ը ո չ մ ի ա յ ն գ ը կ վ ու մ ե ն շ ե ն ք ի
գ ո թ առ ն ա կ ա ն օ գ տ ա գ ո թ մ ա ն հ ա մ ար ա ն հ ի ր ա ժ ե շ տ
տ ար ա ծ ք ն եր ի ց և լ ու ս ա վ ո թ ու թ յ ու ն ի ց , ա յ լ և
ս տ ե դ ծ ու մ ե ն բ ար ձ ը ռ ի ս կ ա յ ն ու թ յ ու ն ն ու
խ ո ց ե լ ի ու թ յ ու ն ՝ վ տ ա ն գ ե լ ո վ հ ա ն ը ա յ ի ն
առ ո դ ջ ու թ յ ու ն ն ու ա ն վ տ ա ն գ ու թ յ ու ն ը , հ ա տ կ ա պ ե ս
ե թ ք տ ար ա ծ ա շ ը ջ ա ն ը պ ա տ ե թ ա գ մ ա կ ա ն և
ե թ կ ը ա շ ար ժ ա յ ի ն գ ո տ ու մ Է :

Յ ա ն ը ա յ ի ն գ ու յ ք ի մ յ ու ս տ ե ս ա կ ը հ ա ս ար ա կ ա կ ա ն
գ ու յ ք ի ց առ ա ն ձ ն ա ն ու մ Է ն ը ա ն ո վ , ո թ ա յ ն
հ ա ս ար ա կ ու թ յ ա ն հ ա մ ար ու ն ի գ ո թ առ ն ա կ ա ն ,
մ շ ա կ ու թ ա յ ի ն կ ա մ ա յ լ կ ար և ո թ ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ,
հ ա ն ձ ն վ ե լ Է հ ա ս ար ա կ ու թ յ ա ն ա ն մ ի ջ ա կ ա ն
օ գ տ ա գ ո թ մ ա ն ը , ո թ ի ց օ գ տ վ ե լ ու կ ար գ ը , ս ա կ ա յ ն ,
ս ա հ մ ա ն վ ու մ -ն ո թ մ ա վ ո թ ո վ ու մ Է հ ա ն ը ա յ ի ն ի թ ա վ ա կ ա ն
կ ա գ մ ա վ ո թ ու մ ն եր ի կ ո դ մ ի ց ը ն դ ու ն վ ա ծ ն ո թ մ ա տ ի վ
ի թ ա վ ա կ ա ն ա կ տ ե թ ո վ : Ա յ ս պ ի ս ի ն ե ն հ ա մ ար վ ու մ
թ ա ն գ ար ա ն ն եր ը , ար խ ի վ ն եր ը , գ ե թ ե գ մ ա ն ն եր ը և ա յ լ ն :
Դ ը ա ն ք ի թ ե ն ց բ ն ու յ թ ո վ , ո թ պ ե ս կ ա ն ո ն , տ ար ք ե թ
շ ար ժ ա կ ա ն և ա ն շ ար ժ գ ու յ ք ի ի թ ա վ ա ք ա ն ո թ ե ն
ա ն բ ա ժ ա ն ե լ ի հ ա մ ա կ ց ու թ յ ու ն կ ա գ մ ո դ գ ու յ ք ա յ ի ն
հ ա մ ա լ ի թ ն եր ե ն : Բ ա ց ի ա յ ս հ ա ն գ ա մ ա ն ք ի ց , հ ա ն ը ա յ ի ն
գ ու յ ք ի ա յ ս տ ե ս ա կ ի կ առ ա վ ար ու մ ն ա ն հ ն ար Է առ ա ն ց
գ ո թ ա դ ի թ ի շ խ ա ն ու թ յ ա ն ն եր գ ո թ ու թ յ ա ն
մ ի ջ ո ց ն եր ի կ ի թ առ մ ա ն : Յ ա ն ը ա յ ի ն գ ու յ ք ի ա յ ս
տ ե ս ա կ ի առ ա ն ձ ն ա ց ու մ ը և դ ը ա ն առ ա ն ձ ն ա ց վ ա ծ
ի թ ա վ ա կ ա ն կ ար գ ա վ ո թ ու մ տ ա լ ը հ ա տ կ ա պ ե ս
կ ար և ո թ ո վ ու մ Է դ ը ա ի թ ա վ ա կ ա ն պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն
տ ե ս ա ն կ յ ու ն ի ց : Գ ը ա դ ար ա ն ն եր ի , թ ա ն գ ար ա ն ն եր ի և
ա յ լ ն մ ա ն ո լ ո թ ը ա յ ի ն հ ա ս տ ա տ ու թ յ ու ն ն եր ի ՝

անանձնացված օրենսդրական կարգավորումների
անհրաժեշտությամբ պայմանավորված
օրենսդրական նախագծերը մշակելու
գործընթացներն իրականացվելու հանգամանքը
վկայում է Հայաստանում սեփականության այս
տարատեսակի ինքնուրույնությանը նդունելու
մասին:⁵¹ ՀՀ ազգային գրադարանը ծառայում է մարդու
մշակութային իրավունքների իրացմանը, որին
անմիջապես հարակից տարածքները հատկացվում են
ադմինոստրատիվական կազմակերպչելու համար, Գառնու
տաճարային համալիրում կազմակերպվում են
հարսանեկան միջոցառումներ, Չվարթսոցում և այլ
հասարակական վայրերում գործում են
նկարահանումների համար սակագներ և այլն:
Առաջացած այս խնդիրների պատճառն օրենսդրական
պատշաճ կարգավորումների բացակայությունն է,
որոնց իրականացման համար անհրաժեշտ է ընտրել
իրավական կարգավորման համապատասխան
տարբերակված կառուցակարգեր:

Իրավաբանական գրականության մեջ
հանդիպում ենք այլ դասակարգումների: Ռուս
իրավագետները հաճախ պետական սեփականության
հանդիսացող գույքը բաժանում են երկու մասի`
պետական կազմակերպություններին հատկացված
գույք և պետական գանձարան
(ձեռնարկություններին և հիմնարկներին
չամրացված պետական ունեցվածք):⁵² Նման բաժանումը
գուցե հիմնավորված է ՌԴ իրականության համար,
որտեղ պետական ձեռնարկություններին (унитарные и
казенные предприятия) գույքը չի փոխանցվում

⁵¹ ՀՀ կառավարությունը շրջանառության մեջ է դրել
«Գրադարանների մասին», «Թանգարանների մասին» օրենքների
նախագծերը:

⁵² Տե՛ս Гражданский кодекс Российской Федерации – Комментарий, фирма “Спарк”. М., 1995, էջ 276, Комментарий
к гражданскому кодексу Российской Федерации, части первой (постатейный). М., 1997, էջ 428, մեջբերումն
արված է ըստ **Բարսեղյան Տ.Կ.** Հայաստանի Հանրապետության
բաղադրական իրավունք (4-րդ հրատ.), Երևան, 2014, էջ 354,

սեփականություն իրավունքով: ՀՀ օրենսդրական կարգավորումներն այս մասն են որոշում, երբ պետական չառևտրային կազմակերպությունները հիմնադրված պետություն կողմից հանձնված գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում են սեփականություն իրավունքով, այդպիսի բաժանում հնարավոր է («Պետական չառևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդվ.): Տրամաբանական ենք համարում, որ պետական կազմակերպություններն սեփականություն իրավունքով հանձնված գույքը չպետք է ենթարկի հանրային սեփականության ապահանջայնացում: Անգամ խորհրդային Միությունում պետական գույքը, որ պետական ձեռնարկություններին հանձնվում էր տնօրինություն, պետական սեփականություն էր և չէր առանձնացվում հիմնադրի գույքից: Մինչդեռ, գործող ազգային օրենսդրության մեջ ընտրված իրավական մեխանիզմները չեն արտահայտում այդ տրամաբանությունն ամբողջությամբ: Օրենքով սահմանված պետական կազմակերպություններին գույքը վարչական ակտով՝ ամրացնելու միջոցով և սեփականություն իրավունքով փոխանցելու փոխարեն հիմնադրի կողմից կազմակերպություններին գույքով կարելի է ապահովել քաղաքացիական իրավունքի գործարքների միջոցով, օրինակ՝ լիազորագրային կառավարման գույքը հանձնելու պայմանագիրը, վարձակալություն պայմանագիրը և այլն:

«Վարչական սեփականություն» հասկացությունը ծանոթ է եվրոպական զգալի մասի երկրների օրենսդրություններին: «Վարչական սեփականություն» հասկացության մասին խոսել են Ֆրանսիական վարչական իրավունքի նախահայրեր Ա. Օրիոն (Hauriou) և Ա. Լոբադերը (Laubadère) իրենց 20-րդ դարի

դասական համարվող աշխատություններում:⁵³ Ա. Օրիոն, օգտագործելով «վարչական գույք» արտահայտությունը (գույք և սեփականություններ բառերը \$րանսերենում օգտագործում են որպես համարժեք հասկացություններ), գտնում է, որ վերջին երկու եզրույթները պետք է դիտարկել որպես հոմանիշներ՝ բազմիցս հիշատակելով նրանց համարժեքությունը:⁵⁴ Իրավագետ Ֆ. Յոլկան, լինելով \$րանսիական հանրային սեփականության իրավունքի տեսության ճանաչված մասնագետ, կիսում է Ա. Օրիոնի այս կարծիքը՝ օգտագործման տեսանկյունից նախապատվությունը տալով «հանրային սեփականություն» բառակապակցությանը:

Ռուսական օրենսդրությանն այս հասկացությունը ևս ծանոթ է «գերատեսչական սեփականություն» (ведомственная собственность) հասկացության ներքո, որը ենթադրում է ոչ միայն համայնքային մարմինների՝ իրենց □պարտադիր լիազորություններն իրականացնելու համար տրամադրվող գույքը □, այլև համայնքային ծառայողներին անհատական օգտագործման նպատակով տրամադրվող գույքը:

Թեև մեր իրավական համակարգին «վարչական գույք» բառակապակցությունը խորթ է, այնուամենայնիվ, ազգային օրենսդրությունում այդ երկույթը գոյություն ունի: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված է «պետության կամ համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ գույք» հասկացությունը, որը անհրաժեշտաբար ներառում է

⁵³ Տե՛ս *Laubadère A.*, *Domanialité publique, propriété administrative et affectation*, Paris : Librairie générale de droit et de jurisprudence, 1950,

⁵⁴ Տե՛ս *Hauriou A.* *L'utilisation en droit administratif des règles et principes du droit privé. Mélanges Fr. Gény*, T. 3, Paris, Sirey, 1935, էջ 92,

տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավարի, ավագանու և աշխատակազմի) պարտադիր լիազորությունների իրականացումն ապահովելու համար հատկացվող գույքը: Բացի այդ, պետական և համայնքային ծառայողներին կարող են տրամադրվել ծառայողական օգտագործման համար մեքենա, բնակարան, զենք, որոնք ևս հանրային սեփականություն են:

Վարչական գույքի կազմի մեջ է ներառվում պետություն՝ արտասահմանյան երկրներում գտնվող դիվանագիտական հաստատություններին իրենց պարտադիր լիազորություններն իրականացնելու համար հանձնված գույքը, որն օգտագործելու և տնօրինելու համար հատուկ իրավական նորմեր ՅՅ օրենսդրությամբ նախատեսված չեն: Այդպիսի գույքի կառավարման հարցերը կարգավորվում են, որպես կանոն, երկկողմանի միջազգային պայմանագրերով: Իրավական կարգավորման բացակայությունը խոչընդոտում է արտասահմանում գտնվող գույքի հանրային սեփականության իրավունքի ընդհանուր սկզբունքներով շահագործելուն և դրանց հաշվին ներդրումներ ներգրավելուն: Ընդունված է համարել, որ պետական տարածքում հանրային սեփականության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար իրականացվող միջոցառումները չեն կարող լինել նույնն այն գույքի համար, որը գտնվում է արտասահմանում: Այսպիսով, «վարչական գույք» ասելով՝ պետք է հասկանալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին իրենց պարտադիր լիազորություններն իրականացնելու համար հատկացված գույքը:

Վարչական գույքից առանձնանում են հատուկ նշանակություն պետական գույքը: «Պետական գույքի

կառավարման մասին» 2014թ. 33 օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում առանձնացվում է հանրային «հատուկ նշանակության պետական գույքի» տեսակը, որի ներքո հասկացվում է պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանությանն ապահովող, ինչպես նաև հատուկ նշանակության հիդրոհանգույցների և հիդրոտեխնիկական կառուցվածքների պետական գույքը: Յանրային գույքի նման բաժանումը իրականացվել է ոչ թե օրգանական սկզբունքով, այլ ելնելով գույքի նպատակային նշանակության և դրա նկատմամբ իրավունքների իրականացման ծավալի բաշխվածության: 33 օրենսդրությունում հանրային գույքի այս և վարչական տեսակների բաժանման փաստը խոսում է հանրային սեփականության ոչ միայն հարաբերությունների սուբյեկտի, այլև օբյեկտի և բովանդակության հիմքով բաժանելու անհրաժեշտության օգտին:

Առանձնացված և տարբերակված իրավական կարգավորում ունի նաև \$ինանսական գույքը: Բյուջետային միջոցների դեպքում օրենսդրական տարբերակված կարգավորումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ նրանով, որ սեփականության իրավունքի բովանդակության դասական (տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու) կառուցվածքը դրանց դեպքում չի պահպանվում: Ավելի հստակ՝ բյուջետային միջոցների օգտագործման և տնօրինման լիազորությունները համընկնում են և չեն տարբերակվում:

Արևմուտքում \$ինանսները լինում են հանրային և մասնավոր: Եթե կենտրոնացված (հանրային) \$ինանսներն ընդգրկման տեսանկյունից համարժեք

են, ապա ապակե նտրոնացվածը (մասնավորը) տարբեր են: Առաջինները ներառում են հասարակական կարիքների բավարարմանն ուղղված ֆինանսները: Ապակե նտրոնացված ֆինանսներն ընդգրկում են կազմակերպությունների ֆինանսական միջոցները, իսկ մասնավորն ավելի լայն ընդգրկում ունի՝ քաղաքացիների և կազմակերպությունների ֆինանսական միջոցները:⁵⁵ Ազգային իրավական համակարգում ֆինանսները հասարակությունում առկա ոչ բոլոր փողային հարաբերություններն են, այլ դրանց մի մասը, որոնք կապված են պետության խնդիրների և գործառույթների իրականացման և ընդլայնված վերարտադրության պայմանների ապահովման նպատակով դրամական միջոցների կենտրոնացված և ապակե նտրոնացված հիմնադրամների ձևավորման, բաշխման և օգտագործման հետ:⁵⁶

Հանրային ֆինանսները (ոչ առանցքացառություն) գտնվում են քաղաքացիաիրավական շրջանառության մեջ և զգալիորեն կարգավորվում են նաև քաղաքացիաիրավական նորմերով: Ի տարբերություն հասարակական և վարչական գույքի տեսակների՝ ֆինանսական գույքը ծառայում է հանրային շահին ոչ թե իր օգտակարությամբ, այլ իր արժեքայնությամբ: Հանրային ֆինանսական միջոցների կառավարման պարտադիր տարրը դրանց օգտագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու հնարավորության առկայությունն է:

Պետական և համայնքային բյուջետային և այլ միջոցները ՀՀ-ում առանձնացված իրավական կարգավորում են ստացել ինչպես

⁵⁵Տե՛ս **Ալոյան Տ.** ֆինանսական իրավունք.- Եր.:Տիգրան Մեծ, 2003, 88, էջ 6,
⁵⁶Տե՛ս **Մուրադյան Ս.Վ., Շաթիրյան Է.Է.** ֆինանսական իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Եր., 2006, էջ 3,

Սահմանադրությունում, այնպես էլ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ հարկային առանձին օրենսգրքով⁵⁷, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական և այլ իրավական ակտերով: ՌԴ-ում նույն հարաբերությունները կարգավորվում են երկու համակարգված՝ հարկային և բյուջետային օրենսգրքերով: Շվեյցարական իրավագիտական դոկտրինայում միասնականորեն ընդունված է \$ինանսական գույքը առանձնացնել հանրային գույքի ընդհանուր և վարչական գույքի տարատեսակների (\$ր.՝ Patrimoine financier, գերմ.՝ Finanzvermögen):

Արտասահմանյան երկրների սահմանադրաիրավական համապատասխան նորմերի վերլուծությունը վկայում է, որ հանրային \$ինանսների տնօրինումն էականորեն առանձնանում է, ուստի և կարիք է գգում հատուկ իրավական կարգավորման, ինչը պայմանավորված է ոչ միայն գույքի, այլև սուբյեկտի առանձնահատկություններով: Այսպես, Ճապոնիայի սահմանադրությունը նախատեսում է, որ «պետական \$ինանսների տնօրինման իրավունքն իրականացվում է պառլամենտի որոշումների հիման վրա, (...) պետական ոչ մի միջոց չի կարող ծախսվել, ինչպես նաև պետական \$ինանսական պարտավորություն չի կարող ծագել, եթե առկա է պառլամենտի կայացրած որոշումը»: ⁵⁸ (Ճապոնիայի սահմանադր. 83-րդ և 85-րդ հոդվ.): Իսկ Լյուքսեմբուրգի սահմանադրությունում ամրագրված է, որ «առանց օրենսդրի համաձայնության որևէ փոխառություն պետության հաշվին չի կարող իրականացվել»: Ավելին, անգամ «պետությանը պատկանող ցանկացած

⁵⁷ Հարկային օրենսգրքն ուժի մեջ է մտնելու 2018 թվականի հունվարի 1-ից, իսկ մինչ այդ գործում են «Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին օրենքները:

⁵⁸ Տե՛ս *Баренбойм П.А., Гаджиев Г.А., Лафитский В.И., Мау В.А.* Конституционная экономика: Учебник для вузов. – М. ЗАО Юстицинформ, 2006, էջ 376,

անշարժ գույք չի կարող օտարվել, եթե դրա օտարումը թույլատրված չէ հատուկ օրենքով: (...) Որևիցե պարտավորություն, որը կծանրաբեռնի պետական բյուջեն ավելի, քան մեկ տարի, չի կարող ընդունվել այլ կերպ, քան հատուկ օրենքի հիման վրա»:⁵⁹

Դրամական միջոցների նկատմամբ սեփականատիրոջ օգտագործման և տնօրինման իրավագործությունների բնույթն առանձնահատուկ է: Փողից բնական հատկություններ քաղելու կամ ուղղակիորեն դրանից օգուտ ստանալու հնարավորությունը բացակայում է: Ուրեմն, դրամական միջոցներից օգուտ ստանալը հնարավոր է միայն երրորդ անձանց հետ գործարքներ կնքելու միջոցով, այսինքն՝ տնօրինման իրավասության իրականացմամբ:⁶⁰

Ո՞րն է հանրային սեփականության առաջարկված տարբերակման անհրաժեշտությունն ու գործնական կարևորությունը և ի՞նչ առաջընթաց կարող է ապահովել նման տարբերակումը: Նախ, հանրային սեփականության տեսակների նորովի բաժանելու անհրաժեշտությունը զգալիորեն պայմանավորված է փոփոխվող սոցիալական պայմաններով, ինչի հետևանքով էլ հանրային սեփականության տեսակների տարբերակումն ըստ սուբյեկտային պատկանելիության չի բավարարում զարգացող տնտեսական հարաբերություններին համապատասխան իրավական կարգավորում տալու համար: Մյուս կողմից՝ ազգային տնտեսությունում գործածվող հասկացություններն իրենց բնույթով չեն համապատասխանում կապիտալիստական հասարակարգում առաջարկված բաժանումներին ու

⁵⁹ Նույն տեղում, էջ 377,

⁶⁰ Տե՛ս *Хачатрян М.А., Севилян С.М.* Деньги как объект права собственности // *Պատկանելի շխանություն* ամսագիր, N9-10, 2011, էջեր 48-50,

հասկացողություններին, հատկապես երբ
քաղաքացիական իրավունքի գիտությունում
սեփականություն հարաբերություններն
ուսումնասիրվում են ստատիկ, այլ ոչ թե դինամիկ
հարաբերություններում:

Առաջին հայացքից սեփականություն իրավունքի
օբյեկտները, անկախ նրանից հմասնավոր, թե
հանրային սեփականություն են, որևիցե
առանձնահատկություն չունեն: Սակայն
առանձնահատկությունները գույքի կառավարման
ազատություն, մեթոդների և սկզբունքների մեջ է,
որի փոփոխական սահմանները կախված են գույքի
բնույթից և գույքի սեփականատիրոջ իրավական
կարգավիճակից, որպիսի հանգամանքներով
պայմանավորվում է գույքի իրավական ռեժիմը:
Գույքի առանձին տեսակների իրավական
կարգավիճակի սահմանման անհրաժեշտությունը
բխում է նաև հանրային շահերից:⁶¹

Յուրաքանչյուր տեսական բաժանում
արդարացվում է իր գործնական
նպատակահարմարություններով: Հանրային
սեփականություն տեսակների ըստ բովանդակության
տարբերակման գործնական կարևորությունն ու
առավելությունը նրանում է, որ հանրային
սեփականություն իրավունքի շտկաններ դրանց
առանձին տեսակների վրա չեն տարածվում: Բացի այդ,
հանրային գույքի այդպիսի տարբերակումը
հեշտացնում է դրակառավարումն ու ապահովում դրա
պահպանությունը՝ հաշվի առնելով գույքի
նպատակային նշանակությունը, կարևորությունն
ու առանձնահատկությունները: Հանրային
սեփականություն առաջարկված տեսակներից մի
քանիսը, ինչպես, օրինակ, \$ինանսական գույքը,
արդեն իսկ ունի առանձնացված և տարբերակված

⁶¹Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.** Գործարարական իրավունք, 2009, էջ 157,

իրավական կարգավորում, քանի որ հնարավոր չէ սեփականության իրավունքի օբյեկտները տիրապետել, օգտագործել և տնօրինել միևնույն ձևով: Գրադարաններն ու թանգարանները հանրային մարմինների կողմից սահմանված նորմավորված կանոններով օգտագործվող գույքի տեսակներից են, որոնց վերաբերյալ առանձնացված իրավական կարգավորման աշխատանքները ընթացքի մեջ են: Այս հանգամանքը ևս հաստատում է հանրային սեփականության տեսակների տարանջատման մեխանիզմի հավաստի ունենը, մասնավորապես, հանրային սեփականության տեսակներն ըստ իրավական ռեժիմի և դրա օգտագործման կարգի տարանջատելը և չի նշանակում, որ մեր կողմից առաջարկված հանրային սեփականության տեսակների ցանկը սպառնիչ է:

Չարգացած իրավական համակարգերում հանրային սեփականության դրսևորումների գործառնական հիմքով տարանջատելու պրակտիկան նոր չէ:

Գերմանիայի գործող իրավունքում առանձնացնում են հանրային սեփականության երեք տեսակ: Առաջին տեսակի գույքը հասարակական է, այսինքն՝ գույք, որը նախատեսված է հասարակության անմիջական օգտագործման համար («Sachen im Bürgergebrauch»): Դրանք են՝ փողոցները, հրապարակները, պուրակները և այլն: Յանրային սեփականության իրավունքի օբյեկտների մյուս տեսակը բառացիորեն կոչվում է «հաստատություններին հանձնված հանրային գույք» («öffentliche Sachen im Anstaltsgebrauch»), որոնք կարող են անմիջականորեն օգտագործվել հանրության կողմից, սակայն վարչակազմի կողմից սահմանված կանոններով: Այդպիսի գույք են համարվում հանրային գրադարանները, թանգարանները, կոյուղիները և այլն: Վերջին տեսակը հանրային

գ ու յ ք ի ա յ ն տ Ե ս ա կ ն Ե , ո ռ ը հ ա ն ձ ն վ ու մ Ե վ ա ռ չ ա կ ա ն մ ա թ մ ի ն ն Ե թ ի ն ի թ Ե ն ց Լ ի ա զ ո թ ու թ յ ու Լ ն ն Ե թ ն ի թ ա կ ա ն ա ց ն Ե Լ ու Ե հ ա մ ա թ («Sachen im Verwaltungsgebrauch»)⁶²:

Հ ա ն թ ա յ ի ն ս Ե փ ա կ ա ն ու թ յ ա ն տ Ե ս ա կ ն Ե թ ի դ ա ս ա կ ա թ գ մ ա ն հ ա թ ց ու մ Ե վ թ ո պ ա կ ա ն Ե թ կ թ ն Ե թ ի ց ու շ ա դ թ ու թ յ ու Լ ն Ե գ թ ա վ ու մ ն ա ն հ ու Լ ն ա կ ա ն օ թ Ե ն ս դ թ ու թ յ ու Լ ն ը , ո ռ ը մ Ե ծ ա պ Ե ս ը ն դ օ թ ի ն ա կ ու մ Ե Ֆ թ ա ն ս ի ա կ ա ն մ ո դ Ե Լ ը : Ի թ ա վ ու Լ ն ք ի ա յ դ հ ա մ ա կ ա թ գ ու մ հ ա ն թ ա յ ի ն ս Ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի թ ա վ ու Լ ն ք ի օ թ յ Ե կ տ ն Ե թ ը դ ա ս ա կ ա թ գ ու մ Ե Ե թ Ե ք կ ա տ Ե գ ո թ ի ա ն Ե թ ի ` հ ա ն թ ա յ ի ն գ ու յ ք , ո ռ ը կ ա թ ո ղ Ե օ գ տ ա գ ո թ ծ վ Ե Լ յ ու Լ թ ա ք ա ն չ յ ու Լ թ ի կ ո ղ մ ի ց (փ ո ղ ո ց ն Ե թ , պ ու թ ա կ ն Ե թ , ա յ գ ի ն Ե թ) , վ ա թ չ ա կ ա ն գ ու յ ք ` հ ա ն թ ա յ ի ն ծ ա ռ ա յ ու թ յ ու Լ ն ն Ե թ ի ի թ ա կ ա ն ա ց ն ո ղ մ ա թ մ ի ն ն Ե թ ի ն հ ա տ կ ա ց վ ա ծ գ ու յ ք ը , ո թ ն օ գ տ ա գ ո թ ծ վ ու մ Ե Բ ա ց ա ռ ա պ Ե ս հ ա ն թ ա յ ի ն -վ ա թ չ ա կ ա ն Լ ի ա զ ո թ ու թ յ ու Լ ն ն Ե թ ի հ ա մ ա թ (հ ո ս պ ի տ ա Լ ն Ե թ , հ ի վ ա ն դ ա ն ո ց ն Ե թ , դ պ թ ո ց ն Ե թ , Լ ա յ Լ ն) , ա յ Լ Բ ն ու յ թ ի գ ու յ ք (ա ն տ ա ռ ն Ե թ , Ֆ ի ն ա ն ս ա կ ա ն գ ու յ ք)⁶³:

Ա ն կ ա խ ու թ յ ա ն տ ա թ ի ն Ե թ ի ը ն թ ա ց ք ու մ հ ա ն թ ա յ ի ն գ ու յ ք ի կ ա ռ ա վ ա թ մ ա ն ա թ դ յ ու Լ ն ք ն Ե թ ը ի ց ու յ ց դ թ Ե ց ի ն , ո թ հ ա ն թ ա յ ի ն ս Ե փ ա կ ա ն ու թ յ ա ն տ Ե ս ա կ ն Ե թ ի մ ի ա յ ն օ թ գ ա ն ա կ ա ն հ ի մ ք ո վ Բ ա ժ ա ն ու մ ը չ ի ա պ ա հ ո վ ու մ դ թ ա ա ռ ա ն ձ ի ն տ Ե ս ա կ ն Ե թ ի ա թ դ յ ու Լ ն ա վ Ե տ կ ա ռ ա վ ո թ ու մ ն ու պ ա շ տ պ ա ն ու թ յ ու Լ ն ը : Հ ա շ վ ի ա ռ ն Ե Լ ո վ ի թ ա վ ու Լ ն ք ի գ ա թ գ ա ց մ ա ն Ե վ թ ո պ ա կ ա ն մ ի տ ու մ ն Ե թ ը Լ Հ Հ ի թ ա վ ա կ ա ն հ ա մ ա կ ա թ գ ու մ ա ռ կ ա ն ա խ ա դ թ յ ա Լ ն Ե թ ն ու ա ռ ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու Լ ն ն Ե թ ը ` հ ն ա թ ա վ ո թ Ե ն ք հ ա մ ա թ ու մ ա գ գ ա յ ի ն օ թ Ե ն ս դ թ ու թ յ ու Լ ն ու մ ը ն դ ու Լ ն վ ա ծ օ թ գ ա ն ա կ ա ն հ ա յ Ե ց ա կ ա թ գ ի փ ո խ ա թ Ե ն ս Ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ձ ն Ե թ ի Բ ա ժ ա ն ու մ ը (ի ն չ ա Ե ս հ ա ն թ ա յ ի ն ու մ ա ս ն ա վ ո թ ,

⁶² Տ Ե ` ս *Stelkens UJ.* Le régime des biens publics en droit allemande, 2009, Paris, Է շ 2 // http://www.sciencespo.fr/chaire-madp/sites/sciencespo.fr.chaire-madp/files/regime_des_droits_pbc_en_droit_allemand.pdf

⁶³ Տ Ե ` ս *Moor P.* Droit administratif, Berne Editions Staemp, 1994, Է շ 12 // Droit administratif des biens: Domaine public et privé, travaux et ouvrages publics, Expropriation ; 5^e éd., Paris, 2008, Է շ 6,

այնպես էլ դրանց առանձին տեսակներին) իրականացնել օրգանական և գործառնական հիմքերի համադրմամբ՝ վերջինիս ներքո հասկանալով տեսակներին տարանջատումն ըստ օբյեկտներին օգտագործման նպատակային հատկացվածության և միևնույն օբյեկտի նկատմամբ բազմաթիվ սուբյեկտներին միջև իրավունքներին և պարտականությունների բաշխվածության: Արդյունքում առանձնանցնել հանրային գույքի հետևյալ տեսակները, որոնց ցանկը սպառիչ չէ՝ գույք, որը հանձնվել է հասարակության անմիջական օգտագործմանը, գույք, որը գտնվում է հասարակության՝ պետական մարմինների կողմից նորմավորված կանոններով օգտագործման տրամադրության տակ (պետական արխիվ, հանրային գրադարաններ, թանգարաններ, արգելոցներ, գերեզմաններ և այլն), գույքը, որն ունի հատուկ պետական նշանակության (պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակներին և քաղաքացիական պաշտպանությունն ապահովող և այլն), գույք, որը հատկացված է պետական/տեղական մարմիններին պարտադիր լիազորությունների իրականացման համար, \$ինանսական գույք/միջոցներ, գույք, որը հատկացված է պետական/համայնքային հասարակության անվտանգության, ստրատեգիական կամ այլ հանրային շահերի ապահովման համար, այլ տեսակի գույք:

**ԳԼՈՒԽ 2.3 ԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՏԱՐԻԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1.3 անրային սեփականության իրավունքի
սուբյեկտները**

Սեփականության իրավունքի սուբյեկտ կարող է լինել քաղաքացիական իրավահարաբերություններին յուրաքանչյուր սուբյեկտ: Սեփականության իրավունքի առանձնահատուկ սուբյեկտներ են հանրային իրավական կազմավորումները՝ պետությունը, համայնքը, որոնց իրավական բնույթի առանձնահատկություններով պայմանավորված տարբերակվում է սեփականության իրավունքի հանրային տեսակը:

Պետությունը հասարակության ամբողջական քաղաքական կազմակերպումն է, որն ունի տարածք, մշտական բնակչություն և ինքնիշխանություն:⁶⁴ Պետության որպես հանրային սեփականության իրավունքի սուբյեկտի իրավական կարգավիճակի կարևոր առանձնահատկությունն այն է, որ պետությունն ունի հատուկ իշխանական լիազորություններ, որոնք հնարավորություն են ընձեռում ընդունել պետական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրականացման կարգը սահմանող նորմատիվ իրավական ակտեր:

Սեփականության իրավունքի սուբյեկտ է նաև համայնքը՝ մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրությունը (ՀՀ Սահմանադր. 180-րդ հոդվ., 2-րդ մ.): Համայնքն ունի ի սեփականություն գույք ունենալու իրավունք և գույքային այլ իրավունքներ: Այն ինքնուրույն հանրային իրավական կազմավորում է, ուստի և համայնքային

⁶⁴ Տե՛ս *Խորոպանյոկ Կ.Ն.* Պետություն և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջեր 63-74,

գ ու յ ք ը հ ա ն ր ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի ն ք ն ու ր ու յ ն ս տ Ե ս ա կ Է , ո թ ի առ ա ն ձ ա հ ա տ կ ու թ յ ու ն ն Ե ր ը կ ա ր գ ա վ ո թ ղ ու մ Ե ն «Տ Ե ղ ա կ ա ն ի ն ք ն ա կ առ ա վ ա ր մ ա ն մ ա ս ի ն » Զ Զ օ թ Ե ն ք ո վ : Զ ա մ ա յ ն ք ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի ր ա վ ու ն ք ի ս ու Բ յ Ե կ տ ն Ե ր ն Ե ն ք ա ղ ա ք ա յ ի ն և գ յ ու ղ ա կ ա ն հ ա մ ա յ ն ք ն Ե ր ը (Զ Զ ք ա ղ . օ թ . 169-ր դ , 1-ի ն մ .), ո թ ո ն ց ա ն ու ն ի ց հ ա ն դ Ե ս Ե ն գ ա լ ի ս տ Ե ղ ա կ ա ն ի ն ք ն ա կ առ ա վ ա ր մ ա ն մ ա ր մ ի ն ն Ե ր ը և դ ր ա ն ց ա չ ա տ ո ն ա տ ա ր ա ն ձ ի ն ք :

Ի ր ա վ ա գ ի տ ու թ յ ա ն մ Ե ջ հ ա ն ր ա յ ի ն ի ր ա վ ա կ ա ն կ ա գ մ ա վ ո թ ու մ ն Ե ր ի ` պ Ե տ ու թ յ ա ն և հ ա մ ա յ ն ք ի կ ա գ մ ա կ Ե ր պ ա ի ր ա վ ա կ ա ն ձ և ի վ Ե ր ա Բ Ե ր յ ա լ կ ա ն Ե ր կ ու հ ի մ ն ա կ ա ն հ ա յ Ե ց ա կ ա ր գ Ե ր : Առ ա ջ ի ն հ ա յ Ե ց ա կ ա ր գ ն ը ն դ ու ն վ ա ծ Է ա ր և մ տ յ ա ն Ե վ թ ո պ ա յ ի Ե ր կ ր ն Ե ր ու մ , ո թ տ Ե ղ ի ր ա վ ա Բ ա ն ա կ ա ն ա ն ձ ի ն ք Բ ա ժ ա ն վ ու մ Ե ն ը ս տ մ ա ս ն ա վ ո թ ի ր ա վ ու ն ք ի և հ ա ն ր ա յ ի ն ի ր ա վ ու ն ք ի պ ա տ կ ա ն Ե լ ի ու թ յ ա ն : Ը ս տ ա յ դ մ , «մ ա ս ն ա վ ո թ ի ր ա վ ու ն ք ի ի ր ա վ ա Բ ա ն ա կ ա ն ա ն ձ » Ե գ թ ու յ թ ի ն Ե ր ք ո հ ա ս կ ա ն ու մ Ե ն շ ա հ ու յ թ հ Ե տ ա պ ն դ ո ղ կ ա մ չ հ Ե տ ա պ ն դ ո ղ կ ա գ մ ա կ Ե ր պ ու թ յ ու ն ն Ե ր , «հ ա ն ր ա յ ի ն ի ր ա վ ու ն ք ի ի ր ա վ ա Բ ա ն ա կ ա ն ա ն ձ ի » դ Ե պ ք ու մ ` հ ա ն ր ա յ ի ն ի ր ա վ ա կ ա ն կ ա գ մ ա վ ո թ ու մ ն Ե ր ը ` պ Ե տ ու թ յ ու ն ը , հ ա մ ա յ ն ք ը , հ ա ն ր ա յ ի ն ծ առ ա յ ու թ յ ու ն ն Ե ր (service public) մ ա տ ու ց ո ղ պ Ե տ ա կ ա ն և տ Ե ղ ա կ ա ն ի ն ք ն ա կ առ ա վ ա ր մ ա ն մ ա ր մ ի ն ն Ե ր ը :⁶⁵ Ե ր կ ր ո թ դ հ ա յ Ե ց ա կ ա ր գ ի հ ա մ ա ձ ա յ ն ` ի ր ա վ ա Բ ա ն ա կ ա ն ա ն ձ ի ք Ե ն մ ի ա յ ն մ ա ս ն ա վ ո թ ի ր ա վ ու ն ք ի ն հ ա յ տ ն ի կ ա գ մ ա կ Ե ր պ ու թ յ ու ն ն Ե ր ը , ի ս կ պ Ե տ ու թ յ ու ն ն ու հ ա մ ա յ ն ք ն առ ա ն ձ ն ա հ ա տ ու կ ս ու Բ յ Ե կ տ ն Ե ր Ե ն , ա յ լ ո չ թ Ե ի ր ա վ ա Բ ա ն ա կ ա ն ա ն ձ ի տ ա ր ա տ Ե ս ա կ : Ա յ ս հ ա յ Ե ց ա կ ա ր գ ի կ ո ղ մ ն ա կ ի ց ն Ե ր ը դ ր ա ն ք հ ա մ ա ր ու մ Ե ն ի ր ա վ ու ն ք ի ի ն ք ն ու ր ու յ ն ս ու Բ յ Ե կ տ , հ ա ն ր ա յ ի ն ի ր ա վ ա կ ա ն կ ա գ մ ա վ ո թ ու մ , ո թ ո ն ք ա մ Ե ն և ի ն

⁶⁵ Տ Ե ` u *Zoller Elizabeth*, Introduction au droit public, Paris, 2013; *Талпина Э. В.* Административное право Франции // Ежегодник сравнительного правоведения, М., НОРМА, 2004, Է ջ 136-151,

իրավաբանական անձ չեն և շեշտադրում են պետության որպես մեկ սուբյեկտային միավորի ինքնուրույն և միասնական գոյությունը:⁶⁶

Հանրային իրավական կազմավորումների իրավաբանական կոնստրուկցիայի ներկայացված երկու մոդելներն էլ համահունչ են պետության ծագման և գոյության պայմանագրային հարացուցային (պարադիգմային) տեսությանը, ըստ որի՝ պետությունը մարդկանց այն միավորումը կամ միությունն է, որի նպատակն է փոխադարձաբար հարգել և պաշտպանել միության անդամների կյանքը, ազատությունը, ունեցվածքը և այլ բարիքները:⁶⁷ Սեփականության իրավունքի տեսանկյունից՝ պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի հասկացության մեջ առանցքային դերը միավորված հասարակությանն է, ով սեփականության սուվերեն իրավունք ունի իրեն պատկանող տարածքի նկատմամբ: Այս հայեցակետն առավելապես արտահայտում է այն տեսությունը, որը, պետությունը ճանաչելով որպես մեկ միասնականություն, պետական և համայնքային մարմիններին հանրային սեփականության իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ չի համարում: Այդպիսի դիրքորոշման դեպքում խնդրահարույց է պետական և համայնքային մարմիններին պատկանող գույքային կարգավիճակի բնույթը:

Օրենսդրական միասնական՝ կոդիֆիկացված կարգավորման բացակայությունը դժվարացնում է հանրային սեփականության կառավարման սուբյեկտներին շրջանակի տարանջատումը հանրային սեփականության իրավունքի

⁶⁶ Տե՛ս *Книпер Р.* Государство в гражданском праве // Դատական իշխանություն, 2008 N 6/107, էջեր 43-33,

⁶⁷ Տե՛ս *Locke J.* Treatise of Civil Government, 1690, ed. Charles Sherman (New York: Appleton-century-Crofts, 1937), էջ 82,

ս ու բ յ ե կ տ ն եր ի ի ր ա վ ա գ ո թ յ ու ն ն եր ի ց :
Ի ր ա վ ի ճ ա կ ի հ ի մ ն ա կ ա ն պ ա տ ճ առ ն եր ի ց մ ե կ ն է լ ա յ ն է ,
ո թ հ ա ն ր ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի ր ա վ ու ն ք ի
ս ու բ յ ե կ տ ն եր ի , և առ հ ա ս ար ա կ ի ր ա վ ու ն ք ի
ս ու բ յ ե կ տ ն եր ի ի ր ա վ ա կ ա ն կ ար գ ա վ ի ճ ա կ ի հ ար ց եր ը
չ ե ն կ ար գ ա վ ո թ յ ու մ մ ե կ տ ե ս ու թ յ ա ն
շ ը ջ ա ն ա կ ն եր ու մ : Յ ա ն ր ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն
ի ր ա վ ու ն ք ի ս ու բ յ ե կ տ ն եր ի շ ը ջ ա ն ա կ ը հ ս տ ա կ ե ց ն ո ղ
օ թ ե ն ս դ ը ր ա կ ա ն առ կ ա կ ար գ ա վ ո թ յ ու մ ն եր ը հ ա ն գ ե ց ը ե լ
ե ն հ ա ն ր ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն կ առ ա վ ար մ ա ն
պ ե տ ա կ ա ն և հ ա մ ա յ ն ք ա յ ի ն մ ար մ ի ն ն եր ի կ ո ղ մ ի ց
չ ար ա շ ա հ ու մ ն եր ի թ վ ի ա վ ե լ ա ց մ ա ն ը : Ա յ ս պ ե ս , թ ե ն
կ ե ն տր ո ն ա կ ա ն ք ա ն կ ը պ ե տ ա կ ա ն գ ո թ ճ առ ու յ թ ն եր
ի ր ա կ ա ն ա ց ն ո ղ ի ր ա վ ա ք ա ն ա կ ա ն ա ն ձ է , ս ա կ ա յ ն
ք ա ն կ եր ի ց դ ը ր ա մ ա կ ա ն մ ի ջ ո ց ն եր փ ո խ առ ու թ յ ա մ ք
ը ն դ ու ն ե լ ու դ ե պ ք ու մ վ եր ա ծ վ ու մ է փ ո խ առ ն վ ա ծ
գ ու մ ար ի ս ե փ ա կ ա ն ա տ եր , ա յ ս ի ն ք ն ` դ ը ր ա մ ը
վ եր ա ծ վ ու մ է պ ե տ ա կ ա ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն : Կ ա մ
պ ե տ ա կ ա ն ո չ առ ն տր ա յ ի ն կ ա գ մ ա կ եր պ ու թ յ ու ն ն եր ը ,
հ ա մ ար վ ե լ ո վ մ ա ս ն ա վ ո թ ի ր ա վ ու ն ք ի ի ն ք ն ու ը ը յ ն
ս ու բ յ ե կ տ ն եր , ս տ ա ն ու մ ե ն պ ե տ ա կ ա ն գ ու յ ք ը ո թ պ ե ս
ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն , ո թ ի ար դ յ ու ն ք ու մ ա յ դ
կ ա գ մ ա կ եր պ ու թ յ ու ն ն եր ի գ ու յ ք ն ա յ լ և ս պ ե տ ա կ ա ն
չ է , ս ա կ ա յ ն տ ե ս ա ք ա ն ն եր ի կ ար ծ ի ք ո վ
կ ա գ մ ա կ եր պ ու թ յ ու ն ն եր ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն
ի ր ա վ ու ն ք ո վ հ ա ն ձ ն վ ա ծ գ ու յ ք ը մ ի ա ժ ա մ ա ն ա կ
հ ա մ ար վ ու մ է պ ե տ ա կ ա ն գ ու յ ք ի ք ա ղ կ ա ց ու ց ի չ մ ա ս :
Ն եր կ ա յ ա ց վ ա ծ օ թ ի ն ա կ ն եր ը , ա յ ս պ ի ս ո վ , հ ար կ ա դ ը ու մ
ե ն ա ն դ ը ր ա դ առ ն ա լ պ ե տ ա կ ա ն և տ ե ղ ա կ ա ն
ի ն ք ն ա կ առ ա վ ար մ ա ն մ ար մ ի ն ն եր ի , կ ե ն տր ո ն ա կ ա ն
ք ա ն կ ի , ն ա խ ա ր ար ու թ յ ու ն ն եր ի ու պ ե տ ա կ ա ն ա յ լ
մ ար մ ի ն ն եր ի ա շ խ ա տ ա կ ա գ մ եր ի և պ ե տ ա կ ա ն կ ա մ
հ ա մ ա յ ն ք ա յ ի ն ո չ առ ն տր ա յ ի ն
կ ա գ մ ա կ եր պ ու թ յ ու ն ն եր ի ` հ ա ն ր ա յ ի ն

սեփականությունը իրավունքի սուբյեկտներին
ինչպիսիք են չունենալու հարցին:

ՀՀ իրավական համակարգում հանրային իրավական
կազմավորումների կազմակերպչական և ձևի
իրավական կարգավորման հարցում
հայեցակարգային մոտեցում չի ցուցաբերվում,
ինչն իր հերթին զգալիորեն խոչընդոտում է
սեփականությունը իրավունքի կառավարման հարցում
հայեցակարգային կարգավորումներ տալուն:
Ընդունելով իրավունքի՝ հանրային և մասնավորի
բաժանելու դիրքորոշումը՝ օրենքով
իրավաբանական անձ են ճանաչվում նաև
համայնքներն ու կենտրոնական բանկը, սակայն
պետություն և պետական մարմինների հարցում
դիրքորոշումը սկզբունքորեն այլ է: Պետական և
տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց
իրավասությունների շրջանակներում ձեռք են
բերում իրավունքներ և ստանձնում
պարտականություններ պետության կամ համայնքի
անունից: ՀՀ-ն և համայնքները քաղաքացիական
օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով
կարգավորվող հարաբերություններում հանդես են
գալիս այդ հարաբերությունների մասնակիցներ
քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ
հավասար հիմունքներով (ՀՀ քաղ. օր-ի 128-րդ հոդվ.):
Այս դրույթի տրամաբանական շարունակությունն
են ՀՀ քաղ. օր-ի (72-րդ հոդվ. 6-րդ մ.), «Սահմանափակ
պատասխանատվություն կերպով ձևավորված մասին»,
«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ
օրենքների այն դրույթները, որոնցով պետական
կամ համայնքային ինքնակառավարման մարմիններն
իրավունք չունեն հանդես գալ որպես տնտեսական
ընկերակցությունների և ընկերությունների
մասնակից, քանի որ ֆիզիկական և իրավաբանական
անձանց պայմանականորեն նմանեցնում է

պետությունն ու համայնքին, այլ ոչ թե պետական և համայնքային մարմիններին: Նման իրավական դրույթները հաստատում են այն միտքը, որ հիշյալ մարմիններն ինքնուրույն գույք ունենալու իրավունք չունեն: ⁶⁸

ՀՀ որպես սեփականատիրոջ անունից հանդես եկող մարմինների լիազորությունների բնույթը կախված է այն հարաբերությունների տեսակից, որոնց նրանք կոչված են մասնակցելու: Օրինակ, պետական ֆունդին պատկանող բնակարանների, արդյունաբերական և այլ օբյեկտների մասնավորեցման դեպքում պետության անունից հանդես է գալիս ՀՀ պետական գույքի կառավարման վարչությունը, որը կառավարությունն աջակցում է պետական գույքի կառավարման գործառնությունի իրականացման հարցում: ՀՀ Սահմանադրական դատարանն իր 11.09.2007 թվականի թիվ 714 որոշման մեջ նշել է, որ պետական գույքի կառավարման վարչությունը հանդես է գալիս ՀՀ անունից և ունի քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտների հետ համահավասար իրավունքներ և պարտականություններ: Ըստ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ սա համահունչ է ՀՀ Սահմանադրության 154-րդ հոդվածի այն դրույթին, համաձայն որի՝ ՀՀ կառավարությունն է կառավարում պետական սեփականությունը: ⁶⁹

ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունն իրագործվում է

⁶⁸ Օրենսդիրն անհետևողականորեն «Բանկերի և բանկային գործունեություն մասին» 1996թ. ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է, որ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները բանկի մասնակից կարող են լինել օրենքում սահմանված դեպքերում և կարգով:

⁶⁹ Այստեղ հարկ է նշել ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը, որով ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է այն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ:

կառավարություն կողմից նշանակած մարզպետների կողմից, որոնք համակարգում են պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությունը (ՀՀ Սահմանադր. 160-րդ հոդվ.): Գործող օրենսդրությամբ ընդունված իրավակարգավորումների շրջանակներում, երբ մարզպետն իրականացնում է պետական քաղաքականությունը մարզային տարածքում և իրավունքներ ու պարտականություններ է ստանձնում պետություն անունից, մարզը ոչ թե սեփականություն իրավունքի ինքնուրույն սուբյեկտ է, այլ դրա կառավարման մարմին: Գուցե քննարկելի է մարզերի պետական գույքի կառավարման սուբյեկտ լինել-չլինելու հարցը (գործող օրենսդրությամբ այն դիտարկվում է ոչ թե որպես սուբյեկտ, այլ որպես երկրամաս, տարածք), սակայն անգամ այս պարագայում մարզերը չեն վերածվի հանրային սեփականության իրավունքի սուբյեկտների:

Հայաստանի Հանրապետության անունից գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ կարող են նաև ձեռք բերել ու իրականացնել պետական մարմինները իրենց գործողություններով: Այն հարցը, թե ինչ իրավունքով են տիրապետում և օգտագործում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները հանրային գույքը, ազգային իրավագիտության մեջ բարձրացվել է տնտեսավարման և օպերատիվ կառավարման իրավունքներից օրենսդրական մակարդակով հրաժարվելու ցեղանուն:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 24 փետրվարի 2012թ. թիվ ՍԴՈ-1009 գործով կայացրած որոշումով արձանագրել է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները գործում են իրենց

Լիազորություններն էր հիման վրա: Լիազորություններն
 իրավահարաբերությունն սուբյեկտին տրվող
 իրավունքն ու պարտականությունն է՝
 օրենսդրությունամբ նախատեսված իրավաչափ
 գործողություն կատարելու համար: Սուբյեկտի վրա
 իրավունքներն պաշտպանությունն առումով
 Լիազորվողը նման Լիազորությունամբ կարող է օժտվել
 օրենքի ուժով կամ իրավահարաբերություններն
 սուբյեկտներին ինքնավար կամքի դրսևորմամբ:
 Յանրային իրավունքում Լիազորությունը
 պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինն
 կամ պաշտոնյային սահմանադրությունամբ կամ
 օրենքով տրված իրավունքներն ու
 պարտականություններն ամբողջությունն է, որի
 դեպքում վերջիններս օրենքով Լիազորված են
 հանդես գալու իրավատիրոջ՝ պետական կամ տեղական
 հանրության (պետության և համայնքի) անունից:
 Ուստի, սահմանադրությունամբ և օրենքներով պետական
 և տեղական ինքնակառավարման մարմինները
 Լիազորված են սեփականատերերին՝ պետության ու
 համայնքներին անունից սահմանված կարգով
 տիրապետել, օգտագործել ու տնօրինել գույքը:
 Օրենքով սահմանված դեպքերում պետական և
 տեղական ինքնակառավարման մարմինները կարող են
 վերալիազորել իրենց իրավունքներն ու
 պարտականությունները⁷⁰: Սեփականության
 իրավունքի շրջանակներում պետական և տեղական
 ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար
 անձինք սահմանադրության, օրենքի կամ վարչական
 ակտի հիման վրա պետության և համայնքի անունից
 Լիազորված են տիրապետել ու, օգտագործել ու և
 տնօրինել ու գույքը:

⁷⁰ «Իրավական ակտերի մասին» 2002 թ. 33 օրենքի 25-րդ հոդվածով
 սահմանվել է միայն իրավաստեղծ գործունեություն
 փոխանցման արգելքը:

Ազգային օրենսդրությունը մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց թվին է դասու մ նաև այն կազմակերպությունները, որոնք ստեղծվել են հանրային իրավական կազմավորումների կողմից: Դատական պրակտիկայում դրանք որակվել են որպես մասնավոր իրավունքի սուբյեկտներ:⁷¹ Այսպիսով, դատարանները, ճանաչելով պետության կողմից միակողմանիորեն հիմնադրված կազմակերպությունները՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ, անուղղակիորեն ճանաչել են նրանց պատկանող գույքը, մասնավոր սեփականություն, այդ թվում՝ հիմնադիր-պետության կողմից կազմակերպություններին ամրացված և ի սեփականություն հանձնված հանրային գույքը: Այդպիսիք են պետական ոչ առևտրային կազմակերպություններն ու հիմնարկները:

Ոչ առևտրային կազմակերպությունների համակարգում իրենց տեղն ունեն պետական ոչ առևտրային կազմակերպությունները,⁷² որոնց վարչաիրավական կարգավիճակի վերաբերյալ իրավակարգավորումը գործող օրենսդրությունում դեռևս բացակայում է:⁷³ Անդրադառնալով պետական ոչ առևտրային կազմակերպություններին և հիմնարկներին՝ իրավահարաբերություններին այդ մասնակիցներին

⁷¹ Տե՛ս մանրամասն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկուլյցը «Արդար դատաքննության իրավունքի ապահովումը Հայաստանի Հանրապետությունում», Երևան, 2009,

⁷² 01.07.2014թ. դրու թյամբ ՀՀ գրացված է եղել թվով 1958 ՊՈԱԿ-ներ և 1282 ՀՈԱԿ-ներ: / ՀՀ իրավաբանական անձանց պետական մեգիստրի գործակալության գրանցված կազմակերպությունների վիճակագրություն 01.07.2014 թ. դրու թյամբ // http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_0481876997171_stat2014-6-1.pdf

⁷³ Այդ անորոշությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ կազմակերպության այս տեսակը չունի իր նախադեպը միջազգային իրավաստեղծ փորձում // Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրություն՝ Գ. Դանիելյանի - Երևանի պետ. համալս. - ԵՊՀ. հրատ., 2012, էջ 283,

հանրային սեփականության իրավունքի քաղաքացիաիրավական կարգավորման տեսանկյունից՝ ըստ իրավաբանական անձանց հատկանիշների հաջորդականության:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» 2007 թ. ԶԶ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով: Պետական կազմակերպության հիմնադիր կարող է լինել միայն ԶԶ-ն՝ ի դեմս կառավարության, որի կառավարումը, հետևաբար և գույքի տնօրինումը, իրականացնում է հիմնադիրը (ԶԶ-ը), նրա՝ ԶԶ լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը, որին նշանակում և ազատում է լիազորված պետական մարմինը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրության մեջ քան նախատեսված չէ («Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԶԶ օրենքի 12-րդ, 14-րդ, 15-րդ հոդ.): Բացի այդ, հիմնադիրն ունի պետական կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք («Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ԶԶ օրենքի 13-րդ հոդ.):

ԶԶ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձ է այն կազմակերպությունը, որը, որպես սեփականության, ունի առանձնացված գույք և իր

պարտավորություններն է համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Կազմակերպությունն իրավաբանական անձ ճանաչելու համար քաղաքացիական օրենսդրության տրամաբանությամբ պետք է ունենա հետևյալ հատկանիշները՝ կազմակերպական միասնությունը, գույքային առանձնացվածությունը, քաղաքացիական շրջանառությունում իր անունից հանդես գալու իրավունք և ինքնուրույն գույքային պատասխանատվություն: Օրենսգիրքը թեև ճանաչում է իրավունքի սուբյեկտ իրավաբանական անձին, սակայն նախատեսում է նաև քաղաքացիական իրավահարաբերություններն այնպիսի մասնակիցներ, ինչպիսիք են իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություններն ու հիմնարկները: Քանի որ յուրաքանչյուր իրավաբանական անձ կազմակերպություն է, իսկ ամեն կազմակերպություն իրավաբանական անձ չէ, հետևաբար, կորպորատիվ իրավունքի ոչ բոլոր իրավական նորմերն են ծառայում իրավաբանական անձի սահմանմանը:

ՀՀ քաղ.օր-ի իրավաբանական անձանց սահմանումը խնդրահարույց է ոչ միայն այս տեսանկյունից:

Իրավաբանական անձի հասկացության տեսություններն շարքում առանձնացվում են երկու հիմնական իրական և ֆիկցիոն տեսությունները: Իրավաբանական անձի ֆիկցիոն (persona ficta) տեսությունն իրավաբանական անձը

համարում է ֆիկցիա՝ միստիկ անձ,⁷⁴ ասել է թե երևակայական, մտացածին երևույթ: Քանի որ իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու համար անհրաժեշտ է կամք, իսկ կամք ունի միայն ֆիզիկական անձը, հետևաբար, միայն ֆիզիկական անձինք կարող են ձեռք բերել և իրականացնել իրավունքներ,⁷⁵ ինչպես նաև կրել պատասխանատվություն և ըստմեղքի:⁷⁶

19-րդ դարի երկրորդ կեսում իրավաբանական անձի իրական միություն տեսությունը ծագեց որպես հակադրություն ֆիկցիոն տեսությանը: Ֆրանսիացի սոցիոլոգ Էմիլ Դյուրկեյմի «հասարակական գիտակցություն» հասկացությունը սնեց իրավաբանական անձանց իրական տեսությունը, որում նշված է. «Խմբերի մտածելակերպն առանձին մարդկանց մտածելակերպը չէ, այն ունի իր սեփական օրենքները»: ⁷⁷ Զարեկով սոցիոլոգների հասարակության մտածողության ու գործունեության ինքնուրույն սուբյեկտի գաղափարին՝ իրական տեսության կողմնակիցները ճանաչեցին միությունները որպես «կամքի և գործողության սուբյեկտ»՝ բոլոր հոգեբանական և օրգանական միասնություն կազմող սոցիալական խմբերը որակելով իրավաբանական անձ:⁷⁸ Լատիներեն

⁷⁴ Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.** Բաժնետիրական իրավունք. Ուսումնական ձեռնարկ, Եր.: Եր. համալս. հրատ., 2005, էջեր 8-11,

⁷⁵ Տե՛ս **Teyssié B.** Droit civil: les personnes, 10e éd., Paris, 2007, էջ 370,

⁷⁶ Անհրաժեշտ է առանձնացնել Զոմի՝ Ինոկենտի 4-րդ պապի տեսությունը Ֆ.Կ.Սավինիի ֆիկցիոն տեսությունից: Եթե այդ տեսության կողմնակիցները միմասնառեսանալ հերքում էին իրավաբանական անձի գոյությունը, քանի որ եկեղեցին կարող է բանադրել (anathema) միայն բանական էակներին, ապա երկրորդ տեսակետի կողմնակիցների համար ֆիկցիա է ոչ թե իրավաբանական անձն ինքնին, որպես սոցիալական կազմավորում, այլ այդ բանակապակցությունում «անձ» բառը // Տե՛ս **Чантурия Л.А.** Введение в общую часть гражданского права (сравнительно-правовое исследование с учетом некоторых особенностей постсоветского права). М.: Статут, 2006, էջեր 154-157,

⁷⁷ Տե՛ս **Դյուրկեյմ Է.** Սոցիոլոգիական մեթոդի կանոնները, Երևան, 2006, էջ 23,

⁷⁸ Տե՛ս **Teyssié B.** նույն տեղում, էջ 372,

quod universitatis est non est singulorum ա ս ու լ յ թ ը (Digest 47, 22, 1, 2)⁷⁹, ո Ր ը ք ա ն ա ձ և ու մ է «բ ո լ ո Ր ի ն ը մ ա ս ն ա վ ո Ր ի ն ը չ է » դ Ր ու լ յ թ ը , խ ո ս ու մ է ս ո ճ ի ո լ ո գ ն ե Ր ի հ ա յ ե ճ ա կ ե տ ի ո գ տ ի ն :

Ա յ ս ա ի ս ո վ , ի Ր ա վ ա ք ա ն ա կ ա ն ա ն ձ ի ը ն կ ա լ մ ա ն հ ա յ ե ճ ա կ ա Ր գ ե Ր ու մ ա ճ ա ն ճ ք ա յ ի ն տ ե ղ ը հ ա տ կ ա ճ վ ու մ է ա ն ձ ի ի ն ք ն ու Ր ու լ յ ն կ ա մ ք դ Ր ս և ո Ր ե լ ու ու ն ա կ ու թ յ ա ն ը (nomen intellectuale), ո Ր ն ի Ր ա վ ա հ ա Ր ա ք ե Ր ու թ յ ա ն գ ո Ր ծ ու ն ա կ ս ու Ր յ ե կ տ հ ա ն դ ե ս գ ա լ ու հ ա մ ա Ր կ ա Ր և ո Ր ա գ ու լ ն ն ա խ ա պ ա յ մ ա ն է :⁸⁰

Ի Ր ա վ ա ք ա ն ա կ ա ն ա ն ձ ի կ ա Ր և ո Ր հ ա տ կ ա ն ի շ ը ն ե Ր ք ի ն և ա Ր տ ա ք ի ն ի ն ք ն ու Ր ու լ յ ն ու թ յ ու ն ն է , ն ե Ր ա ճ յ ա լ գ ու լ յ ք ա յ ի ն : Ա Ր և մ տ յ ա ն ե վ Ր ո պ ա յ ի ե Ր կ Ր ն ե Ր ու մ կ ա Ր և ո Ր վ ու մ է կ ա գ մ ա կ ե Ր պ ու թ յ ու ն ն ե Ր ի ա ն կ ա խ ու թ յ ա ն հ ա ն գ ա մ ա ն ք ը հ ա տ կ ա պ ե ս դ Ր ա ն ճ ս տ ե ղ ծ մ ա ն պ ա հ ի ն :⁸¹ Ս ա կ ա յ ն , ք ա ն ի ո Ր ա գ գ ա յ ի ն ի Ր ա վ ա կ ա ն հ ա մ ա կ ա Ր գ ու մ ի Ր ա վ ա ք ա ն ա կ ա ն ա ն ձ ա ն ճ ի Ր ա վ ա կ ա ն կ ա Ր գ ա վ ո Ր ու մ ն ի Ր ա կ ա ն ա ճ վ ու մ է դ Ր ա ն ճ ֆ ի գ ի կ ա կ ա ն ա ն ձ ա ն ճ կ ա ն ո ն ն ե Ր ի ն ա ս ո ճ ա ճ ն ե լ ու ս կ գ Ր ու ն ք ո վ (ի ս կ ֆ ի գ ի կ ա կ ա ն ա ն ձ ը «ս տ ե ղ ծ վ ու մ » և «դ ա դ ա Ր ու մ » է ի Ր կ ա մ ք ի ճ ա ն կ ա խ), ա պ ա ա ն հ Ր ա ժ ե շ տ է , գ ու ճ ե , կ ա Ր և ո Ր ե լ պ ե տ ա կ ա ն կ ա գ մ ա կ ե Ր պ ու թ յ ու ն ն ե Ր ի ի ն ք ն ու Ր ու լ յ ն ու թ յ ա ն հ ա ն գ ա մ ա ն ք ը ո չ թ ե մ ի ա յ ն դ Ր ա ն ճ ս տ ե ղ ծ մ ա ն պ ա հ ի ն , ա յ լ ա ճ ա վ ե լ ա պ ե ս գ ո Ր ծ ու ն ե ու թ յ ու ն ի Ր ա կ ա ն ա ճ ն ե լ ու ը ն թ ա ճ ք ու մ : Ա յ ս տ ե ղ կ ա Ր ի ք կ ա ն շ ե լ ու , ո Ր ի Ր ա վ ա ք ա ն ա կ ա ն ա ն ձ ա ն ճ ա յ լ ս ու Ր յ ե կ տ ն ե Ր ի ճ պ ա յ մ ա ն ա գ Ր ա յ ի ն կ ա մ ա յ լ

⁷⁹ Օ Ր ի ն ա կ , ք ա ժ ն ե տ ի Ր ա կ ա ն ը ն կ ե Ր ու թ յ ու ն ն ե Ր ու մ ք ա ժ ն ե տ ե Ր ե Ր ի կ ո ղ մ ի ճ կ ա գ մ ա կ ե Ր պ ու թ յ ա ն ը հ ա ն ձ ն վ ա ծ գ ու լ յ ք ը չ ի ա ս ո ճ ա ճ վ ու մ ք ա ժ ն ե տ ե Ր ե Ր ի և ն Ր ա ն ճ ա ճ ա ն ձ ի ն պ ա տ կ ա ն ո ղ գ ու լ յ ք ի հ ե տ :

⁸⁰ Ռ Դ ս ա հ մ ա ն ա դ Ր ա կ ա ն դ ա տ ա Ր ա ն ը մ ի շ ա Ր ք ո Ր ո շ ու մ ն ե Ր ու մ (24.10.1996 N 17-Ո, 12.10.1998 N 24-Ո) ն շ ե լ է , ո Ր ը ն կ ե Ր ա կ ճ ու թ յ ու ն ն ե Ր ը , ս ա հ մ ա ն ա ֆ ա կ պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ու թ յ ա ն ը ն կ ե Ր ու թ յ ու ն ն ե Ր ը , ք ա ժ ն ե տ ի Ր ա կ ա ն ը ն կ ե Ր ու թ յ ու ն ն ե Ր ն ի Ր ե ն ճ ե ու թ յ ա մ Ր մ ի ա վ ո Ր ու մ ն ե Ր ե ն :

⁸¹ Տ ե ' ս *Чантурия Л.Л.* Введение в общую часть гражданского права (сравнительно-правовое исследование с учетом некоторых особенностей постсоветского права). М.: Статут, 2006,

թուլլատրելի բնույթի կամավոր կախվածություն
 ունենալը նրա ինքնուրույնության արտաքին
 դրսևորումներն են: Այս իմաստով
 կազմակերպությունների ինքնուրույնությունը
 որոշելու համար կարևորում ենք պարզել՝ արդյոք
 իրավաբանական անձի ինքնուրույնության
 թուլլատրելի սահմանափակումը կամ նրա հնարավոր
 կախյալ դիրքում գտնվելն իրավաբանական անձի
 ինքնուրույն գործողություններին արդյունք է, թե
 ոչ: Ի դեպ, հարկ է ճշտել այդ վիճակին հանգեցնող
 իրավաբանական անձի գործողությունների ողջ
 ընթացքի ինքնուրույնությունը:

Պետական կազմակերպությունների իրավական
 կարգավորման մոդելն ավելի մոտ է իրավաբանական
 անձանց էության վերաբերյալ սովետական
 տեսություններին, որոնք մատնանշում էին միայն
 պետական հիմնարկները: Սոցիալիստական կարգերը
 հերքում էին թե՛ մասնավոր կամքը, թե՛ մասնավոր
 իրավունքը, և թե՛ մասնավոր սեփականությունը՝
 առաջնորդվելով Կ. Մարքսի՝ «մարդն աշխատող
 կենդանի է»⁸² (այլ ոչ թե ազատկամ բանական կենդանի)
 բանաձևով: Ձևականորեն ինքնուրույն և անկախ
 սուբյեկտները, ինչպիսին էին կոլխոզները,
 միությունները և այլ միավորումները, գտնվում
 էին պետական խիստ հսկողության տակ, ուստի
 անհնար է դրանք որակել որպես մասնավոր
 իրավունքի սուբյեկտներ արդի իրավագիտության
 կոնտեքստում:⁸³ Ասվածը հաստատում է նաև այն, որ 1928
 թվականին լույս տեսած «Պետական
 ձեռնարկությունների իրավական բնույթը»
 աշխատությունում Ա.Վ. Վենետիկովը
 ապրանքադրամային հարաբերություններում

⁸² Տե՛ս **Տնլշեյդ Դ.** Մեծ փիլիսոփայություններ, Երևան, 2002, էջ
 120,
⁸³ Տե՛ս **Чантурия А.А.** Введение в общую часть гражданского права (сравнительно-правовое исследование с учетом
 некоторых особенностей постсоветского права). М.: Статут, 2006, էջ 158,

պետական ձեռնարկությունները նույնացնում էր պետություն հետ:⁸⁴ Պետական ոչ առևտրային կազմակերպություններն ու հիմնարկները հասարակությունում պատերնալիստական մտածելակերպի արդյունք են, որոնք թեև գոյատևում են անցումային տնտեսությամբ համայնքներում, սակայն անհամատեղելի են ազատական շուկայական կանոնների հետ, և քանի որ մեր պետական հասարակությունն որդեգրել է ժողովրդավարական պետություն դառնալու քաղաքականությունը, ուստի քննարկվող իրավական երևույթները պետք է ունենան ժամանակավոր և անցողիկ բնույթ:

Միավորվելու կամային ինքնուրույնությունը, ինչպես միավորման սկզբնական փուլում, այնպես էլ գործունեություն ծավալելու ընթացքում, իրավաբանական անձի անհրաժեշտ հատկանիշն է, որի բացակայություն դեպքում այլ հատկանիշերի և անդրադառնալիս անիմաստ է: Այս առումով անհրաժեշտ է նախ ընդլայնել իրավաբանական անձի քաղաքացիաիրավական ընկալումը՝ իրավունքի սուբյեկտ ճանաչելով բոլոր կազմակերպություններին, իսկ կազմակերպությունների ճանաչման հարցում շեշտադրել ինքնուրույնությունը՝ ինքնուրույն կամքի ձևավորումն ու դրսևորումը, և այնուհետև, անդրադառնալ պետական կազմակերպությունների իրավական կարգավորման հայեցակարգային հարցերին:

Իրավաբանական անձի ինքնուրույնությամբ է նաև պայմանավորված իրավաբանական անձանց մարդու իրավունքների ցօգտվելու հանգամանքը (ՅՅ Սահմանադր. 74-րդ հոդվ.): Գերմանական իրավունքում

⁸⁴ Տե՛ս *Венедиктов А.В.* Государственная социалистическая собственность // Избранные труды по гражданскому праву. В 2 т. Т. II. М.: «Статус», 2004,

հիմնական իրավունքներ ունենալ ու
ունակությունը մերժվում է մասնավոր իրավունքի
ձևով կազմակերպված այն իրավունքի կրողների
պարագայում, որոնք հանրային խնդիրներ են
կատարում, ինչպես նաև հանրային իշխանության
կրողներից անկախ մասնավոր անձանց պարագայում,
եթե նրանք որպես փոխառնված մարմիններ գործում
են բացառապես հանրային շահերի համար:⁸⁵ Բացի այդ,
հանրային շահերի համար գործելու դեպքում
իրավաբանական անձանց գործողությունների
նկատմամբ կիրառելի է վարչարարության և
վարչական վարույթի սկզբունքներն ու իրավական
նորմերը:

Իրավաբանական անձի օրենսդրական սահմանման
համաձայն՝ իրավաբանական անձի մյուս հատկանիշը
գույքային առանձնացվածությունն է: «Պետական ոչ
առևտրային կազմակերպությունների մասի» ՀՀ
օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածները սահմանում են
պետական կազմակերպությունների գույքային
կարգավիճակը, որով առանձնացվում է պետական
կազմակերպությունների սեփականության
իրավունքով պատկանող գույքը նրան պետական
կառավարման մարմինների կողմից անհատույց
օգտագործման իրավունքով ամրացված գույքից և
սեփականության իրավունքով հանձնված գույքից:
Հիմնադիրը, պետական կազմակերպությանը գույքը
սեփականության իրավունքով հանձնելով,
մասնավորեցնում է հանրային գույքը, ինչը
խախտում է հանրային սեփականության իրավունքը:
Որպեսզի պարզենք՝ կարող է արդյոք հիմնադիրը
պետական կազմակերպության հիմնադրելիս
գույքը հանձնել ոչ թե սեփականության

⁸⁵ Տե՛ս մանրամասն **2 աբ ս Մ.** Գերմանիայում հիմնական
իրավունքների ընդհանուր ուսմունքի հիմունքները:
Սուբյեկտիվ հանրային իրավունքները վարչական
իրավունքում, Երևան, էջ 47-52,

իրավունքով, այլ կառավարման նպատակով, անհրաժեշտ է հստակեցնել «սեփականություն իրավունքով առանձնացված գույք» արտահայտությունը և բովանդակությունը:

ՌԴ-ում դատարանները, կիրառելով ՌԴ քաղ. օր-ի 48-րդ հոդվածը, անվավեր էին ճանաչում բոլոր այն իրավաբանական անձանց գրանցումները, որոնք չունեին առանձնացված գույք:⁸⁶ Սակայն, իրավաբանական անձի օրենսդրական սահմանման մեջ «որպես սեփականություն առանձնացված գույք ունենալու» վերաբերյալ դրույթը ոչ թե իրավասուբյեկտության նյութական նախապայման կամ չափանիշ է, այլ իրավունքի սուբյեկտի՝ հիմնադիր անդամներից առանձին գույք ձեռք բերելու, ունենալու և այն որպես սեփականություն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու օբյեկտիվ իրավական հնարավորություն: Իր անունից հանդես գալու, առանձնացված գույք ունենալու և այդ գույքով ինքնուրույն պատասխանատվություն կրելու ունակությունն արդեն իսկ ճանաչված-գրանցված իրավունքի սուբյեկտ ճանաչվելու հետևանքներն են: Ասվածի գործնական նշանակությունն այն է, որ գրանցման պահին իրավաբանական անձի գույքի բացակայությունը կամ վարձակալած գույքի առկայությունը, պետական մարմնի կողմից գրանցումը մերժելու, իսկ դատարանի համար իրավաբանական անձի գրանցումը անվավեր ճանաչելու հիմք չէ: Այս առումով պետական կազմակերպություններին «գույքային առանձնացվածություն» չափանիշին բավարարելու համար պարտադիր չէ սահմանել հիմնադիր՝ պետական կազմակերպությանը հանրային գույքը

⁸⁶ Гражданское право: актуальные проблемы теории и практики / Под общ. ред. Б.А. Белова. – М.: Юрайт-Издат, 2007, с. 264-277,

սեփականությունը իրավունքով փոխանցելու հնարավորություն -պարտականությունը, այլ նախատեսել պարտավորական իրավունքի գործիքների միջոցով գույքը կառավարելու և իրավունքները փոխանցելու հնարավորությունը, ինչի արդյունքում սեփականությունը օտարում տեղի չի ունենա, իսկ սեփականատերն իր հերթին իրավունք կունենա վերահսկել իր գույքի կառավարումն առանց միջամտելու իրավաբանական անձի ինքնուրույնությանը:

Այսպիսով, իրավաբանական անձը մեկից ավելի անձանց՝ որոշակի ընդհանուր նպատակների շուրջև դրանց իրականացման համար կամավոր միավորումն է, որն ունի ներքին կազմակերպվածություն և օժտված է իրավասուբյեկտությունամբ, մինչդեռ, քննարկվող պետական կազմակերպություններն իրավաբանական անձանց թվարկված անհրաժեշտ հատկանիշները չունեն: Մեր այս դատողությունն ավելի համոզիչ կդարձնի ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դեռևս 2009 թվականի «Արդար դատաքննության իրավունքի ապահովումը ՀՀ-ում» վերտառությունամբ արտահերթ հրապարակային զեկույցում արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի՝ «երբ կամք արտահայտողը պետությունն է (իսկ գործարքի, այդ թվում՝ պայմանագրի բուն էությունը կամահայտնությունն է), և առանձնացված գույքի de facto, ինչու է նաև de jure, տնօրինումն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունը, նման մասնավոր իրավունքի ինքնուրույն սուբյեկտի ներդրումը ոչ անհրաժեշտ ավելորդություն է և, ըստ էության, միտված է ծավալվող հարաբերությունները հանրային իրավական դաշտից արհեստականորեն

փոխանցել մասնավոր իրավական հարթությունն»:⁸⁷ Քանի որ պետությունն ու համայնքն իրենց մարմիններին միջոցով կարող են անմիջականորեն և հավասար պայմաններում հանդես գալ քաղաքացիաիրավական հարաբերություններում, անհասկանալի է օրենսդրի նպատակը պետական ոչ առևտրային կազմակերպություններին և պետական կառավարչական հիմնարկներին կարգավիճակ տալու մտադրությունը:⁸⁸ Ավելին, օրենքով ՊՈԱԿ-ներին նման կարգավիճակ տալը վտանգավոր է. ՀՀ-ում կարող է կենսագործվի լուծկովյան սցենարը, ըստ որի՝ մասնավոր իրավունքի սուբյեկտորակվող պետական կազմակերպությունները, ի տնօրինություն ստանալով պետական գույքը, կարող են վարկային պարտավորություններին շրջանակում գրավադրել պետական, այդ թվում՝ պատմական և /կամ մշակութային գույք հանդիսացող անշարժ կամ շարժական գույքը, որը կազմակերպության պարտավորություններին չկատարման դեպքում կարող է անցնել բանկերին և վարկային այլ կազմակերպություններին: Բացի այդ, պետական կազմակերպություններին գործադիրների հիմնադիրներից բացառիկ կախվածությունն ու իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության բացակայությունը մեծ ռիսկեր է ստեղծում կոռուպցիայի, փողերի լվացման և \$ինանսական իրավախախտումների

⁸⁷ Արտահերթ հրապարակային զեկույց. Արդար դատաքննության իրավունքի ապահովումը Հայաստանի Հանրապետությունում / ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, 2009, Երևան, էջ 67,

⁸⁸ Նախարարության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները ներառվել են աշխատակազմ-հիմնարկի մեջ: Նախարարության ամրացված գույք ունենալու պայմաններում աշխատակազմ-հիմնարկը կարող է լինել կառուցվածքային ստորաբաժանում, որը երրորդ անձանց հետ կարող է հանդես գալ իրեն վերապահված լիազորություններին շրջանակում:

դեպքում պատասխանատվությունը խուսափելու համար:⁸⁹

Պետական գույքի կառավարման ոլորտում հանրային սեփականության իրավունքի խնդրահարույց սուբյեկտներին ԶՀ Կենտրոնական բանկը: «Կենտրոնական բանկի մասին» 1996թ. ԶՀ օրենքի 1-ին հոդվածով ԶՀ կենտրոնական բանկը պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Զայաստանի Զանրապետությունն է:

Զայաստանի Զանրապետության կենտրոնական բանկի իրավական կարգավիճակը սահմանող իրավանորմերը հիմնականում նույնական են ռուսական օրենսդրության հետ: Կենտրոնական բանկի իրավական կարգավիճակի վերաբերյալ ռուսական դոկտրինայում ձևավորվել են երկու իրարամերժ կարծիքներ: Առաջին կարծիքի կողմնակիցների համար (Գ.Ա. Թոսունյան, Ա.Յ. Վիկունլին) կենտրոնական բանկը պետական իշխանության մարմին է, ՌԴ պետական իշխանության միասնական համակարգի ներկայումս օղակ, թեև նա չի դասվում այն մարմինների շարքին, որոնք իրականացնում են պետական իշխանություն՝ այդ տերմինի ընդունված դասական իմաստով:⁹⁰ Զակառակ կարծիք ունի Ա.Գ. Բրատկոն, ով պնդում է, թե կենտրոնական բանկը չի համալրում պետական իշխանություն իրականացնող մարմինների շարքը, քանի որ այն չի իրականացնում պետական իշխանություն: Այս եզրահանգման վերջինս եկել է,

⁸⁹ Այս առթիվ միջազգային կազմակերպությունների (OECD, GRECO) կողմից ԶՀ-ին առաջարկվել է սահմանել վարչական և քրեական պատասխանատվություն իրավաբանական անձանց համար // **Օսիկյան Ա.** Զարկային իրավունք, Եր., 2009, էջ 126: Ողջունելի է այս առումով քրեական օրենսգրքի, ՎԻՎՕ-ի նախագծերով իրավաբանական անձանց համար նախատեսվում է համաքրեական, համավարչական պատասխանատվություն:

⁹⁰ Տե՛ս **Тосунян Г.А., Викулин А.Ю.** Постатейный комментарий к Федеральному закону от 10 июля 2002 г. N 86-ФЗ «О центральном банке Российской Федерации (Банке России)»: Учебно-практическое пособие. М., 2003, էջ 12-13,

հիմք ընդունելով ՌԴ սահմանադրության 11-րդ հոդվածի 1-ին մասը, որտեղ նշված է, որ ՌԴ-ում պետական իշխանությունը իրականացվում է ՌԴ Նախագահի, Ֆեդերատիվ ժողովի, Կառավարության և դատարանների կողմից:⁹¹ ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում սահմանված պահանջով (որն, ի դեպ, ենթակա չէ փոփոխման ՀՀ Սահմանադրության 203-րդ հոդվածի նույն ժողովուրդն իր լուսփականատիրակալ իշխանությունն իրականացնում է սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական մարմինների, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 200-րդ հոդվածով սահմանված պետական գործառնության իրականացնող կենտրոնական բանկի ու պաշտոնատար անձանց միջոցով: Ինչ վերաբերում է ՀՀ կենտրոնական բանկի «կազմակերպարավական ձևին», ապա դրավերաբերյալ Սահմանադրության հղումն անուղղակի է, եթե ՀՀ Սահմանադրության 200-րդ հոդվածը մեկնաբանենք 2-րդ հոդվածի համադրմամբ:

Այս առումով ՀՀ կենտրոնական բանկի օրենսդրական սահմանման մեջ օգտագործվող «իրավաբանական անձ» եզրույթը պայմանական է, այլ կերպ ասած՝ իրավաբանական ֆիզիցիա է, կամ «հանրային իրավունքի իրավաբանական անձանց» ճանաչող իրավական համակարգերից փոխառելու հետևանք է: Կենտրոնական բանկն իրավաբանական անձ չէ անգամ քաղաքացիական օրենսգրքում տրված իրավաբանական անձի սահմանման մեջ ներառված հատկանիշների տեսակյունից, քանի որ՝

1. իրավաբանական անձինք անձանց կամավոր միավորվելու ազատության դրսևորումներն են, որոնք, ի դեպ, օգտվում են հիմնական իրավունքներից ու ազատություններից (ՀՀ Սահմանադր. 74-րդ հոդվ.), այնինչ Հայաստանի

⁹¹ Տե՛ս *Братко А.Г.* Центральный банк в банковской системе России. М., 2001, էջ 96,

Հանրապետությունում կենտրոնական բանկը «հիմնադրվել է» ՀՀ Սահմանադրության համապատասխան նորմով և լուծարման է ենթակաբացառապես Սահմանադրության մեջ փոփոխություն նկատարելու եղանակով.

2. իրավաբանական անձինք անձանց միավորումներ են որոշակի առևտրային և ոչ առևտրային նպատակների իրականացման համար, իսկ Կենտրոնական բանկն ունի սահմանադրաիրավական կարգավիճակ, իրականացնում է պետական գործառույթներ, ընդունում է նորմատիվ իրավական ակտեր.

3. մասնավոր իրավունքի սուբյեկտ հանդիսացող իրավաբանական անձինք, որպես կանոն, ունեն ընդհանուր գործունակություն, իսկ պետական մարմինները՝ բացառապես հատուկ գործունակություն.

4. մասնավոր իրավունքի սուբյեկտներն իրավունք ունեն անել այն, ինչն արգելված չէ օրենքով, իսկ պետական մարմինները, այդ թվում՝ կենտրոնական բանկը, պարտավոր են անել միայն այն, ինչ ուղղակիորեն թույլատրված է օրենքով (ՀՀ Սահմանադր., ՀՀ օրենքի 5-րդ և 42-րդ հոդվածներ).

5. եթե վարչարարություն և վարչական վարույթի սկզբունքները տարածելի են գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ, ապա ՀՀ-ում իրավաբանական անձինք վարչարարություն իրականացնող մարմիններ չեն.⁹²

⁹² Վայոց Ձորի մարզի տարածքային կենտրոնն ընդդեմ «Թովմասյան Համլետ» ՍՊ ընկերության N3-178(ՎԴ)քաղ. գործով ՎԴ 2006թ. որոշումը // ՀՀ ՎԴ որոշումների ընտրանի (սեպտեմբեր-դեկտեմբեր)-եր.։ «ՇիրակաԴոլո», 2007, էջեր 80-83,

6. ՀՀ կենտրոնական բանկը չի կարող ունենալ սեփական ության իրավունքով գույք, քանի որ նրան պատկանող գույքը պետական սեփական ություն է.

7. ՀՀ կենտրոնական բանկը չի կարող լինել այլ իրավաբանական անձանց մասնակից, ինչպես որ այդ սահմանվում է պետական մարմինների համար («Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 42-րդ հոդվածներ).

8. հիմնական իրավունքները և ազատությունները չեն տարածվում ՀՀ կենտրոնական բանկի վրա, քանի որ դրանք չեն տարածվում նաև պետական և համայնքային մարմինների վրա, սակայն տարածվում են իրավաբանական անձանց նկատմամբ (ՀՀ Սահմանադր. 74-րդ հոդվ.).

9. ՀՀ կենտրոնական բանկը չի կարող կրել քաղաքացիաիրավական ինքնուրույն պատասխանատվություն, քանի որ փաստացի ձեռք է բերում իրավունքներ և կրում է պարտականություններ պետության անունից:

Արդյունքում, քանի որ ՀՀ կենտրոնական բանկն իր էությունամբ պետական վարչակազմակերպական մարմին է և չի կարող դիտվել իրավաբանական անձ քաղաքացիական իրավունքի իմաստով, ուստի, ՀՀ կենտրոնական բանկը հանրային սեփական ության իրավունքի ինքնուրույն սուբյեկտ չէ, իսկ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ձեռք է բերում և ստանձնում է պարտավորություններ ոչ թե իր անունից այլ Հայաստանի Հանրապետության անունից: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է վերանայել ՀՀ կենտրոնական բանկի օրենքով նախատեսված «կազմակերպաիրավական ձևը»:

Ելնելով վերոշարադրյալից՝ հանրային սեփական ության իրավունքի սուբյեկտները երկուսն են՝ պետությունը և համայնքները, որոնք

տիրապետում, օգտագործում և տնօրինում են հանրային գույքն իրենց տրված լիազորություններին շրջանակներում: Ընդ որում՝ ազգային օրենսդրությունում չի ճանաչվում «հանրային իրավունքի իրավաբանական անձ» հասկացությունը, հետևաբար, հանրային իրավական կազմավորումներն ընկալվում են որպես մեկ միասնական սուբյեկտային միավոր, որի մարմիններն իրավունքներ և պարտականություններ են ձեռք բերում հանրային իրավական կազմավորումների անունից: Նշված դրույթի կիրարկումը գործնականում ապահովելու համար անհրաժեշտ է իրավաբանական անձանց հարցերն օրենսդրորեն կարգավորել միասնական հայեցակարգի շրջանակներում, ձերբազատվել արհեստական, ավելորդ և ոչ անհրաժեշտ իրավաբանական այնպիսի ֆիկցիաներից, որոնք չունեն ինքնուրույն սոցիալական դերակատարություն և կարող են օգտագործվել հանրային սեփականության իրավունքը չարաշահելու համար:

Վերջապես, քանի որ գործող իրավական կարգավորումների շրջանակներում հանրային իշխանության մարմինների կողմից ստեղծվող կազմակերպություններին հանձնվում է գույքը սեփականության իրավունքով, որի արդյունքում հանրային գույքն անթույլատրելիորեն ապահանրայնացվում է, առաջարկում ենք սահմանել հանրային իշխանության մարմինների կողմից կազմակերպություններ ստեղծելու պարագայում գույքը պարտավորական իրավունքի գործիքների միջնորդավորմամբ փոխանցելու հնարավորություն, ինչպես օրինակ, հանրային գույքի լիազորագրային կառավարման հանձնելու հնարավորությունը:

2.2. Հանրային և փակ անոթյան իրավունքի օբյեկտները

Հանրային և փակ անատիրակ ան իրավահարաբերության, ինչպես նաև յուրաքանչյուր իրավահարաբերության, տարր է իրավահարաբերության օբյեկտը: «իրավահարաբերության օբյեկտ» եզրույթն իրավագիտության մեջ սկսվեց օգտագործել շուրջ երկու հարյուր տարի առաջ, երբ գերմանացի հանրահայտ իրավագետ Ֆ. Կ. Սավինին հռչակեց իրավահարաբերությունները որպես «կապան ձիւ ան ձիւ միջև»:⁹³

Ժամանակակից իրավագիտությունում իրավահարաբերության օբյեկտի ընդունված սահմանումը հետևյալն է. իրավահարաբերության օբյեկտ է այն, ինչի կապակցությամբ սուբյեկտների միջև առաջանում է իրավահարաբերություն (հատուկ իրավագիտական տեսություն)⁹⁴, այլ կերպասած՝ ծագում, փոփոխվում և դադարում են իրավունքն ու պարտականությունները: Այս հայեցակարգի տեսանկյունից օբյեկտն իրավունքի սուբյեկտի իրավական շահերի իրականացման միջոց է: Սուբյեկտի իրավունքներն օբյեկտը շահագործելու միջոցով բավարարում են իրավունքի սուբյեկտի շահերը: Քանի որ սուբյեկտի իրավունքները հնարավորություն են ստեղծում օգտագործել որոշակի բարիքներ և դրանց

⁹³ Տե՛ս *Savigny F.C. System des heutigen römischen Recht. B. 1. Berlin, 1840, էջ 333*: Մինչ այդ, հռոմեացիներին եկող ավանդույթի համաձայն՝ իրավահարաբերությունն համարում էին նաև անձի և գույքի միջև պատկանելիության կապը: Տե՛ս *Липшиц Е.Э. Право и суд в Византии в IV-VIII вв., Ленинград, 1976, էջ 41*,

⁹⁴ Տե՛ս *Гражданское право: актуальные проблемы теории и практики / Под общ. Ред. В.А. Белова. – М.: Юрайт-Издат, 2007, էջ 303*,

առկայությունը հնարավոր է որոշել թե ում է պատկանում բարիքը, ուստի օբյեկտ է համարվում այն, ինչի առթիվ ծագում են իրավունքները: Քաղաքացիական իրավունքի մասնագետների կողմից ընդունվում է օբյեկտի հենց այս ընկալումը:

«Օբյեկտ» հասկացությունը գուգահեռում է «գույք» հասկացությունը՝ ներառելով ինչպես գույքային (իրերը, տեղեկատվությունը և այլն), այնպես էլ ոչ գույքային բարիքները (կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը և այլն): Յետևաբար, օբյեկտն ավելի լայն հասկացություն է, քան գույքը: Գույք է այն, ինչն ըստ էության ունի դրամական արժեք: Գույք հասկացությունը ընդհանրացնում է իրերն ու գույքային իրավունքները: Ուստի, «գույքն» իր հերթին ավելի լայն հասկացություն է, քան «իրը»՝ նյութական աշխարհի առարկաները: Իրավունքի տրամաբանությունը՝ աստղերը ևս իրեր են, սակայն գույք, հետևաբար, իրավունքի օբյեկտներ չեն (համենայն դեպս տեխնիկայի զարգացման առկա փուլում): Սեփականության, այդ թվում՝ հանրային սեփականության իրավունքի օբյեկտը գույքն է: Գույքի փոխարեն իրավահարաբերության օբյեկտները շրջանառու են համարելու արդյունքում ՅՅ քաղ. օր-ը շրջանառու են կոչվում է հաղորդել այնպիսի օբյեկտներին, ինչպիսիք են արժանապատվությունը, կյանքը, առողջությունը և այլն:

ՅՅ քաղ. օր-ի 132-րդ հոդվածով քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են գույքը և գույքային իրավունքները, աշխատանքներն ու ծառայությունները, տեղեկատվությունը, մտավոր գործունեության արդյունքները և ոչ նյութական բարիքները: ԱՊՀ երկրների իրավական համակարգերում սեփականության իրավունքի

օբյեկտների շրջանակը զգալիորեն նեղ է, որոնց թվին առաջնահերթ դասվում են նյութական աշխարհի իրերը (փողը, արժեթուղթը, անշարժ գույքը): Այնինչ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հիմքում սեփականության նյութաիրավական կոնցեպցիան է, որով սեփականության իրավունքը հնարավոր է տարածել նաև պարտավորական իրավունքների նկատմամբ:⁹⁵

Յուրաքանչյուր իրավական համակարգ նախատեսում է սեփականության իրավունքի ճանաչված որոշակի շրջանակ օբյեկտների բացառապես հանրային կամ պետական լիսելու վերաբերյալ դրույթը՝ արգելելով դրանք առևտրային շրջանառության մեջ դնել: Այդպիսի իրավական դրույթ նախատեսում է ՅՅ քաղ. օր-ի 133-րդ հոդվածը, որով քաղաքացիական իրավունքի օբյեկտները բաժանվում են ըստ շրջանառության ու գտնվելու ազատության աստիճանի՝ սահմանափակ շրջանառու և ազատ շրջանառու օբյեկտներ (*res in commercio*) և շրջանառությանից հանված օբյեկտներ (*res extra commercium*): Քաղաքացիական իրավունքների օբյեկտների տեսակները, որոնց շրջանառության մեջ գտնվելը չի թույլատրվում, պետք է ուղղակի նշված լինեն օրենքում (ՅՅ քաղ. օր-ի 133-րդ հոդվ., 2-րդ մ.), ուստի նման ռեժիմի գույք է նաև այն գույքը, որի մասնավորեցումն օրենքով արգելված է: Գույքի այն տեսակները, որոնք կարող են գտնվել միայն պետության կամ համայնքների սեփականության ներքո, սահմանվում է օրենքով (ՅՅ քաղ. օր-ի 116-րդ հոդվ., 3-րդ մ.):

⁹⁵ Տե՛ս այս մասին մանրամասն Sudre Fr. *Droit européen et international des droits de l'homme*, 10e éd. Paris, 2011, էջեր 726-729,

Պե տու թ յ ան ը , ի տարբերութիւն քաղաքացիական
իրավունքի այլ սուբյեկտների, սեփականութիւն
իրավունքով կարող է պատկանել ցանկացած գույք:
Համայնքներն էլ կարող են ի սեփականութիւն
ունենալ սահմանափակ շրջանառութիւններ, եթե
այդ իրավունքը մատնանշված է օրենքով, իսկ
շրջանառութիւնից հանված օբյեկտները
համայնքային սեփականութիւն իրավունքի
օբյեկտների լինել չեն կարող:

Հանրային սեփականութիւն իրավունքի
օբյեկտների բացառապէս հանրային
սեփականութիւն հանդիսանալը, ամենևին չի
բացառում դրանց շուրջ քաղաքացիական
իրավահարաբերութիւնների առաջացումը,
փոփոխումն ու դադարումը, այլ արգելում է այդ
օբյեկտի կապակցութեամբ այնպիսի գործարքներ
կնքելը, որի արդյունքում գույքը կօտարվի կամ
կհանգեցնի այդ գույքն օտարվելուն: Այն չի կարող
հանդիսանալ առուծախի, նվիրատվութիւն, գրավի և
նման օրինակ այլ գործարքների առարկա, բայց
կարող է հանձնել օգտագործման, օգտակար
հանածոների արդյունահանման, ստորգետնյա
կառույցների շինարարութիւն և շահագործման,
երկրաբանական հետազոտութիւնների
իրականացման և այլ նպատակներով:⁹⁶ Պետական
բացառիկ սեփականութիւն նկատմամբ ևս կիրառվում
են քաղաքացիական և գույքային իրավունքի
ընդհանուր սկզբունքները, այդ թվում՝ գույքի
օգտակար հատկութիւնների առավելագույն
արդյունավետ օգտագործման դրույթը: Հանրային
սեփականութիւն պարագայում այս սկզբունքը
շրջագծվում է գույքի ռացիոնալ և խնայողաբար
օգտագործելու սկզբունքի հետ: Գործող
օրենսդրութեամբ նման սահմանափակումներ

⁹⁶Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.** նշվ. աշխ., էջեր 181-182,

սահմանված են միայն ՀՀ հողային, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքերով, «Ատոմային էներգիայի», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքներով: Նման սահմանափակմամբ կարևորվում է օբյեկտի հասարակական-պետական նշանակությունը և կարևորությունը, որի հանրային հսկողություն և վերահսկողության ներքո իրականացվող տիրապետման և օգտագործման համար իրավահարաբերության կողմը պետք է ստանա հատուկ թույլ տվություն՝ օրենքով սահմանված համապատասխան չափանիշերին բավարարելու պարագայում:

Հանրային սեփականության գույքային համալիրում հատկապես առանձնացնում են տարածքը, բյուջեն-ֆինանսները, մշակութային արժեքները:

Պետության և համայնքի գոյությունը նյութական նախադրյալներից է տարածքը, որի ներքո հասկանում են հողային, ջրային տարածք, ընդերքը, օդային տարածք, բնական պաշարները և այլն: Պետության կամ համայնքի տարածքի մի մասը կարող է լինել հանրային սեփականության իրավունքի ինքնուրույն օբյեկտ, հետևաբար և գործարքների առարկա (ինչպես դատեղի ունեցավ Ալյասկայի դեպքում, երբ բացարձակ միապետ Ցար Ալեքսանդր 2-րդը 1866 թվականին վաճառեց այն Ամերիկայի միացյալ Նահանգներին):

Հանրային սեփականության իրավունքի յուրահատուկ օբյեկտ է ՀՀ ազգային հարստությունը՝ հողը՝ որպես բնական և անշարժ գույքի օբյեկտ, արտադրության հիմնական միջոց: Հողամասը միայն հողի մակերեսը չէ, այլ դրա սահմաններում գտնվող վերգետնյա և ստորգետնյա տարածքը, որի նկատմամբ հողամասի սեփականատերն ունի օգտագործելու իրավունք, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով ու չի խախտում այլ

անձանց իրավունքները (ՀՀ քաղ.օր., 202-րդ հոդվ., 2-րդ և 3-րդ մմ.): ՀՀ-ն այն երկրների շարքին է դասվում, որտեղ ՀՀ-ի ընդերքը պետության բացառիկ սեփականության է («Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 4-րդ հոդվ.): Այն կարող է տրվել օգտագործման իրավունքով և մասնավորեցման ենթակա է: Ընդերքի տեղամասերը չեն կարող գնվել կամ օտարվել ցանկացած ձևով, կամ գրավ դրվել, քանի որ օտարման ենթակա է ընդերքի օգտագործման իրավունքը: Սակայն, ինչպես տնտեսության մյուս ոլորտներում, այնպես էլ ընդերքի օգտագործման ոլորտում պետությունը կոչված է երաշխավորելու տնտեսական գործունեության ազատությանը: Պետությունը կարգավորում է ընդերքի և դրան առնչվող հարաբերությունները՝ նպատակ հետապնդելով ապահովել ընդերքի, շրջակա միջավայրի արդյունավետ օգտագործումն ու պահպանումը, սեփականության բոլոր ձևերի իրավահավասար զարգացման համար պայմանների ստեղծումը, քաղաքացիների, կազմակերպությունների իրավունքների պաշտպանությունը:⁹⁷ Պետական սեփականության են նաև ՀՀ տարածքում առկա ջրային ռեսուրսները, մասնավորապես, պետական նշանակության ջրային համակարգերը, մայրուղային և միջհամայնքային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անօտարելի գոտիները, որոնք մասնավորեցման ենթակա չեն (ՀՀ Ջրային օր-ի 4-րդ հոդվ.):

Հանրային և մասնավոր գույքի սահմանների հստակեցումն ունի ինչպես տնտեսական, այնպես էլ գործնական կարևորություն: Տարածքների

⁹⁷ Տե՛ս **Հակոբյան Ն.** Տեղական ինքնակառավարման ձևավորումն ու զարգացումը Հայաստանի Հանրապետությանում, Եր.: «Ոսկան Երևանցի» հրատ., 2001, էջ 104-105,

հանրայինի և մասնավորի սահմանների
հստակեցնելու հարցի կարևորություն
տեսանկյունից անհրաժեշտ է անդրադառնալ
սեփականության իրավունքի ինքնուրույն օբյեկտ
հանդիսացող բազմաբնակարան շենքին :
Բազմաբնակարան շենքում համայնքային և
մասնավոր սեփականության սահմանների
անորոշությունն ու դրանց անցկացման
անխոհեմությունը հանգեցրել է այդ գույքի
կառավարման անմխիթար վիճակին և այդ ոլորտում
պատասխանատվության հարցերի խեղաթյունում :

ՀՀ քաղ. օր-ի 222-րդ հոդվածի 3-րդ մասով
բազմաբնակարան շենքը շենք է, որում մեկից ավելի
սեփականատերերին սեփականության իրավունքով
պատկանում է բնակարան և (կամ) ոչ բնակելի տարածք,
և որի կառուցման և սպասարկման համար հատկացված
հողամասը կամ շենքի ընդհանուր գույքը չի կարող
առանձնացվել բնակարանների կամ ոչ բնակելի
տարածքների սեփականատերերի միջև⁹⁸ :
«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ
օրենքում ոչ սպառիչ կարգով թվարկվում են այն
օբյեկտների ցանկը, որոնք կարող են լինել
ընդհանուր սեփականության իրավունքի օբյեկտ :
Ուստի, բազմաբնակարան շենքը, ինչպես նաև
ստորաբաժանված շենքը, ձեռնարկությունը,
բազմաթիվ շարժական և անշարժ գույքերի, այդ
թվում՝ բնակարանների և (կամ) ոչ բնակելի
տարածքների, իրավաբանորեն անբաժանելի
համակցություն է :⁹⁹

⁹⁸ Այս սահմանումը տառացիորեն կրկնում է «Բազմաբնակարան
շենքի կառավարման մասին» ՀՀ 07.05.2003թ. ՀՕ-334 օրենքի 2-րդ
հոդվածը :

⁹⁹ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ
հոդվածի համաձայն՝ պետությունն ու համայնքները
բազմաբնակարան շենքում շինություն (բնակարանի) նկատմամբ
սեփականատեր լինելու դեպքում միաժամանակ
բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային
սեփականության իրավունքի սուբյեկտներ են՝ տիրապետելով,

«Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված բազմաբնակարան շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը տվյալ շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականություն իրավունքով անհատույց փոխանցման կարգի մասին» ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշման համաձայն՝ բազմաբնակարան շենքի սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով փոխանցված հողամաս է համարվում՝

• կցակառույցներ չունեցող բազմաբնակարան շենքի համար՝ շենքի պարագծով ինչպես անմիջականորեն շենքի տակ գտնվող հողատարածքը, այնպես էլ սալվածքի չափով (մինչև 1,5 մետր լայնությամբ) հողաշերտը, եթե այն ճանապարհ, փողոց կամ դրանց հարող հատված կամ այլ անձի սեփականություն հանդիսացող հողամաս է։

• օրինակական և ինքնակամ կցակառույցներ ունեցող բազմաբնակարան շենքի համար՝ շենքի պարագծով ինչպես անմիջականորեն շենքի տակ գտնվող հողատարածքը, այնպես էլ օրինակական կցակառույցի պարագծով դրա տակ գտնվող հողատարածքը, եթե այն այլ անձի սեփականություն չէ։

2006 թվականից օրենսդրի կողմից superficies solo caedit սկզբունքի ճանաչումից հետո, որը տարածում է հողի սեփականատիրոջ սեփականության իրավունքը նաև հողի վրա առկա գույքի նկատմամբ, գործադիրի այս հստակեցումը միայն կարելի է ուղջունել։ Վերաբերելի օրենսդրության համապարփակ վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ

օգտագործող և տնօրինելով դրանք քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան։

բազմաբնակարան շենքի դեպքում այս սկզբունքն արդեն իսկ ենթադրվում էր, քանի որ այդ միայն այս սկզբունքի ներքո իրավական կարգավորում ապահովելու դեպքում է, որ բազմաբնակարան շենքը համապատասխանում է անշարժ գույքի իրավական էությունը՝ ծառայելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում տրված անշարժ գույքի իրավական սահմանմանը:

Արդյունքում բազմաբնակարան շենքին հարակից տարածքները, որոնք ըստ էության, ծառայում են բազմաբնակարան շենքի սեփականատերերին և օգտագործողներին, համարվում են ոչ թե բազմաբնակարան շենքի անբաժանելի մաս, այլ համայնքային սեփականություն: Նման կարգավորումը ստեղծել է մի իրավիճակ, որում անմիջապես շենքի օգտագործման ենթակա տարածքը փաստացի սպասարկվում և կառավարվում է համատիրություն՝ շենքերի սեփականատերերի ներկայացուցչի կողմից, սակայն տնօրինվում է շենքի գտնվելու վայրի համայնքի կողմից: Հայաստանում օրակարգային հարցերից է բազմաբնակարան շենքերին առընթեր տարածքների օգտագործման և տնօրինման հարցերը: Խնդիրը ստեղծական ինքնակառավարման մարմինների կողմից առանց այդ տարածքներից անմիջականորեն օգտվող անձանց շահերը հաշվի առնելու օտարման որոշումներ կայացնելու, և այդպիսի գործողությունների դեպքում պաշտպանության արդյունավետ քաղաքացիական և վարչաիրավական մեխանիզմների օրենսդրական կարգավորումների բացակայություն մեջ է: Արդյունքում, բազմաբնակարան շենքի բնակիչները զրկված են ինչպես համապատասխան տարածքի տիրապետման և տնօրինման հարցերի լուծմանը մասնակցելու, այնպես էլ դատարաններում վիսդիկացիոն հայցեր

հարուցելու հնարավորություններից: Որպես համեմատություն նշենք, որ ՌԴ-ում շենքերին հարակից այնպիսի օբյեկտներ, ինչպիսին են բակերը, խաղահրապարակները, կանաչապատ և այլ հարակից տարածքները, բազմաբնակարան շենքի՝ գույքային համալիրի անբաժանելի մասն են կազմում:¹⁰⁰ Ընդ որում՝ ռուսական իրավունքում համատիրությունն ընդհանուր սեփականության ձև է, այլ ոչ թե ոչ առևտրային կազմակերպության տեսակ: Այս առումով, իրավական շրջահայեցողական կարգավորումն ապահովելու և գործնականում առկա խառնաշփոթը հարթելու համար՝ առաջարկում ենք բազմաբնակարան շենքերի՝ համայնքներին պատկանող հարակից այն տարածքները, որոնք ֆունկցիոնալ առումով սպասարկում են դրա բնակիչներին, նորմատիվ իրավական ակտով հանձնել բազմաբնակարան շենքերի ընդհանուր սեփականությանը:

Ինչպես բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերը, այնպես էլ ձեռնարկությունը սեփականության իրավունքի բարդ օբյեկտ է: Ձեռնարկությունը ոչ միայն արտադրության միջոցների և գործիքների միագումար է, այլև բարդ տնտեսական ամբողջություն, որն ունակ է կատարել որոշակի գործառույթներ: Դրանք բազմաբնակարան շենքերի հետ իրավաբանորեն անբաժանելի գույք են: Ձեռնարկությունների՝ որպես պետական սեփականության իրավունքի օբյեկտի առանձնահատկությունն այն է, որ նրանք հատուցելի պայմանագրով պետական կառավարման մարմինների միջև օտարվել չեն կարող:¹⁰¹ Ինչպես շենքերն ու կառուցվածքները, մեկ պետական

¹⁰⁰ Տե՛ս Земельное право: Учебник / под. ред. С.А. Боголюбова. 3е изд. – М.: «Норма», 2010, էջեր 315-316,

¹⁰¹ **Քարտեղյան Տ. Կ.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. /չորրորդ հրատ./, Եր.: ԵՊՀ, 2014, էջ 358,

մարմնից մյուսին փոխանցվում են ձրիաբար¹⁰²
օրենքի կամ օրենքով սահմանված կարգով
ընդունված վարչական կտրի հիման վրա: Պետական
ձեռնարկու թյուրենները կարող են
սեփականաշնորհվել և ապապետականացվել՝
«Պետական գույքի կառավարման
(սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքով
սահմանված կարգով:

Իրավագիտության դոկտոր, պր. Տ.Կ. Բարսեղյանի
հեղինակած «Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական իրավունք» դասագրքում խոսվում է
պետական գանձարանի մասին՝ որպես պետության
պարտքերի դիմաց բռնագանձում տարածելու
օբյեկտի: Գանձարանի գույք են համարվում
բյուջեի միջոցները, «չբաշխված» պետական
ունեցվածքը, քաղաքացիներին, իրավաբանական
անձանց կամ համայնքներին չպատկանող հողը,
բնական այլ պաշարները, կենսաթոշակային,
սոցիալական ապահովության և այլ
արտաբյուջե տային ֆոնդերը, հիմնադրամները,
ոսկու պահուստային պաշարները, ալմաստի և
արժույթային ֆոնդերը, ՀՀ կենտրոնական բանկի
ունեցվածքը, ինչպես նաև պետական պահուստում
գտնվող գույքը:¹⁰³ Քանի որ պետական
սեփականության հանդիսացող գույքը բաժանվում
է երկու մասի՝ պետական կազմակերպություններին
հատկացված գույք և պետական գանձարան, ուստի
պետական գանձարանի գույք է համարվում բյուջեի
միջոցներն ու այլ ֆինանսական գույքը, որը չի
հատկացվել պետական կազմակերպություններին:
Գուցե քննարկելի է պետական գանձարանի հանրային
սեփականության իրավունքի ինքնուրույն օբյեկտ

¹⁰² **Բարսեղյան Տ.Կ.** նույն տեղում,

¹⁰³ Տես **Բարսեղյան Տ. Կ.** Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. /չորրորդ հրատ./, Եր.:
ԵՊՀ, 2014, էջ 355,

լի ն ե լ ու հարցը, սակայն, քանի որ պետական գանձարանը հավաքական հասկացողություն է և ի ն ք ն ու ր ու յ ն օգտագործման ու տնօրինման առարկա լի ն ե լ չի կարող, ապա այն իր միասնականության մեջ քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ չի կարող լի ն ե լ : Պետական գանձարանի մասին խոսելիս անհրաժեշտ է նկատել այդ գույքի մաս կազմող առանձին օբյեկտների միջև եղած ընդհանրության մասին: Արդյունքում \$ինանսական գույքը կազմում է պետության կամ համայնքների \$ինանսական գույքը, ունենալով իրավական առանձնացված կարգավորում, կազմում է հանրային սեփականության ի ն ք ն ու ր ու յ ն տեսակ, բայց ոչ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների ի ն ք ն ու ր ու յ ն օբյեկտ:

ՀՀ

Սահմանադրության

մեկնաբանություններում ի.գ.թ.Ռ.Եղյանը պետական սեփականության օբյեկտների շարքում թվարկում է բյուջեի միջոցները: Ինչպես արդեն նշել ենք, գանձարանի հիմնական գույքը բյուջեի միջոցներն են: Իրավաբանական գրականության մեջ պետական «բյուջե» եզրույթն ունի մի քանի ընկալումներ՝ բյուջեն որպես տնտեսական կատեգորիա, բյուջեն այդ բառի նյութական իմաստով, բյուջեն՝ որպես իրավաբանական կատեգորիա:¹⁰⁴ ՀՀ քաղ.օր-ի 168-րդ և 169-րդ հոդվածների համաձայն՝ պետական և համայնքային բյուջեի միջոցները համապատասխանաբար պետական և համայնքային սեփականություն են: «ՀՀ բյուջե տային համակարգի մասին» 1997 թվականի ՀՀ օրենքի համաձայն՝ պետական և համայնքի բյուջեները՝ պետությանը և տեղական

¹⁰⁴ Տե՛ս *Е. Ю. Грачева, Э. Д. Соколова* Финансовое право, М; «Юристъ», 2004, էջ 96, *Սու լ ք ի ա ս յ ա ն Գ., Սու լ ք ի ա ս յ ա ն Ն.*, \$ինանսական իրավունք (Ուսումնական ձեռնարկ բուհերի համար), Եր.: 2007, էջ 135,

ի ն ք ն ա կ առ ա վ ա ր մ ա ն մ ա ր մ ի ն ն ե ր ի ն ՝
Ս ա հ մ ա ն ա դ ր ու թ յ ա մ ք և օ ր ե ն ք ն ե ր ո վ վ ե ր ա պ ա հ վ ա ծ
լ ի ա գ ո ր ու թ յ ու ն ն ե ր ի ի ր ա կ ա ն ա գ մ ա ն հ ա մ ա ր
ա ն հ ր ա ժ ե շ տ դ ր ա մ ա կ ա ն մ ի ջ ո գ ն ե ր ի ձ ա վ ո ր մ ա ն և
ծ ա խ ս մ ա ն ո ր ո շ ա կ ի ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա ծ ի ֆ ի ն ա ն ս ա կ ա ն
ծ ր ա գ ր ե ր ե ն (հ ո դ վ .2): Բ յ ու ջ ե ն հ ա ն դ ե ս է գ ա լ ի ս ո ր պ ե ս
բ յ ու ջ ե տ ա յ ի ն ի ր ա վ ու ն ք ի ՝ ֆ ի ն ա ն ս ա կ ա ն ի ր ա վ ու ն ք ի
ե ն թ ա ճ յ ու ղ ի ու ս ու մ ն ա ս ի ր մ ա ն օ ք յ ե կ տ , ս ա կ ա յ ն ա յ ն
հ ա ն ր ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի ր ա վ ու ն ք ի օ ք յ ե կ տ չ է ,
ի ս կ « Բ յ ու ջ ե տ ա յ ի ն մ ի ջ ո գ ն ե ր » ե գ ր ու յ թ ի ն ե ր ք ո
օ ր ե ն ս դ ր ու թ յ ու ն ը հ ա ս կ ա ն ու մ է դ ր ա մ ա կ ա ն
մ ի ջ ո գ ն ե ր , ո ր ո ն ք հ ա ն ր ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն ե ն ,
ու ս տ ի և գ տ ն վ ու մ ե ն հ ա ն ր ա յ ի ն ի ր ա վ ա կ ա ն
կ ա գ մ ա վ ո ր ու մ ն ե ր ի կ առ ա վ ա ր մ ա ն ն ե ր ք ո : Պ ե տ ա կ ա ն
ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ն մ ա ն հ ա ս կ ա գ ու թ յ ու ն ն ը ն կ ա ծ է
« Զ Յ Բ յ ու ջ ե տ ա յ ի ն հ ա մ ա կ ա ր գ ի մ ա ս ի ն » 1997 թ վ ա կ ա ն ի Զ Յ
օ ր ե ն ք ի հ ի մ ք ու մ , ո ր ի գ ո ր ծ ո ղ ու թ յ ու ն ը տ ա ր ա ծ վ ու մ
է Զ Յ Բ յ ու ջ ե տ ա յ ի ն ք ո լ ո ր հ ա մ ա կ ա ր գ ե ր ի վ ր ա : Զ Յ
Բ յ ու ջ ե տ ա յ ի ն հ ա մ ա կ ա ր գ ն ի ր ա վ ու ն ք ի ն ո ր մ ե ր ո վ
կ ա ր գ ա վ ո ր վ ո ղ Զ Յ տ ն տ ե ս ա կ ա ն
հ ա ր ա ք ե ր ու թ յ ու ն ն ե ր ի և Զ Յ պ ե տ ա կ ա ն կ առ ու գ վ ա ծ ք ի
վ ր ա հ ի մ ն վ ա ծ ե ր կ ու ՝ պ ե տ ա կ ա ն և հ ա մ ա յ ն ք ա յ ի ն
ի ն ք ն ու ր ու յ ն մ ա կ ա ր դ ա կ ն ե ր ի Բ յ ու ջ ե ն ե ր ի
ա մ ք ո ղ ջ ու թ յ ու ն ն է (հ ո դ վ .3):

Պ ե տ ա կ ա ն և հ ա մ ա յ ն ք ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն ե ն
պ ե տ ա կ ա ն և հ ա մ ա յ ն ք ա յ ի ն Բ յ ու ջ ե ի մ ի ջ ո գ ն ե ր ը :
Պ ե տ ա կ ա ն և հ ա մ ա յ ն ք ի Բ յ ու ջ ե ն ե ր ը ՝ պ ե տ ու թ յ ա ն և
տ ե ղ ա կ ա ն ի ն ք ն ա կ առ ա վ ա ր մ ա ն մ ա ր մ ի ն ն ե ր ի ն ՝
Ս ա հ մ ա ն ա դ ր ու թ յ ա մ ք և օ ր ե ն ք ն ե ր ո վ վ ե ր ա պ ա հ վ ա ծ
լ ի ա գ ո ր ու թ յ ու ն ն ե ր ի ի ր ա կ ա ն ա գ մ ա ն հ ա մ ա ր
ա ն հ ր ա ժ ե շ տ դ ր ա մ ա կ ա ն մ ի ջ ո գ ն ե ր ի ձ ա վ ո ր մ ա ն և
ծ ա խ ս մ ա ն ո ր ո շ ա կ ի ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա ծ ի ֆ ի ն ա ն ս ա կ ա ն
ծ ր ա գ ր ե ր ն ե ն (« Բ յ ու ջ ե տ ա յ ի ն հ ա մ ա կ ա ր գ ի մ ա ս ի ն »
1997 թ . Զ Յ օ ր ե ն ք , հ ո դ վ . 2-ր դ , մ . 1-ի ն) : Բ յ ու ջ ե տ ա յ ի ն
մ ի ջ ո գ ն ե ր ը փ ո ղ ն է :

Փողն ունի ոսկուց առանձին՝ ինքնուրույն կարգավիճակ, որն այն ձեռք է բերել դեռևս 1976 թվականին, երբ Միջազգային դրամական ֆոնդի մասնակիցները ճամայկայի կոնֆերանսում ոսկու և տրվեց դրամական արժեք:¹⁰⁵ Դրա հետևանքով ի հայտ եկավ անկանխիկ փողի նկատմամբ սեփականության իրավունքի հիմնահարցը: Գիտնականների մի մասը, որպես կանոն տնտեսագետները, որոնք հնարավոր են համարում սեփականության իրավունքի դրույթներին տարածումն անկանխիկ փողի նկատմամբ, այն կարծիքի են, որ «բանկային հաշվում գտնվող դրամական միջոցները շարունակում են մնալ բանկի հաճախորդի սեփականությունը»:¹⁰⁶ Ըստ ՌԴ Բյուջե տային օրենսգրքի 24-րդ հոդվածի՝ բյուջե տային միջոցների նկատմամբ տիրապետման իրավագործությունն իրականացնում է ֆինանսների նախարարությունը: ԶԶ օրենսդրությունն ունի նման դրույթ գոյություն չունի, իսկ ԶԶ քաղ. օր.-ի 877-րդ հոդվածով փոխառության դեպքում փոխատուն փոխառուի *սեփականությանն է հանձնում* դրամ, իսկ փոխառուն պարտավորվում է այն վերադարձնել: Ուստի, դրամական միջոցների տիրապետումն իրականացնում է բանկը, քանի որ բյուջե տային միջոցները գտնվում են բանկերում,¹⁰⁷ իսկ հաճախորդը բանկում դրամական միջոցների ներդնելու դիմաց ձեռք է բերում պահանջի՝ գոյքային իրավունք: Սրանից հետևում է, որ պետական կամ համայնքային համապատասխան մարմինները, դրամական հաշիվների առումով լինելով բանկի հաճախորդը, չեն իրականացնում դրանց նկատմամբ տիրապետման իրավագործությունը:

¹⁰⁵ Валютное право России: учебник / *Б.Ю. Дорофеев, Н.Н. Земцов, В.А. Пушин.* – 2-е изд., пересмотр и доп. – М.: Норма, 2008, էջ 13,

¹⁰⁶ *Ефимова Г.* Правовые проблемы безналичных денег // *Хозяйство и право.* 1997. № 2, էջ 49,

¹⁰⁷ *Беспалова А.И.* К вопросу о непосредственном осуществлении государством правомочий собственника // *Уч. зап. Казах. гос. ун-та. Алма-Ата, 1970. Т. 10. Сер. Юрид. Вып. 10. Ч. 1, էջ 370,*

Այս տեսանկյունից ևս ՀՀ կենտրոնական բանկին իրավաբանական անձի կարգավիճակ տալը խնդրահարույց է, հատկապես երբ այն ներգրավում է միջազգային և ներքին փոխառու թյուններ կամ կատարում է ներդրումներ:

Վերոգրյալ դիտարկումները վերաբերվում էին քաղաքացիաիրավական այն կարգավորումներին, որոնք սահմանում են կանխիկ դրամական միջոցների հետ իրականացվող գործարքների կանոնները: Ֆինանսական իրավահարաբերությունները ձևավորվում են, որպես կանոն, անկանխիկ փողերի կապակցությամբ, որոնք մեծամասամբ դիտվում են ոչ որպես իր, այլ որպես պարտավորական իրավունք (պահանջի իրավունք):¹⁰⁸ Միաժամանակ, որոշ գիտնականներ սեփականության իրավունքի օբյեկտ են ճանաչում բացառապես անհատապես որոշվող իրերը¹⁰⁹: Այս մեկնարկային դիրքորոշման արդյունքում գիտնականները հանգում են այն մտքին, որ «բանկային հաշիվներում հաշվառված գումարի նկատմամբ սեփականության իրավունք չունի ո՛չ բանկը, ո՛չ հաճախորդը (...)

Սեփականության իրավունքի կանոնները և ինքնին այս հասկացությունը այստեղ կիրառելի չեն»:¹¹⁰ Սակայն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածը գույք է ճանաչում նաև գույքային իրավունքները, այսպիսով, թույլատրելով խոսել գույքային իրավունքների նկատմամբ սեփականության իրավունքի մասին: ՌԴ սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում մատնանշել է, որ իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը

¹⁰⁸ Банковское право РФ. Особенная часть: Учебник: В 2 т. Т. 2 / Отв. ред. Г.А. Тосунян. М.: Юристъ, 2002, т. 2, с. 18,

¹⁰⁹ Скловский К.И. Собственность в гражданском праве: Учебно-практическое пособие. М.: Дело, 1999. с. 428,

¹¹⁰ «права собственности на безналичные деньги, числящиеся на банковских счетах, нет ни у кого – ни у банка, ни у его клиентов... Правила о праве собственности и само это понятие здесь неприменимы» // Рахмилович В.А. О правовой природе безналичных расчетов, корреспондентских счетов банков и их прав на привлеченный капитал // Право и экономика. 1996. № 1-2, с. 119,

կարող են լինել, ի թիվս այլոց, գույքային իրավունքները:¹¹¹ Բացի այդ, սեփականության իրավունքի օբյեկտներին եղ ընկալ ու մը կհակասեր Մարդու իրավունքների եվրոպական դատարանին նախադեպային իրավունքին:

Սեփականության իրավունքի փոխանցման խնդիրը այլ բնույթ չի ստանում կախված դրամի կանխիկ կամ անկանխիկ լինելուց. երկուսի պարագայում էլ փոխառության գործարքներ իրականացնելիս սեփականատերը փոխվում է: Ուստի, ճյուղային իրավական կարգավորումները պետք է իրականացնել այս մեխանիզմին ներդաշնակ:

Չանրային սեփականության իրավունքի առանձնահատուկ օբյեկտներ են մշակութային արժեքները: Մշակութային արժեքները մարդու կողմից ստեղծված այն իրերն են, որոնք ծառայում են մարդկանց հոգևոր պահանջները բավարարելուն: Դրանց յուրահատուկ իրավական կարգավորումը պայմանավորված է մասնավոր և հանրային շահերը հավասարակշռելու պահանջով: Քանի որ մշակութային արժեքները հասարակության համար հատուկ հետաքրքրություն են երկայացնող բարիքներ են, ուստի, դրանց շուրջ ծագող իրավահարաբերությունները մեծամասամբ կարգավորվում են իմպերատիվ նորմերով:

Մշակութային օրենսդրության մեջ հանդիպում են մշակութային հարստություն, մշակութային արժեքներ, մշակութային բարիքներ, մշակութային ժառանգություն, մշակութային ժառանգության օբյեկտներ, մշակութային ապրանքներ և արտադրանք և այլ բառակապակցությունները: Թվարկվածներից ամենալայն հասկացությունն է իր մեջ պարունակում

¹¹¹ Постановление КС РФ от 28 октября 1999 г. №14-П По делу о проверке конституционности статьи 2 ФЗ «О внесении изменений и дополнений в закон РФ «О налоге на прибыль предприятий и организаций» в связи с жалобой ОАО «ЭНЕРГОМАШБАНК» // СЗ РФ. 1999. № 45, է ջ 5478,

Ե մշակութային հարստությունը, որն
ամբողջացնում է մշակութային արժեքները,
ներառյալ մշակութային ժառանգության
նյութական ու ոչ նյութական օբյեկտները:

«Մշակութային արժեքներ» եզրի ներքո
հասկանում են մշակույթի և արվեստի երկեր,
գեղարվեստական ժողովրդական
ստեղծագործություններ և արհեստներ,
բանահյուսություն, բարոյագիտական և
գեղագիտական գաղափարատիպեր (իրդեալներ),
վարվեցողության կանոններ և ձևեր, լեզուներ,
բարբառներ և խոսվածքներ, ազգային ավանդույթներ
և սովորույթներ, պատմաաշխարհագրական
ստեղանուներ, մշակութային գործունեության
մասին գիտական հետազոտությունների
արդյունքներ և մեթոդներ, մշակութային
ժառանգության առարկաներ (օբյեկտներ), իսկ
մշակութային բարիքներ ասելով՝ օրենքը
հասկանում է իրավաբանական և ֆիզիկական անձանց
կողմից բնակչության մշակութային
պահանջմունքների բավարարման նպատակով
մատուցվող մշակութային ծառայություններն ու
իրացվող մշակութային արտադրանքը (ապրանքները):
Տնտեսագիտության մեջ բարիքներն ապրանքների և
ծառայությունների ամբողջականությունն է, որը
բավարարում է մարդկային պահանջները: Ուստի,
բարիք եզրույթն իրավաբանական
բովանդակություն չունի, այլ փիլիսոփայական ու
տնտեսագիտական, որն առաջին իմաստով բնորոշում
է երևույթների դրական արժեքը գնահատելու
համար, իսկ երկրորդ իմաստով՝ այն առարկան կամ
երևույթն է, որը բավարարում է որոշակի
մարդկային պահանջմունք, համապատասխանում է
մարդկանց շահերին, նպատակներին և ձգտումներին:
Քաղաքացիական իրավունքում, ինչպես նաև

միջազգային իրավական փաստաթղթերում, ապրանք, բարիք, հարստություն հասկացությունների փոխարեն գործածվում են օբյեկտ, սեփականություն, գույք, ծառայություն եզրերը:

Մշակութային հարստությունը, սակայն, իր մեջ պետք է նաև ներառի մշակութային բարիքները, որն իր հերթին ամբողջացնում է բնակչության մշակութային պահանջմունքների բավարարման նպատակով մատուցվող մշակութային ծառայություններն ու իրացվող մշակութային արտադրանք (ապրանքներ) հասկացությունները:

Մշակութային արժեք ունենոչ միայն անշարժ և շարժական իրերը, այլև ոչ նյութական բարիքները, մտավոր գործունեության արդյունքները, սակայն քաղաքացիական իրավունքի իմաստով «մշակութային արժեքները» այն իրերն են, որոնք ծառայում են մարդկանց հոգևոր պահանջները բավարարելուն: 1996թ. «Անօրինական արտահանվող և ներմուծվող մշակութային արժեքների ձեռքբեկալման և հետվերադարձման հարցերով մաքսային ծառայությունների համագործակցության մասին» ԱՊՀ համաձայնագրում մշակութային արժեքներ են համարվում կրոնական կամ աշխարհիկ բնույթի արժեքները, որոնք պետությունները դիտում են որպես հնագիտության, գրականության, արվեստի և գիտության համար նշանակություն ունեցող, այդ թվում՝ նախապատմական ժամանակաշրջանի: Դրա փոխարեն արևմուտքի իրավաբանական գրականությունում և միջազգային իրավական փաստաթղթերում այն ընդունված է անվանել «մշակութային սեփականություն», որտեղ սեփականությունն օգտագործվում է գույք հասկացությանը համարժեք:

Ազգային օրենսդրության տարբեր օրենքներում առկա տերմիններն ու հասկացություններն

անհրաժեշտ է ներդաշնակեցնել, պարզեցնել և հնարավորինս ամրագրել դրանք այն հանրամատչելի իմաստով, որոնք ավելի մոտ կլինեն իրենց կենցաղային օգտագործվող իմաստին, որպիսի հնարավոր լինի ապահովել հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի իրագրվածություն աստիճանը: Այդ նպատակով նախ և առաջ պետք է ապահովել ոլորտը կարգավորող իրավական ակտերի համախմբման լուրջ աշխատանքներ:

Մշակույթային արժեքներին վերաբերող հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը բազմազան է:¹¹² ՀՀ օրենսդրությունը սկսած «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» 31.10.1990 թվականի ՀՀ օրենքից, որի 1-ին հոդվածը նախատեսում էր՝ «պատմական և մշակույթային հուշարձանների սեփականության իրավունքի իրականացման առանձնահատկությունները, (...) կարգավորվում են ՀՀ հատուկ օրենսդրությամբ»¹¹³, մշակույթային սեփականության առանձնացված կարգավորում նախատեսվել էր, սակայն այդ

¹¹² Պատմամշակույթային արժեքներին վերաբերող հարցերը կարգավորվում են «Մշակույթային օրենսդրության հիմունքների մասին» (20 նոյեմբերի 2002թ.) «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» (11 նոյեմբերի 1998թ.), «Մշակույթային արժեքների արտահանման և ներմուծման մասին» (6 դեկտեմբերի 2004թ.), «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» (17 նոյեմբերի 1997թ.), «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» (11 ապրիլի 2003թ.), «Ոչ նյութական մշակույթային ժառանգության մասին» (7 հոկտեմբերի 2009թ.) ՀՀ օրենքներում և միջարքայլ օրենսդրական ու ենթօրենսդրական ակտերով: Օրակարգում են նաև «Հնագիտական ժառանգության ուսումնասիրության և պեղումների մասին», «Թանգարանների մասին», «Գրադարանների մասին» ՀՀ օրենքները:

¹¹³ Օրենքն ու ժը կորցրել է 1999թվականի հունվարի մեկից:

կարգավորումը ավարտուն, ինչպես նաև ինկորպորացված էր:

Ուորտի իրավական կարգավորումը բազմաթիվ իրավական ակտերով չի ապահովում այդ արժեքների արդյունավետ իրավական պաշտպանությունը: 13.05.2008 թվականի ՍԴՈ-753 որոշմամբ Սահմանադրական դատարանը սահմանել է, որ «օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հավասարությունների առկայության կամ բացակայության հանգամանքը»: Մինչդեռ, թե՛ օրենքների միջև առանձին վերցրած, և թե՛ քաղաքացիական օրենսգրքի հետ համեմատություն մեջ արդեն իսկ եզրույթաբանական հարթությունում հակասություններ կան:

Իրավական ակտերի «ինֆլյացիան», իրավակարգավորումների բացերն ու իրավաբանական բարդ լեզուն դժվարացնում են իրավական ակտերում ամրագրված անհրաժեշտ իրավական նորմի որոնումը, դրա կիրառումը կամ պատշաճ կիրառումը:

Իրավական ակտերը փնտրելիս ճիշտ կողմնորոշվելու համար հնարավոր է ձևակերպել մեկը համապատասխան ուրտը կարգավորող իրավական ակտերի համակարգման ու խմբավորման աշխատանքներ իրականացնելն է:¹¹⁴ Օրենսդրության կողիֆիկացումը կամ կոնսուլիդացումը հնարավորինս կբացառի իրավակարգավորումների կրկնությունները, հակասություններն ու անհամաձայնությունները, ինչպես նաև օրենսդրական բացերը և այլն: Իրավական միասեռ նորմերի համախմբումը կնպաստի ուրտը

¹¹⁴ Տե՛ս *Лазарев В.В., Липень С.В.* Теория государства и права: Учебник для вузов. – 3-е изд., испр и доп. М.: Спарк, 2004, էջ 297,

կարգավորող օրենսդրական կատարելագործմանը: Բացի այդ, գործնականում այն կհեշտացնի իրավական ակտերի որոնողական աշխատանքները՝ դրանով իսկ նպաստելով իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, անհրաժեշտ նախապայման ստեղծելով իրավական նպատակային դաստիարակության արդյունավետ իրականացման համար:

Աշխարհում միասեռ հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը համախմբելու միտում կա: Մասնավորապես, ազգային, եվրոպական և միջազգային մակարդակներում առաջարկվում և մշակվում են հարկային, բյուջետային, միջազգային մասնավոր, մտավոր սեփականության, առողջապահության, բանկային, հանրային սեփականության, բնապահպանության ոլորտի, մշակութային սեփականության և այլ ոլորտները կարգավորող մեկ կողմից ֆիկացված օրենսդրական ակտեր՝ օրենսգրքեր:

Ֆրանսիայի Պետական խորհուրդը (Conseil d'Etat), որը ՖՅ-ում վարչական արդարադատություն իրականացնող բարձրագույն մարմինն է, դեռևս 1986 թվականին «հանրային սեփականությունների իրավունքին» վերաբերվող իր գեկոլյցում առաջարկել էր ոլորտում կատարել բարեփոխումներ¹¹⁵ կարևորելով այդ գործընթացում «հանրային սեփականության իրավունքի» օրենսգիրք մշակելը:¹¹⁶ Ֆրանսիայում հանրային սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 2006թ. Յանրային անձանց սեփականության ընդհանուր (Code général de la propriété des personnes publiques) օրենսգրքով, իսկ ռուսական դոկտրինայում ավելանում է այն

¹¹⁵ Réflexions sur l'orientation du droit des propriétés publiques (Troisième partie du rapport sur le droit des propriétés publiques adoptée par la Section du rapport et des études du Conseil d'Etat en juin 1986, EDCE), 1987, էջ 13,
¹¹⁶ *Yolka P.* La propriété publique: éléments pour une théorie, Paris, 1997, էջեր 7, 649,

իրավաբան-գիտնականների թիվը, ովքեր կողմ են արտահայտվում հանրային սեփականության հատուկ, առանձնացված քաղաքացիական կարգավորմանը¹¹⁷ Հանրային առողջության, հարկային, մտավոր սեփականության իրավունքի, հանրային իրավունքի իրավաբանական անձանց սեփականության օրենսգրքերին գուգահեռ 2004 թվականից Ֆրանսիայում գործում է «Մշակութային սեփականության մասին» (Code du patrimoine) օրենսգրքը, որը կարգավորում է հասարակական նշանակությամբ արվեստի գործերի, հուշարձանների, թանգարանային նմուշների, արխիվների, ձեռագրերի, փաստաթղթերի, հանրային գրադարանների և մշակութային ու պատմական հազվագյուտ իրերի հետ կապված իրավահարաբերությունները¹¹⁸

Այսպիսով, հանրային սեփականության օբյեկտներին առանձնահատկություններին հարցերի պարզաբանումները կարևորվում են նրանով, որ հանրային սեփականության իրավունքի բովանդակության, դրա իրացման թույլատրելի ծավալի և կարգի առանձնահատկությունները պայմանավորված են նաև սեփականության իրավունքի օբյեկտի բնույթով¹¹⁹ Հետևաբար, սեփականության իրավունքի օբյեկտից է նաև կախված սեփականության իրավունքի սուբյեկտի լիազորություններին ծավալը և այդ իրավունքի պաշտպանության սահմանները որոշելու օրենսդրի

¹¹⁷ Տե՛ս *Голубцов В. Г.* «Участие РФ в имущественных отношениях, регулируемых гражданским законодательством», Автореф. дисс. ... юрид. наук. М., 2008,

¹¹⁸ Տե՛ս *Sorbara J-G.* De quelques conséquences du Code général de la propriété des personnes publiques sur la gestion des collections, BBF, 2009, Paris, T. 54, N 1, էջեր 38-40,

¹¹⁹ Տե՛ս այս մասին մեր նախկին հրատարակումները *Хачатрян М.А.* Проблема соотношения прав распоряжения и завещания в Конституции РА // Դատական իշխանության շխանակ, 2007, N 11-12 (նոյեմբեր-դեկտեմբեր), էջ 42, Տե՛ս նաև նույնի՝ Բազմաբնակարան շենքը՝ որպես գույք // Դատական իշխանության շխանակ, 2009, N 7/120 (հունիս), էջ 48, Բազմաբնակարան շենքը՝ որպես սեփականության իրավունքի օբյեկտ // Երրորդ տարեկան գիտաժողով (5-10 դեկտեմբերի 2008 թ.). Գիտական հոդվածների ժողովածու, Մաս 1, Եր., ՀՀ հրատարակչություն, 2009, էջ 611,

լի ազոբոլթյուններին շրջանակը: Օրենսդրի
լի ազոբոլթյուններին շրջանակն ընդլայնվում է,
եթե սեփականոլթյան իրավունքի օբյեկտն
իրականացնում է սոցիալական, մշակութային և այլ
հանրային-հասարակական գործառույթներ: Եվ
հակառակը, օրենսդրի լի ազոբոլթյուններին ծավալը
փոքրանում է, եթե խոսքը վերաբերում է անհատի
անձնական ազատոլթյան տարր հանդիսացող
(մասնավոր) սեփականոլթյանը:¹²⁰

Այս և այլ հանգամանքներով պայմանավորված
հանրային սեփականոլթյան իրավունքի պատմական,
մշակութային և այլ տեսակի օբյեկտների
արդյունավետ օգտագործումը, կառավարումն ու
պաշտպանոլթյունն ապահովելու համար
առաջնահերթ անհրաժեշտ է իրականացնել ոլորտի
համընդգրկուն կոդիֆիկացիոն աշխատանքներ:

2.3.3 անրային սեփականոլթյան իրավունքի բովանդակոլթյունը

Հին ժամանակաշրջանում գոյոլթյունն ունեցած
հռոմեական իրավունքի դպրոցը մշակել էր
սեփականոլթյան բավականին ընդարձակ
իրավասոլթյուններին ամբողջոլթյուն, որը դրվեց
սեփականոլթյան ժամանակակից տեսոլթյան
հիմքում: Հռոմեական իրավունքին հայտնի
սեփականոլթյան հայեցակետի սկզբունքային
դրույթն այն է, որ սեփականատերն իրավունք ունի
իր իրի հետ անելու այն ամենը, ինչը որ նրան
ուղղակի չի արգելվում:

¹²⁰ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը
կարգավորման հարցում օրենսդրին հանձնարարելը համարում
է իր՝ սոցիալական մոդելի իրականացմանն առնչվող
խնդիրը, որի նորմատիվ տարրերը բխում են մասնավոր
սեփականոլթյան ճանաչումից և սոցիալական պատվերից:

Որքան ո՞վ է մասնավոր իրավունքում սեփականության ազատության տարրերը տարածելի հանրային սեփականության վրա: Ժամանակակից իրավագիտության ոլորտում բացակայում են հանրային սեփականության իրավունքի բովանդակության լուրջ ուսումնասիրության ներքին շուկայական տնտեսության պայմաններում:¹²¹

Մինչև 2005թ. սահմանադրական բարեփոխումները ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը սահմանում էր, որ «սեփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը»: ՀՀ Սահմանադրության 1-ին գլխում այդպիսի դրույթն ամրագրել նշանակում էր, որ սեփականության լիազորությունների նամիասնությունը գործում է սեփականության բոլոր ձևերի համար: ՀՀ-ում 2005 և 2015 թվականների սահմանադրական բարեփոխումներից հետո այս տրիանգլան ամրագրվեց ՀՀ Սահմանադրության 2-րդ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատության ներքին գլխում՝ այն միայն մասնավոր սեփականությանը վերաբերելի դարձնելով: Դրան հակառակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը սահմանադրական նոր կարգավորումներին համապատասխանեցնելու աշխատանքներ դեռևս չեն իրականացվել, որի արդյունքում՝ ՀՀ քաղ. օր. 163-րդ հոդվածում թվարկված՝ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագործությունները, *inter alia*, վերաբերելի են նաև հանրային սեփականության իրավունքին:

ՀՀ քաղ. օր-ի 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի իրավունքն է՝ □իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող

¹²¹ Տե՛ս *Андреев В.* Правовые проблемы распоряжения и управления федеральной собственностью // <http://www.lawlibrary.ru/article1042157.html>

գ ու յ ք ը ☐: Զ Զ ք աղ . օ ր -ո վ տ հ ր ա պ ե տ մ ա ն ի ր ա վ ու ն ք ը
ս ա հ մ ա ն վ ու մ է ո ր պ ե ս գ ու յ ք ը ☐ փ ա ս տ ա գ ի
տ հ ր ա պ ե տ ե լ ու ի ր ա վ ա ք ա ն ո ր ե ն ա պ ա հ ո վ վ ա ծ
հ ն ա ր ա վ ո ր ու թ յ ու ն ☐, օ գ տ ա գ ո ր ծ մ ա ն ի ր ա վ ու ն ք ը `
գ ու յ ք ի ց դ ր ա ☐ օ գ տ ա կ ար ք ն ա կ ա ն հ ա տ կ ու թ յ ու ն ն ե ր ը
ք աղ ե լ ու ☐, ի ս կ տ ն օ ր ի ն մ ա ն ի ր ա վ ու ն ք ը ` ☐ գ ու յ ք ի
ճ ա կ ա տ ա գ ի ր ը ո ր ո շ ե լ ու ի ր ա վ ա ք ա ն ո ր ե ն ա պ ա հ ո վ վ ա ծ
հ ն ա ր ա վ ո ր ու թ յ ու ն ☐: Ը ս տ դ ա տ ա կ ա ն պ ր ա կ տ ի կ ա յ ի `
ն շ վ ա ծ դ ր ու յ թ ն ե ր ի հ ա մ ա կ ար գ ա յ ի ն
վ ե ր լ ու ծ ու թ յ ու ն ը ց ու յ ց է տ ա լ ի ս , ո ր
ս ե փ ա կ ա ն ա տ ի ր ո ջ ի ր ա վ ա գ ո ր ու թ յ ու ն ն ե ր ի
(տ հ ր ա պ ե տ ու մ , օ գ տ ա գ ո ր ծ ու մ , տ ն օ ր ի ն ու մ)
ա մ ք ո ղ ջ ու թ յ ու ն ը կ ա գ մ ու մ է ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն
ի ր ա վ ու ն ք ի ք ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ը , և դ ր ա ն ց
ա մ ք ո ղ ջ ու թ յ ու ն ն օ ր ե ն ք ո վ պ ա տ կ ա ն ու մ է
ս ե փ ա կ ա ն ա տ ի ր ո ջ ը ` ո ր պ ե ս ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն
ս ու ք յ ե կ տ ի վ ի ր ա վ ու ն ք ի կ ր ո ղ ի և ս ա հ մ ա ն ու մ
ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի ր ա վ ու ն ք ի ի ր ա կ ա ն ա ց մ ա ն
ս ա հ մ ա ն ն ե ր ը , ի ն չ ն ա պ ա հ ո վ ու մ է գ ու յ ք ի ն կ ա տ մ ա մ ք
ս ե փ ա կ ա ն ա տ ի ր ո ջ լ ի ա կ ա տ ար գ ե ր ի շ խ ա ն ու թ յ ու ն ը `
ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի ր ա վ ու ն ք ի
ա ն ձ ե ո ն մ խ ե լ ի ու թ յ ու ն ը (Զ Զ վ ճ ո ա ք ե կ դ ա տ ար ա ն ի թ ի վ
Ե Ա Ն Դ /1628/02/11 ք աղ . գ ո ր ծ ո վ 2014թ . ո ր ո շ ու մ):

Զ Զ ք աղ . օ ր -ի 166-ր դ հ ո դ վ ա ծ ի 2-ր դ մ ա ս ո վ հ ա ն ր ա յ ի ն
ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի ր ա վ ու ն ք ի գ ու յ ք ը տ հ ր ա պ ե տ ե լ ու ,
օ գ տ ա գ ո ր ծ ե լ ու ու տ ն օ ր ի ն ե լ ու
առ ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն ե ր ը ս ա հ մ ա ն վ ու մ ե ն մ ի ա յ ն
օ ր ե ն ք ն ե ր ո վ : Ո ր պ ե ս գ ի գ ու յ ք ը տ հ ր ա պ ե տ ե լ ու ,
օ գ տ ա գ ո ր ծ ե լ ու ու տ ն օ ր ի ն ե լ ու
առ ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն ե ր ն օ ր ե ն ք ո վ ս ա հ մ ա ն վ ե ն ,
դ ր ա ն ք պ ե տ ք է օ ք յ ե կ տ ի վ ո ր ե ն գ ո յ ու թ յ ու ն
ու ն ե ն ա ն : Ու ս տ ի , ա շ խ ա տ ու թ յ ա ն ա յ ս մ ա ս ու մ խ ն ի ր ը
ն շ վ ա ծ առ ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն ե ր ի վ ե ր հ ա ն ու մ ն է և
դ ր ա ն ց օ ր ե ն ք ո վ ս ա հ մ ա ն ե լ ու ա ն հ ր ա ժ ե շ տ ու թ յ ու ն ը
ք ն ն ա ր կ ե լ ն է :

Ը ն դ ու ն վ ա ծ է հ ա մ ա ր ե լ , ո Ր գ ու յ ք ի տ ի ր ա պ ե տ մ ա ն խ ն դ ի ր ն ե ր ն ի ր ա վ ա գ ի տ ու թ յ ա ն ք ա ր ձ ր ա գ ու յ ն մ ա թ ե մ ա տ ի կ ա ն է , ո Ր ի վ ե ր ա բ ե թ յ ա լ ի ր ա վ ա գ ե տ ն ե թ ի կ ա ր ծ ի ք ն ե ր ը ի ր ա ր ա մ ե ր ժ ե ն . մ ի մ ա ս ի կ ա ր ծ ի ք ո վ տ ի ր ա պ ե տ ու մ ը փ ա ս տ է , ի ս կ մ յ ու ս մ ա ս ի կ ա ր ծ ի ք ո վ ՝ ի ր ա վ ու ն ք :

«Տ ի ր ա պ ե տ ու մ ը փ ա ս տ է » ի շ խ ո ղ տ ե ս ա կ ե տ ի կ ո ղ մ ն ա կ ի ց ն ե ր ի (Ֆ . Ս ա վ ի ն ի ն , Բ . Վ ի ն դ շ ե ի դ ը , Գ . Դ ե ր ք ու ր գ ը , Օ . Մ ե յ ե ր ը , Կ . Ս կ լ ո վ ս կ ի ն և ա յ լ ո ք) կ ո ղ մ ի ց պ ա շ տ պ ա ն վ ո ղ հ ի մ ն ա կ ա ն փ ա ս տ ար կ ն ա յ ն է , ո Ր տ ի ր ա պ ե տ ո ղ ը հ ա կ ա դ ր վ ու մ է ս ե փ ա կ ա ն ա տ ի ր ո ջ ը ո Ր պ ե ս փ ա ս տ ա գ ի տ ի ր ա պ ե տ ո ղ (1), լ ի ն ե լ ո վ փ ա ս տ ՝ տ ի ր ա պ ե տ ու մ ը առ ա ջ ա ց ն ու մ է ի ր ա վ ա կ ա ն հ ե տ ն ա ն ք ն ե ր (2), տ ի ր ա պ ե տ մ ա ն պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն առ կ ա յ ու թ յ ու ն ը տ ի ր ա պ ե տ մ ա ն ն ի ր ա վ ա կ ա ն ք ն ու յ թ չ ի հ ա ղ ո Ր դ ու մ (3): Տ ի ր ա պ ե տ ու մ -փ ա ս տ ի կ ո ղ մ ն ա կ ի ց ն ե ր ի հ ա մ ա ր տ ի ր ա պ ե տ ու մ -ի ր ա վ ու ն ք ն ա ր ծ ա ր ծ վ ու մ է հ ե ն ց ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն հ ա ս կ ա ց ու թ յ ու ն ու մ :¹²²

Մ յ ու ս հ ա յ ե ց ա կ ար գ ի կ ո ղ մ ն ա կ ի ց ն ե ր ը (Կ . Կ ա վ ե լ ի ն , Յ . Գ ա մ ք ա ր ո վ , Ս . Մ ու ր ո մ ց ն , Գ . Շ ե ր շ ե ն ն ի չ , Դ . Դ ո ժ դ ն և ա յ լ ո ք) գ տ ն ու մ ե ն , ո Ր «տ ի ր ա պ ե տ ու մ ը ի ր ա վ ու ն ք է »: Գ . Շ ե ր շ ե ն ն ի չ ն , ո Ր ի ն ա կ , դ ա ս ու մ է տ ի ր ա պ ե տ մ ա ն ս ու ք յ ե կ տ ի վ ի ր ա վ ու ն ք ն ի ր ա յ ի ն ի ր ա վ ու ն ք ն ե ր ի շ ա ր ք ի ն , ք ա ն ի ո Ր ա յ դ ի ր ա վ ու ն ք ի ո ք յ ե կ տ ն ի ր ն է , պ ա շ տ պ ա ն վ ու մ է ք ո լ ո Ր ի ց և յ ու ր ա ք ա ն չ յ ու ր ի ց , ու ն ի ք ա ց ա ր ձ ա կ ք ն ու յ թ :¹²³

Հ Հ ք ա ղ . ո Ր -ը ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի ր ա վ ու ն ք ի ի ր ա վ ա գ ո Ր ու թ յ ու ն ն ե ր ի ց առ ա ջ ի ն ը թ վ ու մ է տ ի ր ա պ ե տ մ ա ն ի ր ա վ ու ն ք ը , ո Ր ը ս ա հ մ ա ն ու մ է ո Ր պ ե ս գ ու յ ք ը փ ա ս տ ա գ ի տ ի ր ա պ ե տ ե լ ու ի ր ա վ ա ք ա ն ո Ր ե ն ա պ ա հ ո վ վ ա ծ հ ն ա ր ա վ ո Ր ու թ յ ու ն : Ա յ ս ս ա հ մ ա ն ու մ ը

¹²² Տ ե ' ս Գրաжданское право: актуальные проблемы теории и практики / Под общ. ред. Б.А. Белова. – М.: Юрайт-Издат, 2007, է ջ 537,

¹²³ Տ ե ' ս *Шершеневич Ш. Ф.* Учебник русского гражданского права. М., 1912, է ջ 152,

տալ ու տրամաբանական հնարը, որով տիրապետում հասկացողությունը բացահայտում է նույն բացահայտիչ բառով, խնդրահարույց է: Թեև իրականում այն սահմանում չէ, այլ բացատրողություն է այն մասին, թե ինչ պետք է հասկանալ օրենքում «տիրապետման իրավունքը» կարգալիս: Մյուս կողմից, սեփականության իրավունքի տարրն իրավագործությունն է, այնինչ օրենքը տալիս է տիրապետման իրավունքի սահմանումը:

Տիրապետելու փաստացի իշխանությունը պետք է առանձնացնել իրավական իշխանությունից, այսինքն՝ տիրապետում-փաստը պետք է առանձնացնել տիրապետում-իրավունքից: Հռոմեական իրավունքում տիրապետումը (*possesio*) սեփականության իրավունքի բովանդակության տարր չէր և սահմանվում էր որպես գույքի նկատմամբ փաստացի իշխանություն:¹²⁴ Լինելով հռոմեական իրավունքի հետևորդը՝ Ֆրանսիական իրավունքը գույքի նկատմամբ փաստացի իշխանությունն անվանում է տիրապետում, իսկ իրավական իշխանությունը՝ սեփականություն: Սա այն հիմնավորմամբ. նախ, տիրապետելու իրավաչափ հնարավորություն ունին ոչ միայն սեփականատերը, այլև նա, ով ունի տիրապետման տիտղոս: Տիրապետումը, ինչպես և օգտագործումը, ձեռք են բերում ինքնուրույն նշանակություն, երբ դրանք իրականացվում են երրորդ անձանց կողմից: Տիտղոսային տիրապետման իրավունք ունեցող երրորդ անձի տիրապետումը չի խախտում սեփականության իրավունքը (Յ. Շապպ):¹²⁵ Տիրապետում-փաստը հակասության մեջ չէ սուբյեկտիվ իրավունքի հասկացության հետ և

¹²⁴ Տե՛ս Римское частное право: Учебник / Под. ред. Проф. И.Б. Новицкого и проф. И.С. Перетерского. – М.: ИКД “Зерцало-М”, 2008, էջ 171,

¹²⁵ Տե՛ս *Wann Я.* Основы гражданского права Германии. М., 1996, էջ 58,

դրանք իրար փոխադարձաբար չեն բացառում: Սեփականատերն ուրիշի տիտղոսային կամ ապօրինի տիրապետման դեպքում էլ համարվում է գոլթի սեփականատեր, իսկ տիրապետման իրավատիրոջ կողմից իր իրավունքի իրականացումը չի կարող դիտել իրավունքի չարաշահում կամ իրավունքը դադարեցնելու նպատակ հետապնդող հանգամանք: Բացի այդ, սեփականատերն էլ ունի գոլթը փաստացի տիրապետելու իրավունք, սակայն գոլթը տիրապետելը, որպես կանոն, չի կարող դիտվել պարտականություն: Երրորդ անձի կողմից գոլթն ապօրինի տիրապետելու դեպքում խախտվում է սեփականատիրոջ տիրապետելու իրավունքը և միշտ չէ, որ այդ տիրապետումը նպատակ ունի ժխտելու սեփականության իրավունքը:

Ի.գ.թ. Վ. Մովսիսյանը, «Տիրապետման ինստիտուտը ՀՀ քաղաքացիական իրավունքում» վերտառություն անդրադառնալով տիրապետման քաղաքացիաիրավական հիմնախնդիրներին, առաջարկել է ՀՀ օրենսդրության շրջանակներում «տիրապետումը դիտել որպես փաստ, կեցություն, և այնուհետև այդ փաստի առկայությունը պայմանավորել որոշակի իրավական հետևանքներ»՝ տիրապետման պաշտպանության ինստիտուտի նորմերը նախատեսելով ՀՀ քաղ. օր-ի առանձին գլխում»¹²⁶: Փաստացի տիրապետումը՝ որպես իրավաբանական փաստ այնպիսի մի վիճակ է, որն ամբողջացնում է որոշակի տնական հանգամանքներ, և որի հետօրենքը կապում է իրավաբանական որոշակի հետևանքների առաջացում, փոփոխում և դադարում: Հայերենում այս երևույթն ավելի ճիշտ բնորոշում է «տիրել» բայը: Փաստացի տիրապետության

¹²⁶ Տե՛ս **Մովսիսյան Վ.** Տիրապետման ինստիտուտը ՀՀ քաղաքացիական իրավունքում: Ատենախոսություններ: 2010,

հարաբերություններին իրավական կարգավորում տալու կարևորությունն կատառումներին ցելնելով՝ տիրապետման պաշտպանության ինստիտուտի նորմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի առանձին գլխով կարգավորելու առաջարկի իրականացումը հնարավոր է օժանդակի իրավակիր առարկայի կայուն դուրս գալ սեփականատիրական խնդիրներին կարգավորման ճգնաժամից:

Իր հերթին սեփականատիրոջ տիրապետման իրավագործությունը տարբերվում է տիրապետման իրավունքից: Քանի որ իրավունքի բաղադրիչն իրավագործությունն է, ուստի սեփականության սուբյեկտիվ իրավունքի բաղադրիչը տիրապետման իրավագործությունն է: Այնինչ, տիտղոսային տիրապետողն ունի գույքն օրինական հիմքով սահմանված տիրապետելու սուբյեկտիվ իրավունք, որն իր բնույթով բացարձակ իրային իրավունք է և օգտվում է այդ իրավունքի պաշտպանության համար նախատեսված բոլոր եղանակներից, այդ թվում՝ սեփականատիրոջ դեմ: Այսպես, օրինակ, վարձակալության պայմանագիրն ուրիշի գույքն օրինական տիրապետելու հիմք է, որով վարձակալը մինչև քաղաքացիաիրավական գործարքով կամ վարչական ակտով սահմանված ժամկետի լրանալն ունի գույքը տիրապետելու իրավունք, այդ թվում՝ գույքը ուրիշի ապօրինի տիրապետումից, այդ թվում նաև՝ սեփականատիրոջից հետ պահանջելու իրավունք: Այստեղ, ուրեմն, անհրաժեշտ է միմյանցից տարբերակել իրավունքն ու իրավագործությունը: Այդ անհրաժեշտությունն ավելի է կարևորվում իրավաբանական անձանց, համայնքներին պետության տիրապետման դեպքում:

Օրենսդիրը չի նախատեսել, թե ինչ եղանակով կարող է իրականացվել գույքի տիրապետումը՝ յուրաքանչյուր դեպքում այդ փաստի գնահատումը

թողնելով իրավակիրառողի վրա (ՅՅ վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/0333/02/12 քաղ. գործով 2014թ. և թիվ ԵԵԴ/0916/02/14 քաղ. գործով 2014թ. որոշումներ): Այդ իսկ պատճառով նախ և առաջ, անհրաժեշտությամբ կատարվող տարբերակելի տիրապետման տարբեր ընկալումները, մասնավորապես, սեփականատիրոջ գույքը տիրապետելու իրավագործությամբ տիրապետման իրային իրավունքից և գույքը տիրելուց՝ փաստացի տիրապետելու իրավաբանական փաստից:

Սեփականատիրոջ հաշորդ իրավունքը գույքի օգտագործման իրավունքն է: Գույքը օգտագործելու և տնօրինելու իրավագործությամբ պետությունն ու համայնքն իրականացնում են յուրահատուկ ձևերով: Ընդ որում՝ այդ մեծապես կախված է հանրային գույքի իրավական ռեժիմից:

Հասարակական օգտագործման համար նախատեսված գույքի տիրապետումն ու օգտագործումը իրականացվում է անմիջականորեն հասարակության կողմից (*res publicae in public usu*): Հասարակական գույքի նկատմամբ յուրաքանչյուրն ունի օգտագործման իրային իրավունք: Հանրային գույքի նկատմամբ համընդհանուր օգտագործման իրավունքի մասին ռուսական իրավագիտությունում կարծիքներն իրարամերժ են: Ա.Վ. Վինիցկին իր «Հանրային սեփականություն» հիմնարար աշխատության մեջ վկայակոչում է մինչև սովետական ժամանակաշրջանի ռուսական և արտասահմանյան հեղինակավոր իրավագետների կարծիքները, որոնք հիմնականում պնդում էին, թե քաղաքացիական իրավագիտությունը չի ճանաչում հանրային գույքի անորոշ թվով անձանց օգտագործման իրավունք և այդ իրավունքը քաղաքացիական իրային իրավունքի և ոչ մի կոնստրուկցիայի տրամաբանության մեջ չի

տեղավորվում¹²⁷ Իրավագետ Մ.Ի. Վասլինայի կարծիքով ընդհանուր բնօգտագործման իրավունքն առհասարակ չի կարող դասվել իրային իրավունքների շարքին, իսկ Մ.Ն.Մալեինան, դասվելով այդ իրավունքի քաղաքացիական իրային իրավունքների շարքին, այն որակել է որպես հանրային սերվիտուտ¹²⁸:

Հանրային գույքն օգտագործելու սուբյեկտիվ իրավունքի հարցը տարբեր լուծումներ է գտել աշխարհում: Ծվեդիայում բնօգտագործման, այսպես կոչված՝ *allemansrätt*-ի իրավունքը սահմանադրական իրավունք է, որը այդ երկրի իրային իրավունքների առանձնահատկությունն է: Չարգացելով հանդուրժողականությամբ սահմանադրական այս իրավունքը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուրին սահմանափակ ձևով օգտվել ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային բաց հողատարածքներից՝ առանց վնասելու բնության բարիքներն ու սեփականատերերի շահերը: Այս ինստիտուտը սուբյեկտիվ իրավունքների խնդիրը չի լուծում, թեպետ գործնականում արդյունավետորեն ապահովում է գույքի թե՛ արդյունավետ օգտագործումը, թե՛ սեփականատերերի շահերը, թե՛ դրապահպանության հարցերը:

Ռոմանովիչի և ընտանիքի երկրներում տրված լուծումն իրավաբանորեն ավելի հիմնավորված է: Հանրային իրավական սերվիտուտը հանրային գույքը սահմանափակ օգտագործելու իրային իրավունք է, որը հասարակության անորոշ թվով անձանց իրավաբանորեն ապահովում է հանրային գույքն օգտագործելու իրավական

¹²⁷ Տե՛ս *Винницкий А.В.* Публичная собственность, М.: Статут, 2013, էջեր 419-422,

¹²⁸ Տե՛ս *Малеина М.Н.* Публичный лесной сервитут // Законы России: опыт, анализ, практика. 2011, № 6, էջեր 30-37,

հնարավորությունը: Մասնավորապես՝ գերմանական
իրավունքում հանրային սերվիտուտը
հնարավորություն է տալիս օգտվել
ճանապարհներից կամ ունենալ իր տեղը եկեղեցում,
որոնք ևս հանրային գույքի տեսակ են:

Այս առումով \$րանսիական և գերմանական
իրավունքին հայտնի վարչական կամ հանրային
իրավական սերվիտուտներն էականորեն
տարբերվում են ազգային իրավունքում
սերվիտուտի ընկալումից: 33 գործող
օրենսդրությունում (de lege data) այն վերաբերվում է
միայն մասնավոր անձանց, բայց ոչ հանրային
իրավական կազմավորումներին պատկանող գույքին:
ՌԴ-ում հանրային սերվիտուտը սահմանվել է
Անտառային օրենսգրքում (21-րդ հոդվ.), Ջրային
օրենսգրքում (43-րդ հոդվ.) և նախատեսում է անորոշ
թվով անձանց օգտագործման իրավունքը հանրային
նշանակությունը մասնավորեցված գույքի
նկատմամբ:

Բանն այն է, որ արտասահմանյան և ազգային
դոկտրինայում այդ իրավունքի իրային լինել-
չլինելն մասին կարծիքներն իրարամերժ են,
այնուամենայնիվ, \$րանսիական և գերմանական
իրավունքին ծանոթ այս ինստիտուտը
հայեցակարգային առումով մասամբ ընդունելի է:
Ճիշտ է՝ այն գործող մեխանիզմ է հանրային
նշանակությունը ինչպես մասնավոր, այնպես էլ
հանրային իրերի, այդ թվում՝ մշակութային և
պատմական նշանակություններ կայացնող իրերի
նկատմամբ հասարակական վերահսկողություն
սահմանելու համար և մասնավորեցված գույքի
սոցիալական գործառնությունների իրականացումն
ապահովվելու համար: Սակայն խնդիրն այն է, որ
հանրային սեփականության իրավունքի կրողը
պետության և համայնքների հանրության

ամբողջությունն է, որի գույքն օգտագործելու
իրավագործությունն իրականացնում է
անմիջականորեն հանրաքվեների կամ իր կողմից
ընտրված մարմինների միջոցով: Երկու դեպքում էլ
հանրային գույքն օգտագործելու
իրավագործությունն իրականացվում է իրավական
գործողություններ իրականացնելու միջոցով`
իրավական ակտ ընդունելու կամ գործարքներ
կնքելու ձևով: Գույքի իրավական ռեժիմը
որոշելու մասին որոշումը հանրային իրավական
կազմավորման գույքն օգտագործելու
իրավագործության օբյեկտիվացումն է:

Հանրային սեփականության իրավունքը պետական
կամ համայնքային հասարակության
յուրաքանչյուր անդամի հանրային գույքի
նկատմամբ իրավաբանական հնարավորության
իրականացման մասնաբաժինների ամբողջությունն
է: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն`
առանց որևէ թույլտվության, գտնվելու պետության
կամ համայնքի սեփականության հանդիսացող`
բոլորի համար բաց հողամասերում և օգտվելու
դրանցում եղած բնական օբյեկտներից`
պահպանելով օրենքով իրավական ակտերով
սահմանված նորմերը (ՀՀ քաղ. օր. 203-րդ հոդվ., 3-րդ մ.):
«Բոլորի համար բաց հողամասեր» օրենքում ի նկատի
ունեն այն հողատարածքները, որոնց մուտքն
արգելող ցուցանակ կամ ցանկապատ նախատեսված չէ:
Հասարակության օգտագործման համար բաց կարող է
լինել նաև մասնավոր գույքը դրա սեփականատիրոջ
ցանկության դեպքում, սակայն դա ամենևին չի
նշանակում, որ սուբյեկտիվ իրային իրավունքը
սահմանափակվել է կամ ծանրաբեռնվել է ուրիշ
գույքից սահմանափակ օգտվելու իրավունքով (*iura in re
aline*):

Ասվածը հստակեցնելու համար անդրադառնանք Կասկադի օրինակին, որը, հանրային հասարակական գույք լինելով, հանձնվել է մասնավոր կազմակերպության վարձակալության իրավունքով: Կասկադը հասարակական սեփականության է, այսինքն՝ գույքը բաց է հասարակական օգտագործման համար: Յայտնի միջադեպից պարզվել էր, որ վարձակալը, հիմնվելով իր իսկ կազմակերպության կանոնադրության վրա, արգելում է Կասկադի տարածքում տեսաձայնագրել առանց իր թույլտվության: ՅՅ քաղաքացիական իրավունքը գույքի նկատմամբ օգտագործման իրային իրավունքներում չի ներառում գույքը նկարահանելու, նկարահանումներ թույլ տալու կամ դրա պատկերը, ստվերապատկերը այլ կերպ օգտագործելու իրավագործությանն ենթարկել: Այդպիսի դրույթ նախատեսելու պարագայում էլ, միևնույն է գույքի հասարակության անմիջական օգտագործմանը հանձնված լինելու հանգամանքը նշանակում է նման արգելքներ սահմանելու անհնարինությունը:¹²⁹ Այս խնդիրները կապված են հանրային սեփականության հարաբերությանն ենթարկարգավորող այնպիսի իրավական նորմերի բացակայության հետ, որոնք կսահմանեին հանրային գույքի բոլոր տեսակներն արդյունավետ, թափանցիկ, նպատակային և գործառնական նշանակությունամբ օգտագործելու և կառավարելու, հանրային գույքը տնօրինելու գործարքների հատուցելիության, հանրային գույքի՝ ըստ իրավական ռեժիմի տարբերակված կառավարելու,

¹²⁹ Եթե անգամ նման արգելքներ հանրավոր լինի ապագայում սահմանել, ապա այդ մասին պետք է լինի ընդհանուր կանոններով հասարակությանը պատշաճ տեղեկացնող ընդհանուր պարտականության, իսկ այդ արգելքները չպետք է բացարձակ կամ անհաղթահարելի լինեն:

հանրային գույքի հավասար հիմունքերով հասանելի ու թյան սկզբունքները:

Վարչական գույքի դեպքում հանրային գույքի անմիջական տիրապետումն իրականացնում են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները կամ նրանց կողմից լիազորված մասնավոր՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր տիրապետում, օգտագործում են համապատասխանաբար պետության և համայնքների անունից: Այս տեղ կարիք է առաջանում տարբերակել տիրապետման և օգտագործման անմիջական և միջնորդավորված տեսակները:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղ. օր-ի 128-րդ հոդվածը հանրային իրավական կազմավորումներին քաղաքացիաիրավական հարաբերություններում հավասարեցնում է իրավաբանական անձանց, ապա անմիջական և միջնորդավորված տիրապետելու ու օգտագործելու հարցերին նախընտրում ենք անդրադառնալ իրավաբանական անձանց օրինակով:

Իրավաբանական անձանց դեպքում իրերի նկատմամբ անմիջական տիրապետման իշխանությունն իրականացնում են իրավաբանական անձի գործադիր մարմինները: Ներգրավվող կապիտալով ընկերությունների, բաժնետիրական ընկերությունների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում ընկերության համար տիրապետումն իրականացնում են դրանց գործերի վարման համար պատասխանատու մարմինները:¹³⁰ Բացի կազմակերպությունների հիմնադիր փաստաթղթերի հիման վրա գույքն անմիջականորեն տիրապետելու

¹³⁰ **Փորձուցեք 3.** Տիրապետման վերաբերյալ կարգավորումներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում // Դատական իշխանություն, 2013, N9 (170), էջ 55,

հնարավորությունն է, անմիջական տիրապետումը կարող է իրականացվել նաև քաղաքացիության գործարքներին միջոցով, երբ պայմանագրային տիրապետողը գույքի անմիջական տիրապետողն է, իսկ սեփականատերը՝ միջնորդավորված: Յանրային գույքի դեպքում ավելանում է գույքի օգտագործման հանձնելու ևս մի հիմք՝ վարչական ակտը:

Յանրային իրավական կազմավորումները պետական կամ համայնքային կազմակերպություններ հիմնադրելիս կարող են փոխանցել նրանց գույք սեփականության իրավունքով և ժամանակավոր օգտագործման և տնօրինման իրավունքով: Գույքն օգտագործման և տնօրինման իրավունքով հանձնելու իրավական հնարավորությունն իրականացվում է ամրացնելու միջոցով, որը միակողմանի գործողությունն է՝ վարչական ակտ է՝ ուղղված գույքային իրավունքների ծագմանը:¹³¹ Յիմնադիրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետվերցնել իր կողմից պետական կառավարչական հիմնարկին հանձնված գույքը, ինչը հակասում է իրավունքի որոշակիությունը սկզբունքին: Մասնավոր իրավունքում գործարքներն իրականացվում են պահպանելով *pacta sunt servanda* սկզբունքը: Բացառություն կազմում են թերևս միայն ֆիդուցիար գործարքները, որոնց շրջանակներում կողմերից մեկը միակողմանիորեն կարող է վաղաժամկետ հրաժարվել գործարքից վստահությունը կորցնելու պատճառաբանությամբ:

Վարչական ակտերն առանց բավարար հիմքի փոփոխելու իրավական հնարավորությունն օրենքով նախատեսված չէ, իսկ վարչական մարմիններին

¹³¹ Վարչական ակտի այս տեսակը հայտնի է գերմանական իրավունքում *widmung* անվանումով:

կողմից հանրային գույքն ամրացնելու հիմքով ծագած հարաբերությունները նման են գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու պարտավորական հարաբերություններին, որոնք, սակայն, չեն ընդգրկում հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրային հարաբերությունները կազմավորող իրավական նորմերով նախատեսված գույքի կառավարման նորա նկատմամբ վերահսկողություն արդյունավետության երաշխիքները: Այս իսկ պատճառով, հարմար ենք գտնում հանրային իրավական կազմակերպությունների կողմից կազմակերպությունների հիմնադրելու դեպքում գույքը փոխանցել ոչ թե սեփականության իրավունքով կամ ամրացնելու միջոցով, այլ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրերի միջոցով: Հակառակ դեպքում անհրաժեշտություն ենք տեսնում վերաշարադրել «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածն այնպես, որպեսզի բացառվի պետական կամ համայնքային մարմինների կողմից հիմնարկներին հանձնված գույքը տնօրինելու հնարավորությունը: Մասնավորապես, հիշատակված օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «հիմնադիրը վարչական ակտին համապատասխան հիմնարկին կարող է հանձնել գույքի օգտագործման կամ տիրապետման ու օգտագործման իրավունքները»:

Հասկանալի է, որ հիմնարկներին ցանկացած գույքը տնօրինելու արգելքի սահմանումը կաթվածահար կանխորանց աշխատանքները, ուստի հետևողականորեն պնդում ենք այդ հարաբերությունները կարգավորել գույքը կառավարման հանձնելու քաղաքացիաիրավական գործարքներով, ինչ հնարավորություն կտա

սեփականատիրոջը վերահսկել գույքի արդյունավետ կառավարումը:

Այսպիսով, հանրային՝ հասարակական գույքի տիրապետումն ու օգտագործումն արտահայտվում է ոչ թե պետական կամ համայնքային հասարակության յուրաքանչյուր անդամի տվյալ գույքի օգտվելու մեջ, այլ ի դեմս կառավարման մարմինների՝ հանրային գույքի սեփականատիրոջ գույքն օգտագործելու, այսինքն՝ գույքի իրավական ռեժիմը որոշելու վերաբերյալ որոշումներ կայացնելու մեջ:

Իրավաբանական գրականության ոլորտում սեփականատիրոջ տնօրինման իրավագործության քաղաքացիաիրավական սահմանումը մեկնաբանվում է այնպես, որ տնօրինման իրավունքի մեջ ներառվում են օգտագործման իրավունքի տարրեր: ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք դասագրքում նշվում է, որ «գույքի ժամանակավոր հատուցելի օգտագործման, այն է՝ վարձակալության հանձնելու հնարավորությունը սեփականատիրոջ տնօրինման իրավագործության բովանդակությանը կազմող տարրերից է»¹³² միաժամանակ ընդգծելով, որ «վարձակալված գույքի օգտագործման իրավունքը վարձակալի հիմնական իրավունքն է»:¹³³ Նման կարծիքին են նաև Յ. Տոլստոյը¹³⁴, Ս. Ժիլինսկին¹³⁵ և այլք:

Վարձատուն, գույքը վարձակալության հանձնելով, փոխանցում է վարձակալին գույքն օգտագործելու կամ տիրապետելու և օգտագործելու իրավունքները: Դրանով իսկ վարձատու -

¹³² Տե՛ս քաղաքացիական իրավունք: Երկրորդ հատոր, էջ 124,

¹³³ Նույն տեղում, 121,

¹³⁴ Гражданское право: Часть. Учебник / Под ред. Ю. К. Толстого, А. П. Сергеева. – М.: Издательство ТЕИС, 2006, էջ 408,

¹³⁵ Տե՛ս *Жилинский С. Э.* Предпринимательское право (правовая основа предпринимательской деятельности): учеб. для вузов, - 8-е изд., пересмотр. И доп., М.: Норма, 2007, էջ 333,

սեփականատերը ոչ թե որոշում է գույքի ճակատագիրը, այլ պարզապես հետապնդում է եկամուտ ստանալու նպատակ: Ըստ քաղ. օր.-ի 163 հոդվածի 1-ին մասի՝ օգտագործման իրավունքը գույքից օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Այս սահմանումը լիարժեք չէ այնքանով, որ չի ընդգծում օգտագործման՝ գույքի ֆիզիկական շահագործման ասպեկտը կամ այլ ձևով շահագործելու հնարավորությունը: Անդրադառնալով հռոմեական իրավունքին՝ նշենք, որ Յիև Յռոմում սեփականատերն ուներ գույքի նկատմամբ *jus utendi* և *jus fruendi* իրավունքները: *Jus utendi*-ին գույքը գործածելու իրավունքն է, իսկ *jus fruendi*-ին՝ գույքից օգտակար հատկությունները քաղելու իրավունքը:¹³⁶ Յետևաբար, գույքը տնտեսական շահագործմամբ օգտագործելու ձևերից է գույքն այլ անձին օգտագործելու և/կամ տիրապետելու հանձնելը:

Գույքի տնօրինում նշանակում է օտարել, գույքից հրաժարվել, գույքը ոչնչացնել, գույքի նպատակային նշանակությունը փոխել, կտակել, միխոսքով, որոշել գույքի իրավաբանական ճակատագիրը: Օգուտի ձև հանդիսացող եկամուտը պետք է հասկանալ նեղ իմաստով, քանի որ գույքի վաճառքից՝ օտարումից էլ հնարավոր է ստանալ եկամուտ, ինչը, սակայն, վաճառքը չի վերածում օգտագործման բնույթի գործարքի: Նախ հիշյալ հոդվածում օրենսդիրը տալիս է սեփականատիրոջ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագործությունները: Այս առումով օրենսգրքի թերություններինց է իրային այդ իրավունքների՝ սեփականության իրավունքի

¹³⁶ Précis de droit romain / par P. Collinet et A. Giffard, 3e éd., Paris, 1930, էջ 209,

շրջանակներին

դուրս

ծավալվող

հարաբերություններին

առանձնահատկություններին կարգավորման բացը: Բացի այդ, օգտագործումը ոչ միշտ է հետապնդում օգուտստանալու նպատակ (օրինակ, անշարժ գույքի անհատույց օգտագործման հանձնելը): Յետևաբար, «եկամուտ», «պտուղ», «աճ», «ծնաճ» և այլ ձևերի օգուտները պետք է հասկանալ բացառապես գույքի օգտակար բնական հատկությունները քաղելու հնարավորություն համատեքստում: Իրականում նման թյուրիմացությունները տեղի է տվել «օգտակար բնական հատկությունները քաղելու» արտահայտությունը: Բնական հատկությունները կարելի է «քաղել» գուցե շարժական իրերի դեպքում, իսկ անշարժ գույքը կարելի է գործածել:

Տնօրինման իրավունքի նման լայն ընկալման պատճառներին մեկնել օգտագործման իրավունքի քաղաքացիական օրենսգրքում տրված թերի սահմանումն է, որն էլ հենց խախտում է այդ իրավագործություններին հավասարակշռությունը: Երբ կառավարումին առանձնացնենք տնօրինում-օտարումը, համայնքային սեփականության կառավարումը բովանդակային առումով ըստ էության կհամապատասխանի մասնավոր սեփականության օգտագործման իրավունքին: Ուստի, գործնական կիրառելիության տեսանկյունից նպատակահարմար ենք գտնում պետական սեփականության տնօրինման և կառավարման հարցերում նման հստակ սահմանազատումներ դնել, ինչպես այդ արված է համայնքային սեփականության դեպքում՝ վերապահելով պետական գույքի տնօրինումը ներկայացուցչական մարմնին:

Հանրային սեփականության իրավունքը, որպես կանոն, անօտարելի է: Հատկապես արգելվում է հասարակական այն գույքի օտարումը, որն

հանձնված է հասարակության օգտագործմանը: Յանքային սեփականության այս հատկանիշը և սահմանափակ է: Գույքը կարող է լինել օտարելի, եթե այն այլևս հանրային նշանակություն չի ներկայացնում: Յանքային գույքի դեպքում «օտարումը» պետք է հասկանալ նեղիմաստով, քան ի որ հանրային իրավական կազմավորումները լիազորված չեն անմիջականորեն, բացի օրենքով հստակ սահմանված դեպքերի, վաճառել, ոչնչացնել կամ նվիրել գույքը: Ուստի և, հանրային սեփականության իրավունքի պարագայում մասնավորեցումն ու օտարումը պետք է տարանջատվեն:

Իսկ ո՞վ կարող է տնօրինել պետական սեփականությունը: ՅՅ Սահմանադրության 33-րդ հիշխանությունը պատկանում է ժողովրդին, որը ժողովուրդն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրության նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (ՅՅ Սահմանադր., 2-րդ հոդվ.):

Ժողովուրդը՝ պետական հասարակությունը, օբյեկտիվորեն չի կարող ինքնուրույն իրականացնել իրեն պատկանող հիշխանությունն ամբողջ ծավալով, ուստի իր լիազորությունների մի մասը պատվիրակում է պետական մարմիններին:¹³⁷ Ժողովրդավարական պետության գործառնության նշանակությունն է ծառայել մարդուն և ժողովրդին՝ հասարակական և պետական գործերը լուծելու համար:¹³⁸ Յետևաբար, հանրային սեփականության հետկապված հարցերը ժողովուրդը

¹³⁷ Տե՛ս Յայաստանի Յանքային Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրության Գ. Յարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր.: «Իրավունք», 2010, էջ 41:
¹³⁸ Նույն տեղում, էջ 41,

և ս կարող է լ ու ծ ե լ ան մ ի ջ ա կ ան ո թ ե ն ՝
ը ն տր ու թ յ ու ն ն եր ի և հ ան ր ա ք վ ե ն եր ի կ ամ ը ն տր վ ա ծ
մ ար մ ի ն ն եր ի մ ի ջ ո գ ո վ : Ժ ո ղ ո վ ը դ ար ա կ ան
պ ե տ ու թ յ ու ն ը ժ ո ղ ո վ ը դ ի ի շ խ ան ու թ յ ան ք ա ղ ա ք ա կ ան
կ ա զ մ ա կ եր պ ու թ յ ու ն ն է , ո թ ն ա պ ա հ ո վ ու մ է
ք ա ղ ա ք ա գ ի ն եր ի հ ա վ ա ս ար մ ա ս ն ա կ գ ու թ յ ու ն ը
պ ե տ ա կ ան և հ ա ս ար ա կ ա կ ան գ ո թ ծ եր ի ն , ա յ դ թ վ ու մ ՝
հ ան ր ա յ ի ն ս ե փ ա կ ան ու թ յ ան կ առ ա վ ար մ ան ը , պ ե տ ա կ ան
հ ի մ ն ա կ ան մ ար մ ի ն ն եր ի գ ո թ ծ ո ղ ու թ յ ան
օ թ ի ն ա կ ան ու թ յ ան ը :

Ռ Ս Ֆ Ս Յ -ի պ ե տ ա կ ան ի ն ք ն ի շ խ ան ու թ յ ան մ ա ս ի ն
12.06.1992 թ վ ա կ ան ի դ ե կ լ ար ա գ ի ա յ ի 8-ր դ կ ե տ ի հ ա մ ա ձ ա յ ն ՝
Ռ ու ս ա ս տ ան ի տ ար ա ծ ք ի փ ո փ ո խ ու թ յ ու ն կ ար ո ղ է տ ե ղ ի
ու ն ե ն ա լ մ ի ա յ ն ժ ո ղ ո վ ը դ ի ՝ հ ան ր ա ք վ ե ն եր ի
մ ի ջ ո գ ո վ կ ամ ա ար տ ա հ ա յ տ մ ան ճ ան ա պ ար հ ո վ : Ե թ ե « Զ Զ
հ ան ր ա ք վ ե ի մ ա ս ի ն » Զ Զ 1991 թ վ ա կ ան ի օ թ ե ն ք ի 4-ր դ
հ ո դ վ ա ծ ի հ ա մ ա ձ ա յ ն ՝ հ ան ր ա ք վ ե ի չ ե ն կ ար ո ղ դ ը վ ե լ
Զ Զ ս ա հ մ ան ն եր ի , ան վ տ ան գ ու թ յ ան , հ ա ս ար ա կ ա կ ան
կ ար գ ի պ ա հ պ ան ու թ յ ան , ք ա ղ ա ք ա գ ի ա կ ան
առ ո ղ ջ ու թ յ ան ու ան վ տ ան գ ու թ յ ան պ ա շ տ պ ան ու թ յ ան
մ ի ջ ո գ առ ու մ ն եր ի , Զ ա յ ա ս տ ան ի կ ո ղ մ ի գ կ ն ք վ ա ծ
մ ի ջ ա զ գ ա յ ի ն պ ա յ մ ան ա գ ը եր ի գ ք խ ո ղ
պ ար տ ա վ ո թ ու թ յ ու ն ն եր ի կ ա տ ար մ ան վ եր ա ք եր յ ա լ
հ ար գ եր , ա պ ա « Զ ան ր ա ք վ ե ի մ ա ս ի ն » 2001թ . Զ Զ գ ո թ ծ ո ղ
օ թ ե ն ք ը ն մ ան վ եր ա պ ա հ ու մ չ ի կ ա տ ար ու մ :

Զ ան ր ա յ ի ն ս ե փ ա կ ան ու թ յ ան առ ա ջ ն ա յ ի ն
ի թ ա վ ա կ ան կ ար գ ա վ ո թ ու մ ը պ ե տ ք է ի թ ա կ ան ա գ վ ի
ք ա թ ծ ը ա գ ու յ ն ն եր կ ա յ ա գ ու ճ չ ա կ ան մ ար մ ն ի ՝
խ ո թ հ ը դ ար ան ի կ ո ղ մ ի գ ը ն դ ու ն վ ո ղ և ն ո թ մ ա տ ի վ
ի թ ա վ ա կ ան ա կ տ եր ի հ ա մ ա կ ար գ ու մ առ ա վ ե լ ք ա թ ծ ը
ի թ ա վ ա ք ան ա կ ան ու ժ ու ն ե գ ո ղ ա կ տ ո վ ՝ օ թ ե ն ք ո վ ¹³⁹: Ա յ ս
գ ա ղ ա փ ար ն ա մ ը ա գ ը վ ա ծ է թ դ ե ու ս \$ թ ան ս ի ա կ ան
Մ ար դ ու և ք ա ղ ա ք ա գ ու ի թ ա վ ու ն ք ն եր ի մ ա ս ի ն 1789թ .
հ ո ջ ա կ ա գ ը ո վ և հ ի մ ն ա վ ո թ ը ու մ է թ ն ը ր ան ո վ , ո թ

¹³⁹Ն ու լ յ ն տ ե ղ ու մ , է ջ եր 43-47,

խորհրդարանը ձևավորվում է համընդհանուր ընտրուկությամբ միջոցով, հետևաբար, ունակ է առավել ճշգրիտ արտացոլել ժողովրդի կամքը:¹⁴⁰ Մնացած դեպքերում, ինչպես արդարացիորեն նշում է Վ. Մազանը, ներկայացուցչական մարմինը հանրային սեփականության օբյեկտների նկատմամբ վերահսկողությունը ոչ միայն պետք է իրականացնի բյուջեի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու միջոցով, այլ նաև անմիջականորեն՝ իրենց գործունեության ընթացքում հանրային շահի պահպանման տեսանկյունից:¹⁴¹ Պետության հանրապետական սկզբունքի համաձայն՝ հանրային սեփականության հիմնական օբյեկտների տնօրինումը պետք է վերապահվի ներկայացուցչական մարմնին: Դեռևս 1998 թվականին Սահմանադրական դատարանը թիվ 92 որոշման մեջ նշել է, որ «օրենքի հիման վրա» ասելով՝ պետք է նկատի ունենալ ոչ թե նորմատիվ իրավական ակտ, որը կարգավորում է անձի սեփականության օտարման կազմակերպական և իրավական գործընթացն ընդհանրապես, այլ օրենք, որով իրականացվում է սեփականության օտարումը:

ՀՀ կառավարությունը չի կարող հասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլի ազորի նման անշարժ գույքի օտարման իրավունք: Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է (ՀՀ Սահմանադր. 180-րդ հոդվ.), իսկ մարդու քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա (74-րդ հոդվ.), սակայն, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ Սահմանադրության 60-րդ

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 45,

¹⁴¹ Տե՛ս *Мазев В.Д.* Публичная собственность в России: Конституционные основы, М.: ОАО Издательский дом Городец, 2004, էջ 225,

հոգվածով նախատեսված սեփականության
 իրավունքի բովանդակությունը միանման
 կիրառելի չէ՝ չհամայնքի, չպետության, չէլ
 առավել ևս պետական ու տեղական ինքնակառավարման
 մարմինների նկատմամբ: Այս հանագամանքը
 ընդունելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքը, ի
 տարբերություն ՀՀ քաղ. օր-ի, որը պետության և
 համայնքների մասնակցությամբ
 քաղաքացիաիրավական որոշ պայմանագրերի համար
 տալիս է հատուկ իրավական կարգավորում, ՀՀ
 Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով
 նախատեսված՝ պետական և տեղական
 ինքնակառավարման մարմինների, պետության կամ
 համայնքների կողմից հիմնադրված հիմնարկների,
 ՀՀ կենտրոնական բանկի, պետական կամ
 համայնքների ոչ առևտրային և պետության կամ
 համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս
 ունեցող կազմակերպությունների կողմից
 ապրանքների, աշխատանքների և ծառայությունների
 ձեռքբերման գործընթացի հետ կապված
 հարաբերությունները, սահմանում այդ
 հարաբերությունների կողմերի հիմնական
 իրավունքներն ու պարտականությունները:

Սեփականատիրոջ լիազորությունների
 բովանդակությունը տարբեր է նաև ըստ իրավական և
 տնտեսական համակարգերի: Եթե հետսովետական
 երկրները չարչարվում էին սեփականության
 իրավունքի լիազորությունների «եռյակի» շուրջ,
 ապա ընդհանուր իրավունքի իրավական
 համակարգում գործում է
 ինստիտուցիոնալիստների կողմից առաջարկված
 տասնմեկ տարրերից բաղկացած «փնջի» տեսությունը:
 Հաշվի առնելով այս և այլ սկզբունքային
 տարբերությունները՝ տարածաշրջանային
 իրավաբանորեն պարտադիր

համաձայնությամբ ներդրում է անհատականության
իրավունքը հնարավոր է եղել ներառել այնտեղ,
որտեղ աշխարհագրական շրջանների իրավական և
սոցիալական ավանդույթներն առավել համահունչ
են¹⁴²:

Ժամանակակից տնտեսագիտության
տեսությունում լայն զարգացում է ստացել
տնտեսական վերլուծության մի ամբողջական
նախնական, որը կոչվում է նոր
ինստիտուցիոնալիզմ: Այդ նախնական առավել
հայտնի տեսություններից է սեփականության
իրավունքի տնտեսագիտական տեսությունը:
Սեփականության իրավունքի տեսության
ակունքներում կանգնած են եղել ամերիկյան
հայտնի տնտեսագետներ, նոբելյան մրցանակի
դափնեկիրներ Ռոբերտ Բոուզը և Արմեն Ալչիանը,
իսկ դրահետագամշակմանը և կիրառմանը ակտիվորեն
մասնակցել են Բարցելը, Դեմետցը, Նորթը, Պոզները և
նրիշները: Այս հեղինակների խոսքերով ասած՝
«համընդհանուր մետատեսությունը»
սեփականության ինստիտուտի կիրառման,
մեկնաբանման և տնտեսական վերլուծության
մեթոդաբանական և ընդհանուր տեսական հիմք է, որի
ենթությունը հետևյալում է:

Նախ և առաջ, իրենց
նստումնասիրություններում նրանք
օգտագործում են ոչ թե «սեփականություն», այլ
«սեփականության իրավունք» հասկացությունը:
Նրանց կարծիքով, ոչ թե ռեսուրսն է
սեփականություն, այլ դրանից բխող իրավունքների
«փունջը» կամ ռեսուրսների օգտագործման
իրավունքի տեսակարար կշիռը: Իսկ իրավունքի
լրիվ «փունջը» կազմված է տասնմեկ տարրերից,

¹⁴² Տե՛ս *Кашаневский В. А.* Нормы международного права и гражданского законодательство России. М.: Междунар. отношения, 2004, էջ 186,

որոնցից կառավարման իրավունքը բովանդակում է այն որոշման ընդունման իրավունքը, թե ով և ինչպես պետք է ապահովի քարիքի օգտագործումը:

Պետական սեփականության իրավունքը նշանակում է, որ «փնջի» ամբողջությանը կամ դրատարրերի տարբեր միավորումների տիրապետում է բացառապես պետությանը: Գործնականում դրամաշմտնում են ոչ միայն վերոհիշյալ տասնմեկ տարրերը, այլև սահմանափակ և հազվադեպ ռեսուրսների գերակշռող զանգվածը: Ըստ որում՝ ինչքան մեծ է այդ իրավունքների շրջանակը, այնքան տնտեսվարման համակարգը հավակնում է հիերարխիկ կոչվելու¹⁴³:

Նման պնդումը տարածելի է նաև իրավունքի այլ օբյեկտների նկատմամբ, ինչպիսիք են բազմաբնակարան շենքեր, ձեռնարկության ներքին հիվանդանոցները, գերեզմանները, բյուջեն, փողը, հողը և այլն: Այսպես, համաձայն ՀՀ քաղ. օր-ի 136-րդ և 138-րդ հոդվածների՝ համընդհանուր սեփականության սեփականատերերից մեկը չի կարող բազմաբնակարան ընդհանուր բաժնային սեփականության իր բաժինն առանձնացնել, քանի որ բնակարանը և դրան կից ընդհանուր բաժնային սեփականության բաժինը հարաբերակցվում են որպես անբաժանելի-պատկանելիք գույք, որտեղ բնակարանի սեփականատիրոջ տեսանկյունից բնակարանը բաժնային սեփականության բաժնի նկատմամբ գլխավոր գույք է, իսկ բաժնային սեփականության տեսանկյունից բնակարանը՝ բազմաբնակարան շենքի անբաժանելի պատկանելիք: Այդ իսկ պատճառով, բնակարանի առևժախի ժամանակ սեփականատիրոջ բաժնային սեփականության բաժինը հետևում է գլխավոր գույքի՝ բնակարանի ճակատագրին:

¹⁴³ Տե՛ս **Գևորգյան Մ. Ա.** Տնտեսագիտության տեսություն (ն.ս.ում նաև ձեռնարկ), Եր., 1997, էջ 47,

Բազմաբնակարան շենքի համընդհանուր բաժնային սեփականության սեփականատիրոջ կարգավիճակ ձեռք բերել հնարավոր է միայն շենքում ցանկացած օրինական ճանապարհով սեփականության իրավունքով բնակարան կամ ոչ բնակելի տարածք ձեռք բերելու շնորհիվ: Սակայն բազմաբնակարան շենքը, ի տարբերություն շինության, չի կարող առանձին օտարվել անգամ շենքի բոլոր սեփականատերերի օտարման համաձայնության առկայության դեպքում: Այն հնարավոր է, եթե յուրաքանչյուրն իր հերթին վաճառի իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակարանը, որի արդյունքում կկատարվի սեփականատերերի անձի փոփոխություն: Եթե անգամ բնակարանների սեփականատերերն իրենց բնակարաններն օտարեն որևէ մեկ անձի և այդ մեկ անձի ձեռքում կենտրոնանան բազմաբնակարան շենքի բոլոր բնակարանները, միևնույն է այս դեպքում շենքը չի վերածվի օտարման ինքնուրույն օբյեկտի:

Բնակարանի և ոչ բնակելի տարածքների սեփականատերերն իրավունք չունեն առանձնացնել և առանձին օտարել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի իրենց բաժինը, ինչպես նաև կատարել շինության նկատմամբ սեփականության իրավունքից առանձին այդ բաժինն ուրիշին օտարման հանգեցնող այլ գործողություններ: Բացի այդ, ի տարբերություն մի շարք երկրների օրենսդրության (օրինակ, Գերմանիայի, Էստոնիայի, Յուլանդիայի¹⁴⁴), բազմաբնակարան շենքի համասեփականատերերը

¹⁴⁴ Տե՛ս «1094 Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրք, 256-րդ հոդ.», «Իրային իրավունքի մասին» Էստոնիայի 1994թ. օրենք, Гражданский кодекс Нидерландов, 1994, Т II, Книга 5, Раздел 9, Гл. 1, 2; *Овчарова А.С.* Товарищества собственников жилья в России и общества собственников в Нидерландах (Vereniging van eigenaars) // Актуальные проблемы государства и права: Сборник научных статей и сообщений студентов, аспирантов и молодых ученых юридических вузов. М.: Статут, 2006. Էջ 96,

գնման նախապատվու թյան իրավունքով արտոնված չեն («Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենք, 5-րդ հոդվ. 4-րդ մ.): ճիշտ է, շինությունների սեփականատերերը տիրապետում, օգտագործում և տնօրինում են դրանք քաղաքացիական իրավունքի դրույթներին համապատասխան, սակայն բազմաբնակարան շենքը՝ որպես շինություն յուրահատուկ տեսակ, տնօրինման գործարքի ինքնուրույն առարկա չի կարող: Բազմաբնակարան շենքը հնարավոր չէ վաճառել, գնել, գրավադրել, վարձակալության կամ այլ ձևի օգտագործման հանձնել և այլն: Բազմաբնակարան շենքը՝ որպես ինքնուրույն օբյեկտ չի կարող հանդես գալ անգամ կապալի պայմանագրի դեպքում, քանի որ այս դեպքում այն հանդես է գալիս ոչ որպես բազմաբնակարան շենք, այլ որպես շինություն կամ շենք:

Բազմաբնակարան շենքը, այսպիսով, հանդես է գալիս սեփականության իրավունքի յուրահատուկ օբյեկտ, որը տիրապետում են բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերը, օգտագործում են բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերը և բնակելի տարածության օգտագործման իրավունքով օժտված անձիք, սակայն գույքի նկատմամբ տնօրինելու իրավագործությանը բացակայում է:

Դեռևս խորհրդային իրավագիտությանում տարածված էր այն տեսակետը, ըստ որի՝ հողի պետական սեփականության իրավունքի բովանդակությանը պետք է համալրել կառավարման իրավագործությամբ:¹⁴⁵ Այսօր իրավաբան-գիտնականների մի շարք աշխատություններում նկատվում է կառավարման

¹⁴⁵ *Иконницкая И. А.* Некоторые теоретические вопросы права государственной собственности на землю // Актуальные проблемы права собственности – Материалы научных чтений памяти профессора С.Н. Братуся (Москва. 25 октября 2006 г.). – М.: ИД “Юриспруденция”, 2007, էջ 61,

իրավագործությունը պետական սեփականության
իրավունքի մեջ ներառելու միտում:¹⁴⁶ ՌԴ հողային
օրենսգրքի 9-րդ և 10-րդ հոդվածներում օրենսդիրը
պետության և ՌԴ սուբյեկտների
լիազորությունների մեջ ներառել կառավարումը:
Սակայն, այն հարցին, թե ի՞նչ է կառավարումը,
օրենսդիրը չի պատասխանել: Հողի պարագայում
պետությունը՝ ի դեմս իր համապատասխան
մարմինների իրականացում է տիրապետման ու
տնօրինման իրավունքը: Ինչ վերաբերում է
օգտագործման իրավունքին, ապա պետությունը
գործնականում այդ իրավագործությունը հանձնում
է այլ անձանց: Գրականության մեջ գերակայում էր
այն տեսակետը, որի համաձայն՝ հողի օգտագործման
իրավագործությունն իրականացվում է
տարբերակված հողային ռեստայի բյուջե գանձման
ճանապարհով, երբ այդ ռեստան ստացվում է
հողօգտագործման ընթացքում:¹⁴⁷

Պետությունը՝ որպես հողամասի սեփականատեր
իրավունք ունի միայն ստանալու իրեն
սեփականության իրավունքով պատկանող
վարձակալության հանձնված հողամասերի համար
վճարվելիք վարձակալության գումարը: Եթե տե
պետական մարմինները ևս կարող են օգտագործել
պետական հողամասերը, սակայն այս դեպքում նրանք
հանդես չեն գալիս որպես սեփականատեր: ՀՀ
քաղաքացիական օրենսգրքի 164-րդ հոդվածի
համաձայն՝ սեփականատերը կրում է իրեն պատկանող
գույքի պահպանման հոգսը, եթե այլ բան
նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Հանրային սեփականության կառավարման
սուբյեկտները պարտավոր են ոչ միայն օգտագործել
կամ վերահսկել այլ անձանց կողմից գույքի

¹⁴⁶ Земельное право. Учебник / отв. ред. Г.Е. Быстров и Р.К. Гусев. М.: «Проспект», 2006, էջեր 153-156,

¹⁴⁷ *Похорова Н. А.* Право государственной собственности на землю. Автореф. дисс. канд. юр. наук. М, 2006, էջ 14,

օգտագործումը, այնպես որ սեփականություն
իրավունքն իրականացվի գույքի գործառնական և
նպատակային նշանակությունամբ, այլ որ նման
կառավարումը նպաստի երկրի կամ համայնքի
տնտեսական զարգացմանը՝ սոցիալ և տնտեսական
գործունեությունը հաշվանցելով: Քաղաքացիաիրավական
կամ ճյուղային նման կարգավորման կարիքը ՀՀ
օրենսդրությունը զգուշ է, հատկապես այն
պայմաններում, երբ հանրային իրավական
կազմավորումներին քաղաքացիական
իրավունականությունը սահմանվել է ՀՀ
քաղաքացիական օրենսգրքով:

Ամեն դեպքում, հանրային սեփականություն
իրավունքը ավելի է ծանրաբեռնված սոցիալական
գործառնություններով, քան մասնավոր սեփականություն
իրավունքը, ուստի, հանրային սեփականատիրոջ
քաղաքացիաիրավական իրավունքներն
իրականացնելու հայեցողական սահմանները
զգալիորեն ներդրում են:

Աշխարհի բոլոր երկրներում, գրեթե առանց
բացառություն, հանրային գույքի կառավարումը
դարձել է տնտեսության պետական կարգավորման
հիմնական ուղղություններինց մեկը: Չարգացած
երկրներում, որտեղ թեև հանրային սեփականություն
բաժինը մեծ է, այդ սեփականություն կառավարմանն
առանձնահատուկ ուշադրություն է դարձվում: Այդ
խնդիրներին անդրադառնում է նոբելյան
մրցանակակիր Ջ. Ստիգլիցը՝ իմաստավորելով
պետության քաղաքականությունը և պետական
ձեռնարկատիրությունը շուկայական
տնտեսությունն ունեցող երկրներում, Վ.Օյքենը՝ իր
ազգային տնտեսության զարգացման տեսությունը:¹⁴⁸

¹⁴⁸ Տե՛ս մանրամասն **Փևոթյան Մ. Ա.** Տնտեսագիտություն
տնտեսություն (ուսումնական ձեռնարկ), Եր., 1997,

Պետական գույքի կառավարման առաջնահերթ խնդիրներին ցենսուրային պետական գույքի սեփականության կառուցվածքի և կազմի հստակեցումը, հաշվառումը, պետական սեփականության օգտագործման նպատակներին և խնդիրներին, գործունեության սկզբունքներին սահմանումը: Պետական սեփականությունը հանդիսացող գույքի կառավարման արդի վիճակի դիտարկումը տպավորություն է ստեղծում, որ այն դեռևս պատշաճ մակարդակով չի իրականացվում: Պետական սեփականությունից ստացվող հատույցը չի համապատասխանում ներդրված գույքի ծավալին և կառուցվածքին: Նման իրավիճակը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում (իսկ պետական սեփականության մեծ մասը ներդրված է բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալներում) պետության լիազոր ներկայացուցիչների ինստիտուտն ըստ էության գոյություն ունեցող կարգավորման միջոցներով իրեն չի արդարացնում: Արմատական վերանայման կարիք ունեն պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություններում կորպորատիվ կառավարման մեխանիզմները, որոշումների ընդունման և պատասխանատվության ընթացակարգերը, ինչպես նաև արժեթղթերի երկրորդային շուկայի հնարավորություններին օգտագործման հիմնահարցերը:¹⁴⁹

Պետական գույքի կառավարման առաջնահերթ խնդիրներին ցենսուրային պետական

¹⁴⁹ Տե՛ս **Դավոյան Ս.** Պետական սեփականության կառավարում. մեթոդաբանական և ինստիտուցիոնալ հիմքեր, Եր., Տիգրան ՄԵԾ, 2003, **Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է.** Պետությունը և ձեռնարկատիրությունը.- Եր.: 2 անգակ -97, 2005,

գ ու յ ք ի /ս ե փ ա կ ան ու թ յ ան կ առ ու ց վ ա ծ ք ի և կ ազ մ ի
հ ս տ ա կ ե ց ու մ ը , պ ե տ ա կ ան ս ե փ ա կ ան ու թ յ ան
օ գ տ ա գ ո թ մ ա ն ն պ ա տ ա կ ն ե թ ի և խ ն դ ի թ ն ե թ ի ,
գ ո թ ու ն ե ու թ յ ան ս կ զ բ ու ն ք ն ե թ ի ս ա հ մ ա ն ու մ ը : Ա յ դ
ն պ ա տ ա կ ն ե թ ի ի թ ա գ ո թ մ ա ն ճ ա ն ա պ ա թ հ ի ն հ թ ա տ ա պ Է
դ ա թ ձ ե լ առ ա ն ձ ի ն տ ն տ ե ս ա գ ի տ ա կ ան , ա յ ն Է ` պ ե տ ա կ ան
ս ե փ ա կ ան ու թ յ ու ն հ ա ն դ ի ս ա գ ո ղ բ ա ժ ն ե մ ա ս ի և դ թ ա
կ առ ա վ ա թ մ ա ն ար դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ան գ ն ա հ ա տ ու մ ը ,
պ ե տ ա կ ան գ ու յ ք ի հ ե տ ա գ ա տ ի թ ա պ ե տ մ ա ն ,
օ գ տ ա գ ո թ մ ա ն և տ ն օ թ ի ն մ ա ն ար դ յ ու ն ա վ ե տ
ու ղ ղ ու թ յ ու ն ն ե թ ի հ ս տ ա կ ե ց ու մ ը , պ ե տ ու թ յ ան
լ ի ա գ ո թ ն ե թ կ ա յ ա գ ու ց ի չ ն ե թ ի կ ո ղ մ ի ց
ո թ ո շ ու մ ն ե թ ի կ ա յ ա գ մ ա ն և հ ի մ ն ա դ թ ի հ ե տ
հ ա մ ա ձ ա յ ն ե ց մ ա ն , ն թ ա ն ց ա շ խ ա տ ա ն ք ի գ ն ա հ ա տ մ ա ն և
վ ճ ա թ մ ա ն , պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ու թ յ ան չ ա փ ի և ձ ն ե թ ի ,
կ առ ա վ ա թ մ ա ն ար դ յ ու ն ա վ ե տ ե ղ ա ն ա կ ն ե թ ի ո թ ո ն մ ա ն
ու կ ի թ առ մ ա ն և մ ե թ ո դ ա բ ա ն ա կ ան բ ն ու յ թ ի ա յ լ
հ ի մ ն ա հ ա թ ց ե թ ի մ շ ա կ մ ա ն ը ն վ ի թ վ ա ծ
ու ս ու մ ն ա ս ի թ ու թ յ ան ա ն հ թ ա ժ ե շ տ ու թ յ ու ն ը :

Յ ա յ ա ս տ ա ն ի Յ ա ն թ ա պ ե տ ու թ յ ու ն ու մ պ ե տ ա կ ան
գ ու յ ք ի կ առ ա վ ա թ ու մ ը վ ե թ ա պ ա հ վ ա ծ Է Յ Յ
կ առ ա վ ա թ ու թ յ ան ը (Յ Յ Ս ա հ մ ա ն ա դ թ . 154-ր դ հ ո դ վ .): Ը ն դ
ո թ ու մ ` հ ո դ վ ա ծ ն ի թ ա վ ու ն ք Է վ ե թ ա պ ա հ ու մ Յ Յ
կ առ ա վ ա թ ու թ յ ան ը կ առ ա վ ա թ ե լ ու բ ա ց առ ա պ ե ս
պ ե տ ա կ ան ս ե փ ա կ ան ու թ յ ու ն ը : Ա ն ձ ա ն ց կ ա մ տ ե ղ ա կ ան
ի ն ք ն ա կ առ ա վ ա թ մ ա ն մ ա թ մ ի ն ն ե թ ի ս ե փ ա կ ան ու թ յ ան
կ առ ա վ ա թ ու մ ը ո թ պ ե ս գ ո թ ձ առ ու յ թ օ թ ե ն ք ո վ չ ի
կ ա թ ո ղ ը ն դ գ թ կ վ ե լ ա յ դ ի թ ա վ ու ն ք ի ի թ ա ց մ ա ն մ ե ջ (Յ Յ
Ս Դ թ ի վ Ս Դ Ո -1142 գ ո թ ձ ո վ 2014 թ վ ա կ ան ի ա պ թ ի լ ի 2-ի
ո թ ո շ ու մ):

Ի ° ն չ Է ն շ ա ն ա կ ու մ գ ու յ ք ի կ առ ա վ ա թ ու մ : Ն ա խ ,
տ ն տ ե ս ա կ ան հ ա մ ա կ ա թ գ ի ց կ ա խ վ ա ծ կ առ ա վ ա թ ու մ ն
ու ն ի փ ո փ ո խ ա կ ան դ թ ս ն ո թ ու մ : Ա յ դ հ ա ն գ ա մ ա ն ք ը
գ գ ա լ ի ո թ ե ն ար տ ա հ ա յ տ վ ու մ Է կ առ ա վ ա թ ու մ և
ղ ե կ ա վ ա թ ու մ հ ա ս կ ա ց ու թ յ ու ն ն ե թ ի

փոխհարաբերակցության մեջ: Պլանային տնտեսությունում կառավարումը ղեկավարման տեսակ էր, իսկ շուկայական տնտեսությունում կառավարումն ավելի լայն հասկացություն է և իր բնույթով ձեռնարկատիրական գործունեություն է:¹⁵⁰ Երկրորդ՝ Սահմանադրության և քաղաքացիական օրենսդրության համեմատական վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ կառավարման բառի իմաստային ծանրաբեռնվածությունը քաղաքացիական իրավունքում տարբերվում է սահմանադրական բովանդակությունից:

Կառավարման սահմանադրական բովանդակությունը թույլ է տալիս բացահայտել ՀՀ Սահմանադրության 9-րդ գլխում պարունակող համայնքային սեփականության հարաբերությունները կարգավորող նորմերի միջոցով: ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածը, ամրագրելով այն, որ սեփականությանը կառավարելու և տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու և համայնքի պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունները համայնքն իրականացնում է որպես սեփական լիազորություններ, թվարկում է հանրային սեփականության երկու իրավազորությունները՝ տարանջատելով կառավարումը տնօրինումից: Իսկ քանի որ ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածը սահմանում է, որ համայնքային սեփականության տնօրինումը՝ որպես համայնքի ավագանու՝ իրավաստեղծ մարմնի լիազորություն, ուստի դրա կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը: ՀՀ վերահսկիչ պալատը, լինելով խորհրդարանական վերահսկողություն ու բյուջեկտ, վերահսկողություն

¹⁵⁰ Տե՛ս **Տնտեսական Լ.Ճ.** Գոլյաբի հավատարմագրային կառավարման պայմանագիր, Եր., 2007, էջ 8,

Ե իրականացնում բյուջետային միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական ու համայնքային սեփականություն օգտագործման նկատմամբ: Հետևաբար, հաշվեքննիչ պալատի (նախկինում՝ վերահսկիչ պալատի) վերահսկողություն օբյեկտ են պետական և համայնքային սեփականություն օգտագործումը (ՀՀ Սահմանադր. 198-րդ հոդվ., 1-ին մ.):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքային սեփականությունն օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքը և համայնքային սեփականության օտարման լիազորությունը համայնքի ավագանու բացարձակ լիազորությունն է: Հետևաբար, համայնքային սեփականության տնօրինումը կառավարման եղանակ է, իսկ քաղաքացիաիրավական իմաստով գույքը տնօրինելու իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահոված հնարավորությունն է:

ՀՀ Սահմանադրությունում կառավարման գործառնություն իրականացնելու համար կառավարությունը շնորհել են բավականին լայն իրավագործություններով: ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ և ժամանակին կատարելու պարտականություններն իրականացնելու համար ՀՀ կառավարությունը չպետք է գործի իր հայեցողությամբ, այլ պետք է իրացնի օրենսդրի կողմից իրեն ընձեռնված իրավունքներն այնպես, որպեսզի իրականացվի օրենսդրական հիմնական այն նպատակը, որի համար օրենսդիրը տրամադրել է նրան այդ իրավունքները: Եվ առհասարակ, վարչական մարմինների համար չի գործում պոզիտիվ իրավունքի դրոյթը:

Անհրաժեշտ է հանրային սեփականության կառավարման և տնօրինման իրավագործությունները

հստակ սահմանազատվել ոչ միայն սահմանադրական նորմերով, այլ ճյուղային իրավական, մասնավորապես, քաղաքացիաիրավական նորմերով:

Քաղաքացիական օրենսդրությունում «կառավարում» եզրն օգտագործվում է իրավաբանական անձանց կառավարում, խնամակալ ի գոյքի կառավարում (39-րդ հոդվ.), ժառանգություն կառավարում (1239-րդ հոդվ.) հավատարմագրային կառավարման պայմանագրի հարաբերությունները կարգավորող նորմերում: ԶԶ քաղ. օր-ը հատուկ ընդգծում է, որ հավատարմագրային կառավարումը չի նշանակում սեփականության իրավունքի փոխանցում, իսկ գոյքի կառավարումն իրականացվում է ի շահ սեփականատիրոջ: Ավելին, անգամ գրավի, վարձակալության (627-րդ հոդվ.) և հավատարմագրային կառավարման պայմանագրերի շրջանակում գոյքի ներավոր կորուստ-օտարումը չի վերածում այդ պայմանագրերն օտարման՝ ո՛չ առուծախի, ո՛չ խառը պայմանագրերի:¹⁵¹

ԶԶ քաղաքացիական օրենսդրության դրույթների համաձայն՝ սեփականության կառավարումը ենթադրում է սուբյեկտի՝ օրենքով և իրավական ակտերով ճանաչված և պահպանվող իրավունքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գոյքը կամ հանձնելու հավատարմագրային կառավարման (163-րդ հոդվ., 1-ին, 3-րդ մմ.): Եթե ավելի հստակ՝ քաղաքացիաիրավական իմաստով կառավարումը սեփականատիրոջ լիազորություններին այն ծավալն է, որը փոխանցվում, վստահվում կամ վերապահվում է երրորդ անձի, որը և այդ լիազորությունները պետք է իրականացնի ի շահ սեփականատիրոջ: Առաջին հայացքից ԶԶ Սահմանադրության մեջ կառավարումը

¹⁵¹ Տե՛ս **Ղարախանյան Գ.** Վարձակալության պայմանագիր // ԶԶ քաղաքացիական իրավունք, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 122,

հանդես է գալիս որպես պետական և համայնքային սեփականության լիազորություններին ցմեկը: Մինչդեռ, եթե հաշվի առնենք, որ հանրային սեփականությունը ժողովրդինն է, իսկ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրություններին, հանրաքվեներին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությունամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (ՀՀ Սահմանադր. 2-րդ հոդվ.), ապա հանրային սեփականության կառավարումը սեփականատիրոջ անունինց հանդես եկող կառավարություն ան գործառույթն է, որն, ի դեպ, չի ներառում իր մեջ տնօրինելու իրավազորությունը:

Սեփականության իրավունքի կորիֆեյ Ա.Վենեդիկովը պետական սեփականության կառավարումը դիտում էր որպես սեփականության իրավունքի կազմի մեջ չմտնող և առանձին մի իրավունք, որը գույքի նկատմամբ բոլոր իրավունքների և պարտականությունների հանրագումար է:¹⁵² Ս. Քրմոյանի կարծիքով անհրաժեշտ է ՀՀ կառավարության պետական գույքը կառավարելու իրավազորության մեջ ներառել վերահսկողության իրավազորությունը կամ ամրագրել կառավարման տերմինի այնպիսի հասկացությունը, որի մեջ ներառված լինի վերահսկողության իրավազորությունը:¹⁵³

«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքն օրինական ուժի մեջ 2014 թվականի նոյեմբերի 20-ին¹⁵⁴: Օրենքում կարգավորվում են ինչպես պետական գույքի կառավարման, այնպես էլ օգտագործման ու օտարման հարցերը: Ընդ որում՝ օրենքի 4-րդ

¹⁵² Մեջբերումն ըստ **Քրմոյան Ս.** Սեփականության իրավունքի սահմանադրական հիմունքները: Ատենախոսություն, 2002, էջ 127,

¹⁵³ **Քրմոյան Ս.Կ.** Սեփականության իրավունքի սահմանադրական հիմունքները: Ատենախոսություն, 2002, էջ 125,

¹⁵⁴ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=28731> (01.09.2014),

հոդվածում, որում տրվել են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, պետական գույքի օտարումն առանձնացվում է պետական գույքի մասնավորեցումից: ԶԶ քաղ.օր-ի 279-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պետական սեփականությանը պատկանող գույքն օտարվում է քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ մասնավորեցման (ապապետականացման) մասին օրենքներով սահմանված կարգով: Այս կանոնի համար օրենսգիրքը բացառություններ չի սահմանում, ուստի պետական գույքի ֆիզիկական և իրավաբանական անձանց օտարելն այլ կարգով, քան սահմանված է մասնավորեցման մասին օրենքում, կհակասի ԶԶ քաղ. օր-ի 279-րդ հոդվածին և կխախտի հանրային սեփականության իրավունքը: Այդ խախտումը հատկապես էական է, քանի որ պետական գույքի օտարումն շեղվելով, օրենքը չի հստակեցնում, որ այն կարող է լինել արդյոք անհատուցելի:

Քննարկվող օրենքի 4-րդ հոդվածը նաև նախատեսում է «պետական գույքի լիազորված մարմին» հասկացությունը, որի ներքո առաջարկվում է հասկանալ «պետական գույքի կառավարման քաղաքականությունը մշակող և իրականացնող, պետական գույքային հարաբերություններին կանոնակարգման լիազորություններ ունեցող ԶԶ կառավարության կողմից լիազորված մարմին»: Այն հայտ է, որ օրենքն ի նկատի ունի ԶԶ կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչությանը: Սակայն օրենքի նույն հոդվածով «պետական գույքային հարաբերություններ» բառակապակցությունում խտացվել է «պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման հետ կապված հարաբերությունները»: Արդյունքում, ստացվում է, որ ԶԶ պետական գույքի կառավարման

վարչությունը ՀՀ կառավարության՝ պետական գույքի տնօրինելու լիազորություն չունեցող մարմնի կողմից լիազորված մարմինն է: Այն ժամանակ, երբ խնդրո առարկա օրենքի նախագիծը քննարկվում էր օրենսդիր մարմնում, ՀՀ ԱԺ աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից 23.10.2012 թվականին տրված եզրակացության մեջ հատուկ անդրադարձ էր կատարվել այս հարցին: Եզրակացության մեջ, մասնավորապես, նշվում էր, որ օրենքը վերնագրվել էր որպես «պետական գույքի կառավարման մասին», այնինչ այն պարունակում է նաև գույքը տնօրինելու հարաբերությունները կարգավորող իրավական նորմեր: ՀՀ ԱԺ աշխատակազմի իրավաբանական վարչությունն առաջարկել է կամ նախագիծը խմբագրել՝ տեքստից հանելով պետական գույքի օտարման հետ կապված բոլոր նորմերը, կամ օրենքի նախագծի բովանդակությունը համապատասխանեցնել վերնագրին: Այն պայմաններում, երբ ՀՀ կառավարությունը Սահմանադրությամբ լիազորված է պետական գույքը կառավարելու և կառավարումը չի ներառում իր մեջ գույքի տնօրինումը, իսկ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքը նախատեսում է պետական գույքի օտարման հարաբերությունները, առաջարկում ենք հիմնովին վերանայել օրենքի տեքստը՝ բացառելով պետական գույքը տնօրինելու հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսդրության համակարգային վերլուծությունը հնարավորություն տալիս պարզել, որ քաղաքացիական իրավունքում «տիրապետում» եզրն օգտագործվում է երեք իմաստներով՝ տիրապետումը՝ որպես սեփականատիրոջ գույքը տիրապետելու

իրավագործություն, որպես տիրապետման տիրոջնուսային իրային իրավունք և գույքը փաստացի տիրապետելու իրավաբանական փաստ: Գույքը փաստացի տնտեսական իշխանությունները պահելու երևույթը հայերենում ավելի համարժեք արտահայտում է «տիրել» բայը, որի համար օրենսդրական փոփոխություններ իրականացնելու դեպքում տիրապետման տարբեր տեսակներն ընդունելու պարագայում առաջարկում են տիրապետում փաստը բնորոշել այլ տերմինով: Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում սեփականատիրոջ գույքն օգտագործելու իրավունքի սահմանման մեջ «գույքի տնտեսական շահագործումը» արտահայտության բացակայության պատճառով վարձակալության հանձնելը իրավագիտության մեջ հաճախ դիտվում է որպես սեփականատիրոջ տնօրինման իրավագործության իրականացման ձև: Որպես հետևանք, գույքի տնօրինելու իրավագործությունը հնարավոր չէր լինի սահմանել որպես գույքի իրավական ճակատագիրը որոշելու հնարավորություն: Օգտագործման իրավունքի գույքի օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն սահմանելով՝ օրենսդիրն անհարկի ներդրվել է օգտագործելու իրավունքի բովանդակությունը:

ՀՀ սահմանադրական և քաղաքացիական իրավունքի նորմերի վերլուծության արդյունքում եզրահանգել ենք, որ հանրային գույքի պարագայում գույքի կառավարման իրավագործությունը տնօրինման իրավագործությունից ինքնուրույն իրավագործություն է, որը բովանդակում է հանրային գույքն օգտագործելու և դրան կատմամբ վերահսկողություն սահմանելու

հնարավորությունը: Հանրային գույքի
օգտագործումը դրսևորվում է գույքի առանձին
իրավական ռեժիմներ սահմանելով և որոշումներ
կայացնելով: Նշանակում է՝ հասարակության
գույքի հասարակության ադամների անմիջական
օգտագործումը ոչ թե հասարակության անդամի
հանրային գույքն օգտագործելու
իրավագործության իրականացնելու ձև է, այլ
հասարակության անդամների գույքն
օգտագործելու սահմանափակ իրային իրավունք:

Հանրային սեփականության տիրապետումն ու
օգտագործումն իրականացվում է անմիջականորեն
պետականորեն միավորված ժողովրդի կողմից կամ
սահմանադրությամբ կամ օրենքով լիազորված
պետական կամ համայնքային մարմինների կողմից,
տնօրինվում է ժողովրդի կողմից հանրաքվեի
միջոցով կամ նրա ներկայացուցչական մարմնի
կողմից ընդունված օրենքի հիման վրա: Բացի այդ,
պետական գույքի կառավարումը չի ներառում
տնօրինման լիազորությունը, այլ ենթադրում է
գույքի օգտագործման իրավագործության
իրականացումն դրան կատմամբ վերահսկողություն:

Հանրային իրավական կազմավորումները
պետական կամ համայնքային
կազմակերպություններ հիմնադրելիս կարող են
փոխանցել նրանց գույք սեփականության
իրավունքով և՛ ժամանակավոր օգտագործման, և՛
տնօրինման իրավունքով: Գույքն օգտագործման և
տնօրինման իրավունքով հանձնվում է ամրացնելու
միջոցով, որը միակողմանի գործողությունն՝
վարչական ակտ է՝ ուղղված գույքային
իրավունքերի ծագմանը: Կազմակերպություններին
ամրացնելու դեպքում հիմնադիրն իրավունք ունի
ցանկացած ժամանակ հետ վերցնել իր կողմից
հանձնված գույքը, ինչն առերևույթ չի

համապատասխանում իրավական որոշակիություն
 սկզբունքին: Բացի այդ, հանրային իրավունքի
 օգտագործման հետ հարաբերությունները
 կարգավորվում են մասնավոր իրավունքի նորմերով:
 Ի տարբերություն վարչական իրավունքի՝
 մասնավոր իրավունքում իրավական
 որոշակիության սկզբունքից բացառություն է
 նախատեսվում վստահության հիման վրա ձևավորված
 հարաբերություններին դեպքում:
 Կազմակերպություններին ամրացած գույքի
 օպերատիվ պաշտպանություն ապահովելու համար
 անհրաժեշտ մեխանիզմ գոյություն ունի մասնավոր
 իրավունքում, երբ դրանք հիմնված են
 վստահության վրա: Այդպիսի գործարք է գույքի
 հավատարմագրային կառավարման պայմանագիրը:

Այսպիսով, հանրային գույքի տիրապետումն ու
 օգտագործումն իրականացնում են հասարակության
 անդամներն ու ղղակիրներն՝ կամ անուղղակիորեն՝
 հանրային իշխանության մարմիններին միջոցով:
 Օրենսդիրը չի սահմանել տիրապետման և
 օգտագործման առանձնահատկությունները
 հանրային իրավական կազմավորումների դեպքում,
 մինչդեռ այդ առանձնահատկություններն
 օբյեկտիվորեն գոյություն ունեն: Ելնելով վերը
 թվարկված եզրահանգումներից՝ առաջարկում ենք
 հստակեցնել սեփականատիրոջ գույքը
 տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու
 իրավագործություններին օրենսդրական
 բովանդակությունները և առանջնացնել
 կառարաման իրավագործությունը: Մասնավորապես՝

- տարբերակել «տիրապետման» հետևյալ տեսակները՝ «տիրապետումը»՝ որպես սեփականատիրոջ գույքը տիրապետելու իրավագործություն, որպես տիրապետման

տի տղ ու սայ ի ն ի ր այ ի ն ի ր ավ ու ւ ն ք և ո ր պ ե ս գ ու յ ք ը
փաս տաց ի տի ր ապ ե տե լ ու ի ր ավ աբ ան ակ ան փաս տ.

•գ ու յ ք ն օ գ տ ա գ ո թ ծ ե լ ու ի ր ավ ու ւ ն ք ի
ս ա հ մ ա ն ու մ ը լ ր ա գ ն ե լ «գ ու յ ք ի տ ն տ ե ս ակ ան
շ ա հ ա գ ո թ ծ ու մ ը » ար տ ա հ այ տ ու թ յ ա մ բ `
ը ն դ լ ա յ ն ե լ ո վ օ գ տ ա գ ո թ մ ա ն ի ր ավ ու ւ ն ք ի
բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ը .

•հ ա ն ր այ ի ն գ ու յ ք ի պ ար ա գ այ ու մ գ ու յ ք ի
կ առ ա վ ար ու մ ը տ ն օ թ ի ն ե լ ու գ ի ն ք ն ու ը ը յ ն
ի ր ավ ա գ ո թ ու թ յ ու ն է , ո թ ը բ ո վ ա ն դ ա կ ու մ է
հ ա ն ր այ ի ն գ ու յ ք ն օ գ տ ա գ ո թ ծ ե լ ու և դ ր ա ն կ ա տ մ ա մ բ
վ ե ր ա հ ս կ ո ղ ու թ յ ու ն ս ա հ մ ա ն ե լ ու
հ ն ար ավ ո թ ու թ յ ու ն ը :

**ԳԼՈՒԽ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

**3.1. Հանրային սեփականության իրավունքի
ձեռքբերման հիմքերի
առանձնահատկությունները**

Հանրային սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի շարքին են դասվում ինչպես ֆինանսական, և հանրային իրավական նորմեր սահմանող իրավական ակտերով, այնպես էլ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված հիմքերը: Դրանք նախատեսվում են ՀՀ քաղ. օր-ի 17-րդ գլուխում և գործում են անկախ սեփականության իրավունքի ձևից: Քաղաքացիական իրավունքում հանրային սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել միևնույն հիմքերով, ինչ մասնավոր սեփականության իրավունքը, այսինքն՝ սեփականության իրավունքի ձեռքբերման քաղաքացիաիրավական ընդհանուր հիմքերը կիրառելի են հանրային սեփականության իրավունքի նկատմամբ՝ հաշվի առնելով հանրային իրավական կազմավորումների առանձնահատկությունները: Որոշ դեպքերում էլ հանրային սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքը մասնավոր սեփականության դադարման հիմք է, ինչպես, օրինակ, ռեկվիզիցիան, բռնագրավումը, պարտավորությունների համար գույքի վրա բռնագանձում տարածելը և այլն: Այս է պատճառը, որ ՀՀ քաղ. օր-ի 279-րդ հոդվածում սահմանված հիմքերից որոշները հանրային սեփականության ձեռքբերման հիմքեր են, որոշները՝ միաժամանակ և՛ ձեռքբերման, և՛ դադարման, իսկ մնացածն էլ առհասարակ, ո՛չ ձեռքբերման, ո՛չ էլ դադարման հիմք են:

Անդրադառնանք հանրային սեփականության իրավունքի ծագման քաղաքացիաիրավական այն հիմքերին, որոնք առանձնապես կարևորվում են, պրակտիկայում հանդիպում են ավելի հաճախ և իրավագիտության մեջ առավել խնդրահարույց են:

Հանրային սեփականության իրավունքի ձեռքբերման կարևոր հիմքերից է գույքի ազգայնացումը: Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությանը պատկանող գույքի պետականացումը (ազգայնացումը) կատարվում է օրենքի հիման վրա՝ այդ գույքի արժեքի ու մյուս վնասների հատուցմամբ:

Գույքի ազգայնացումը հնարավոր է հասարակության և պետության շահի համար մասնավոր գույքը հարկադիր օտարելու միջոցով: Արտասահամանյան երկրներում և միջազգային իրավական փաստաթղթերում այս երևույթը հայտնի է «էքսպրոպրիացիա» անվանումով: «Ներդրումները երաշխավորող բազմակողմ գործակալության հիմնադրման մասին» Սեուլյան կոնվենցիայով էքսպրոպրիացիա է ցանկացած օրենսդրական կամ վարչական գործողություն կամ անգործություն, որի արդյունքում երաշխիքներ տիրապետողը զրկվում է իր ներդրման նկատմամբ սեփականության իրավունքից, դրան կատմամբ վերահսկողությունից կամ այդ ներդրման հիմնական օգուտներից, բացառությամբ այն միջոցառումների, որոնք իրականացնում է պետությունը տնտեսական գործունեությունն իր տարածքում կարգավորելու համար:¹⁵⁵ Հանրային գերակա շահն այն փաստական հիմքն է, որի գոյանալու դեպքում հանրային իշխանությունների նախաձեռնությամբ մասնավոր

¹⁵⁵ Տե՛ս **Կարապետյան Ն. Ա.** Սեփականության անձեռմխելիության սկզբունքը քաղաքացիական իրավունքում, ատենախոսություն, Երևան, 2010, էջ 126,

և համայնքային գոյքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է դադարել՝ դրա նկատմամբ առաջացնելով պետության գոյքային իրավունքը: «Հանրային գերակա շահ» հասկացությունն արտահայտում է հասարակական և պետական այն շահը, որ գերակա է բոլոր այլ տեսակի՝ անձի, ազգի, համայնքների, դասակարգերի և այլ շահերի նկատմամբ: Օրենքի ուժով իրականացվող սեփականության հարկադիր օտարումը կամ օտարված սեփականության դիմաց փոխհատուցում տրամադրելը մշտապես առնչվում է սոցիալական, տնտեսական և քաղաքական հիմնախնդիրներին: Այս առումով Եվրոպական կոնվենցիա թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում նախատեսված «հանրային շահ» հասկացությունը շատավելի լայն է, որով պայմանավորված կոնվենցիայի անդամ երկրների հայեցողական ազատությանը բավականին լայն է (տե՛ս Բրոնիոկուկիսիս ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 2004թ. հունիսի 22վճիռը, §§ 148-149):

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ 2006 թվականի օրենքի ուժի մեջ մտնելուց¹⁵⁶ ի վեր իրականացված հանրայնացման (ապամասնավորեցման) բոլոր ծրագրերն ունեցան հասարակական լայն հնչեղություն, որոնք արտահայտվեցին բազմաթիվ դատական ակտերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և հասարակական կազմակերպությունների գեկոլյցներում և այլն: Բարձրացված հարցերը հիմնականում վերաբերվում էին կառավարության կողմից սեփականություն հանրային գերակա շահ

¹⁵⁶Ուժի մեջ է մտել 24.11.2006թ.,

գնահատելու կամայականությամբ, պետության կողմից գույքի արժեքի գնահատման մոնոպոլիզացիան, փոխհատուցումների չափերին, պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասնակցությամբ հարաբերությունները դատարանների կողմից մասնավոր իրավական որակելու և դրանց նկատմամբ վարչական իրավունքի սկզբունքներն ու նորմերը չկիրառելու հանգամանքներին, ձեռքբերողների կողմից թույլ տրված չարաչառություններին և այլն:

Հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացված խնդրահարույց հարցերը ներկայացնենք դատական պրակտիկայից մեկ օրինակով համապատասխան օրենսդրության թերությունները բացահայտելու և դրա պատճառով առաջացած խնդիրներին որոշակի լուծումներ առաջարկելու նպատակով: Այսպես, Երևան քաղաքի «Կենտրոն» և «Նորք-Մարաշ» վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում քննվել է քաղաքացիական գործն ըստ հայցի Արթուր Դերոյանի ընդդեմ «Լիդեր Մոբիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և երրորդ անձ «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության` պայմանագիրն առնչինչ ճանաչելու և որպես առնչինչ գործարքի հետևանք` Երևան քաղաքի Բուզանդի 107 հասցեում գտնվող 110 ք/մ ընդհանուր մակերեսով առանձնատան նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքը վերականգնելու պահանջի մասին: Ըստ վերջինիս կողմից ներկայացրած փաստերի` բարձրահարկ էլիտար շենք կառուցելու համար հայցվորի առանձնատուները, որն ի դեպ պատմամշակույթային

արժեք է, ճանաչվել էր հանրային գերակա շահ: Կողմերի միջև կնքվել է հասարակության և պետության կարիքների համար անշարժ գույքի սեփականության, օգտագործման իրավունքներից հրաժարվելու, անձանց հաշվառումից հանելու, դրա դիմաց փոխհատուցման կարգով բնակելի մակերես հատկացնելու մասին պայմանագիրը: Պայմանագրով ձեռքբերող հանդիսացող կողմերը, որոնք ներկայացնում էին պետական շահերը, սահմանված ժամկետում չեն կատարել ինչպես պայմանագրով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես, չեն վճարել օտարվող գույքի համար համարժեք փոխհատուցումը, այնպես էլ չեն կատարել իրացման աշխատանքները: Ավելին, գույքը ձեռք բերելուց հետո ձեռքբերող կազմակերպությունը բանկի հետ կնքել է գրավի պայմանագիր՝ գրավով ծանրաբեռնելով անսնատուները որպես 3 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով վարկի դիմաց ապահովման միջոց: Յետագայում, ձեռքբերող կազմակերպության տնօրենի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ վարկը ոչ նպատակային օգտագործելու մեղադրանքով, իսկ գույքի ճակատագրի հարցը քննվում է դատարաններում քաղաքացիական գործի շրջանակներում: Գործող օրենքով վարկը չվերադարձնելու դեպքում գրավի առարկա պատմամշակութային արժեքը վերածվում է գրավառուի՝ բանկի սեփականությունը:¹⁵⁷

Դատական այս գործում ակներևում են մի շարք իրավական խնդիրներ: Առաջինը հանրային գերակա շահ ներկայացնող պայմանագրերի ենակողմ լինելու հանգամանքն է, որտեղ պետության և սեփականատիրոջ հետ որոշակի իրավունքների և

¹⁵⁷ Հայցն առաջին ատյանի դատարանի կողմից բավարարվել է, բանի որ կողմերի միջև կնքված պայմանագիրը որակվել է շինծու, հետևաբար և առնչինչ:

պարտականություններն է դառնում ձեռքբերողը: Խնդիրն այն է, որ եռակողմ պայմանագրերի շրջանակներում ըստ էության պետութայնը ո՛չ սեփականության իրավունք է ձեռք բերում, ո՛չ էլ ստանձնում է պարտականություններ՝ պարտք ու պահանջների հարցը վերապահելով գույքի ձեռքբերողին: Արդյունքում, պետութայնը փաստացի դուրս է մնում հանրային գերակա շահի հիմքով սեփականության օտարման հարաբերություններից, մինչդեռ օրենքում կիրառվող «հանրային գերակա շահի» իրացման ողջ գործընթացի նախաձեռնողն ու շահառուն պետութայնն է: Մյուս կողմից, ձեռքբերողին հանրային գերակա շահ ներկայացնող գույքը սեփականության իրավունքով հանձնելու ընտրված մեխանիզմը գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունների ընթացքում սահմանափակումներ կամ սոցիալական պարտականություններն էլ վերաբերյալ դրույթներ օրենքը չի սահմանում, հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է պատմամշակութային արժեքներին: Այս առումով, օրենքում հստակեցված չեն և բացակայում են նաև հանրային գերակա շահ ճանաչված գույքի հնարավոր կորուստի դեպքում դրա փոխհատուցման հարցերի կամ գույքի ոչ նպատակային օգտագործելու դեպքում գույքի վնասի կացիայի կամ այլ իրավական հետևանքների կարգավորումները:

Առաջին խնդրի հետ կապված պետք է կրկին հղում կատարենք ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և տարբեր հասարակական կազմակերպությունների գեկույցներում տեղ գտած այն արձագանքներին, որոնցով գործնականում հանրային և պետական շահի անվան տակ սեփականութայնն օտարվում էին ի

շահ որևէ մասնավոր կազմակերպության կամ
 ֆիզիկական անձի:¹⁵⁸ Մարդու իրավունքների
 եվրոպական դատարանի նախադեպերում նշվել է, որ
 երբ սեփականությունը մի մասնավոր անձից
 պարտադիր կարգով անցնում է մեկ այլ մասնավոր
 անձի որոշակի հանգամանքներում,
 սեփականազրկումը կարող է համարվել
 ներգործության իրավական միջոց՝ ի շահ
 հանրության:¹⁵⁹ Սակայն, եթե սեփականազրկումը
 կատարվում է միայն մասնավոր անձին օգուտ
 բերելու նպատակով, ապա այդ հարկադիր օտարումը
 չի կարող համարվել «հանրության շահերից
 ելնելով»:¹⁶⁰ Ուստի, թեև միջազգային իրավական
 պրակտիկան պետության կողմից հանրային գերակա
 շահ ճանաչված գույքի մեկ անձից մյուսին
 սեփականության իրավունքով հանձնելու
 պրակտիկա կա, այնուամենայնիվ, ելնելով
 հայաստանյան իրականության փորձից՝ առաջարկում
 ենք օրենսդրորեն նախատեսել այնպիսի իրավական
 նորմ, որով հանրային գերակա շահ ճանաչված
 գույքն օտարելու դեպքում այն կվերածվի
 հանրային սեփականության, իսկ հակառակ դեպքում՝
 մասնավոր, այդ թվում՝ բանկային սեփականություն
 վերածվելու դեպքում, նախատեսել
 սեփականատիրոջ՝ բոլոր դեպքերում իր գույքը հետ
 պահանջելու և վնասները փոխհատուցելու
 իրավունքը: Որպեսզի սեփականատիրոջ
 իրավունքները լիարժեքորեն ապահովվի,
 անհրաժեշտ է նաև հրաժարվել օրենքում
 նախատեսված ձեռքբերողների

¹⁵⁸ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի
 սեփականության իրավունքի վերաբերվող գեկոլյցը տե՛ս
http://www.hra.am/hy/tag/property_rights/3#

¹⁵⁹ Մանրամասն տե՛ս *Карсс-Фриск М., Жеребцов А.Н., Меркулов В.В., Эртель А.Г.* Европейская конвенция о
 защите прав человека и основных свобод: Право на собственность. Москва, 2002,

¹⁶⁰ Մանրամասն տե՛ս *Çoban A. R.* Protection of property rights within the European Convention on human rights,
 Aldershot: Ashgate, 2004,

ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր ի ց , ի ս կ պ ե տ ու թ յ ու ն -
կ առ ու ց ա պ ա տ ո ղ հ ա ր ա բ եր ու թ յ ու ն ն եր ի
կ ա ր գ ա վ ո Ր մ ա ն հ ա մ ա ր ն ախատե ս ե լ պ ա ր տ ա վ ո Ր ա կ ա ն
ի Ր ա վ ու ն ք ի գ ո Ր ծ ա Ր ք ն եր ի կ ի Ր առ ու մ ը :

Է ք ս պր ո պր ի ա ց վ ա ծ գ ու յ ք ի ո չ ն պ ա տ ա կ ա յ ի ն
օ գ տ ա գ ո Ր ծ մ ա ն պ ա ր ա գ ա յ ու մ գ ու յ ք ը
վ եր ա դ ա Ր ձ ն ե լ ու ի Ր ա վ ա կ ա ն պ Ր ա կ տ ի կ ա յ ի հ ի մ ք ը
դ Ր ե ց Ա վ ս տր ի ա յ ի ս ա հ մ ա ն ա դ Ր ա կ ա ն դ ա տ ա Ր ա ն ը : Գ ո Ր ծ ի
փ ա ս տ ա կ ա ն հ ա ն գ ա մ ա ն ք ն եր ի հ ա մ ա ձ ա յ ն `
պ ե տ ու թ յ ու ն ը , վ ճ ա Ր ե լ ո վ ն ախն ա կ ա ն հ ա մ ա Ր ժ ե ք
փ ոխ հ ա տ ու ց ու մ , ս ե փ ա կ ա ն ա տ ի Ր ո ջ ի ց վ եր ց Ր ե լ Է Ր
հ ո ղ ա տ ա Ր ա ծ ք ը պ ե տ ա կ ա ն կ ա Ր ի ք ն եր ի հ ա մ ա Ր : Դ Ր ա ն ի ց
ե Ր ե ք տ ա Ր ի ա ն ց ս ե փ ա կ ա ն ա տ ե Ր ը դ ա տ ա Ր ա ն հ ա յ ց Է Ր
ն եր կ ա յ ա ց Ր ե լ պ ե տ ու թ յ ա ն դ ե մ ` պ ա հ ա ն ջ ե լ ո վ
վ եր ա դ ա Ր ձ ն ե լ ի Ր գ ու յ ք ը ` գ ու յ ք ի դ ի մ ա ց ս տ ա ց վ ա ծ
փ ոխ հ ա տ ու ց ու մ ը վ եր ա դ ա Ր ձ ն ե լ ու պ ա յ մ ա ն ո վ , ք ա ն ի
ո Ր վ եր ց վ ա ծ հ ո ղ ա տ ա Ր ա ծ ք ը չ Է Ր օ գ տ ա գ ո Ր ծ վ ու մ ա յ ն
ն պ ա տ ա կ ն եր ի հ ա մ ա Ր , ի ն չ ն պ ա տ ա կ ո վ ո Ր ա յ ն
պ ե տ ա կ ա ն ա ց վ ե լ Է Ր : Թ ե պ ե տ դ ա տ ա Ր ա ն ն եր ի կ ո ղ մ ի ց
հ ա յ ց ը մ եր ժ վ ե լ Է Ր օ Ր ե ն ք ո վ ա յ դ պ ի ս ի ս ու է յ ե կ տ ի վ
ի Ր ա վ ու ն ք ի ն ախատե ս վ ա ծ չ լ ի ն ե լ ու հ ի մ ն ա վ ո Ր մ ա մ ք ,
գ ե կ ու ց ո ղ դ ա տ ա վ ո Ր Յ ա ն ս Կ ե լ գ ե ն ը հ ա Ր ց ը լ ու ծ ե ց ի
օ գ ու տ ս ե փ ա կ ա ն ա տ ի Ր ո ջ ` հ ա մ ա Ր ե լ ո վ հ ա Ր ց ի
լ ու ծ ու մ ն ի Ր ա վ ա կ ա ն առ ու մ ո վ ա յ ն ք ա ն ա կ ն հ ա յ տ ,
ո Ր ը չ ու ն ի հ ա ն գ ա մ ա ն ա լ ի ց պ ա տ ճ առ ա բ ա ն ու թ յ ա ն
ա ն հ Ր ա ժ ե շ տ ու թ յ ա ն :¹⁶¹

«Յ ա ս ա Ր ա կ ու թ յ ա ն և պ ե տ ու թ յ ա ն կ ա Ր ի ք ն եր ի
հ ա մ ա Ր ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն օ տ ա Ր մ ա ն մ ա ս ի ն » 2006
թ վ ա կ ա ն ի Յ Յ օ Ր ե ն ք ի 16 հ ո ղ վ ա ծ ի 3-ր դ մ ա ս ը
ն ախատե ս ու մ Է ն մ ա ն ի Ր ա վ ա կ ա ն ն ո Ր մ : Ը ս տ ն շ վ ա ծ
հ ո ղ վ ա ծ ի ` օ տ ա Ր վ ա ծ ս ե փ ա կ ա ն ու թ յ ու ն ը
ձ եռ ք բ եր ո ղ ի կ ո ղ մ ի ց չ օ գ տ ա գ ո Ր ծ ե լ ու , բ ա ց առ ի կ `
գ եր ա կ ա հ ա ն Ր ա յ ի ն շ ա հ եր ի հ ա մ ա Ր օ գ տ ա գ ո Ր ծ ե լ ու

¹⁶¹ Տ ե ` ւ *Գաճիև Գ.Ա.* Конституционные основы современного права собственности // Актуальные проблемы прав собственности – Материалы научных чтений памяти профессора С.Н. Братуся (Москва. 25 октября 2006 г.). - М., 2007, 11-12,

անհնարին ու թյան կամ աննպատակահարմար ու թյան դեպքերում օտարված սեփական ու թյունը դրա պահանջով օտարվում է նախկին սեփականատիրոջը նրա պահանջով: Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումը ձեռքբերողի մասով կարող է համարվել անվավեր, եթե սեփական ու թյունն օտարելուց հետո ձեռքբերողը երկու տարվա ընթացքում չի սկսում այն գործունեությունը, որը հիմք է հանդիսացել գույքի օտարման համար:

Իրավակարգավորման այսպիսի մեխանիզմի խնդիրը տվյալ հարաբերությունների քաղաքացիաիրավական նորմերով և սկզբունքներով կարգավորելու մեջ է, որոնք շրջանցում են վարչական իրավունքի նորմեր, ինչպիսին են վարչական օրինականության, հայեցողական լիազորությունների սահմանափակման, կամայականության արգելքի, խտրականության արգելքի և այլ սկզբունքները: Բացի այդ՝ գործող կարգավորումներով մասնավոր սեփականության օտարումն որպես «հանրային գերակա շահ» իրականացվում է առանց հաշվի առնելու սեփականատիրոջ կամքը, անգամ եթե պետությունն այդ գործընթացը իրականացրել է քաղաքացիաիրավական գործարքների միջնորդավորմամբ:

Սեփականության իրավունքի պահպանության տեսանկյունից խոցելի է նաև հանրային սեփականության իրավունքի ձեռքբերման մյուս հիմքը՝ ռեկվիզիցիան:

ՀՀ քաղ. օր-ի 285-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տարերային ադետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների դեպքերում և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում գույքը կարող է օրենքով սահմանված պայմաններում ու կարգով,

պէ տակ ան մարմիններին որոշմամբ վերցվել
սեփականատիրոջից՝ ի շահ հասարակության դրա
արժեքը վճարելու պայմանով: ԶԶ քաղ. օր-ում
ռեկվիզիցիայի՝ հարկադիր օտարման այլ ձևերից
տարբերակիչ հատկություններն են գույքն
արտակարգ բնույթ կրող հանգամանքների
պարագայում վերցնելը, հասարակական շահը
բավարարելու նպատակայնությունը և
ժամանակավորությունը: Իր հերթին,
հանգամանքների արտակարգ բնույթը ենթադրում է
նաև հրատապություն, այն էլ ծայրահեղ:

«Ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից,
բացառությամբ դատական կարգով՝ օրենքով
նախատեսված դեպքերի» կանոնից ԶԶ
Սահմանադրության 60-րդ հոդվածը կատարել է
ընդհամենը մեկ վերապահում, այն է՝ հանրային
գերակա շահերի ապահովման նպատակով
սեփականության օրենքով սահմանված բացառիկ
դեպքերում կարգով՝ միայն նախնական և համարժեք
փոխհատուցմամբ: Ա.Բ. Բորիսովի կարծիքով
ռեկվիզիցիան ձևական առումով կխախտի
սեփականության սահմանադրական իրավունքը
սեփականությունից բացառապես դատական կարգով
գրկելու և պետության կարիքների շահերի համար
գույքը հարկադիր կարգով օտարելու դիմաց
նախնական և համարժեք փոխհատուցում
տրամադրելու նախապայմանները չպահպանելու
պարագայում: Սակայն, ըստ Ա.Բ. Բորիսովի՝ այս
ինստիտուտը չի հակասում ՌԴ սահմանադրությանը,
քանի որ մարդու իրավունքների իրականացումը
հանդիպում է այլ անձանց նույն իրավունքների
պաշտպանության տրամաբանական սահմանին:¹⁶²

¹⁶² Комментарий к гражданскому кодексу Российской Федерации Части первой, Части второй, Части третьей (постатейный) с
постатейными материалами и практическими разъяснениями. 6-е изд. Переработанное и дополненное. Автор комментариев
и составитель – Борисов А.Б., М., 2005, с. 257,

Այս առումով ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածն այն իրավական հիմքն է, որն իշխանություններին հնարավորություն է ընձեռում ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, արտակարգ իրավիճակներում ժամանակավորապես սահմանափակել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ մասնավոր սեփականության իրավունքը, ինչու էլ նաև համայնքային սեփականության իրավունքը: Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածում խոսքը ոչ թե իրավունքը դադարացնելու մասին է, այլ ժամանակավորապես սահմանափակելու: Այս պահանջին գուցա հեն ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածի անշրջանցելի իմպերատիվներին է «օրենքով սահմանված կարգով» պայմանը:

ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630 որոշման մեջ նշվում է, որ պետությունը պարտականություն ունի օրենքի միջոցով սահմանելու հասարակության և պետության կարիքներին համար սեփականությունը հարկադիր օտարելու կարգը: Նույն տրամաբանությամբ ռեկվիզիցիան նույնպես պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով, ինչի մասին բացի Սահմանադրությունից նշված է նաև ՀՀ քաղ. օր-ի 285-րդ հոդվածում: Ռեկվիզիցիայի իրականացման առանձին պայմանների ու կարգի մասին հատուկ իրավական նորմեր օրենսդիրը դեռևս չի ընդունել: Ուստի, ռեկվիզիցիայի կարևորագույն խնդիրներին շարունակում է մնալ իրավական կարգավորման բացակայությունը:¹⁶³

¹⁶³ Ռեկվիզիցիայի կարևորագույն խնդիրներին է իրավական կարգավորման բացակայությունը: Այդ մասին Տե՛ս **Կարապետյան Լ.Ա.** Սեփականության անձեռմխելիության սկզբունքը քաղաքացիական իրավունքում: Ատենախոսություններ և տրևան, 2010, էջեր 146-160,

Իրավաբանական գրականությունում
 ռեկվիզիցիայի՝ սեփականության իրավունքի
 դադարման վերաբերյալ կան երկու բևեռային
 հայացքներ: Առաջին հայացքի կողմնակիցներն
 առաջարկում են հրաժարվել ռեկվիզիցիան
 դիտարկել սեփականության դադարման հիմք այն
 դիտել միայն որպես իրավունքի ժամանակավոր
 սահմանափակում՝ գույքի օգտագործման իրավունքի
 ժամանակավոր սահմանափակմամբ:¹⁶⁴ Երկրորդ
 հայացքի կողմնակիցները կարծիքով կան դեպքեր,
 երբ գույքը վերցնելիս նախօրոք պարզ է, որ այն
 սեփականատիրոջն այլևս չի վերադարձվելու, քանի
 որ ավելի մեծ վտանգ կանխելու նպատակով
 օգտագործելու արդյունքում ոչնչանալու է,
 ուստի, այդ պարագայում ռեկվիզիցիան
 սեփականության իրավունքի դադարման հիմք
 չդիտելն անընդունելի է:¹⁶⁵

Ելնելով ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-
 630 որոշման բովանդակության հիմնով ռեկվիզիցիայի
 դեպքում անձի սեփականության իրավունքը
 դադարում է ոչ թե դատական կարգով, այլ պետական
 կամ համայնքային գործադիր մարմինների
 գործողության մեջ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝
 գույքը վերցնելը վստահաբար կարելի է
 բնութագրել որպես պետական և տեղական
 ինքնակառավարման մարմինների կողմից
 միակողմանի՝ առանց սեփականատիրոջ
 համաձայնության, իրականացվող գործողությունը:
 Հետևաբար, ՀՀ քաղ. օր-ի 285-րդ հոդվածում տեղ գտած
 «վերցնել» բառը չի կարող մեկնաբանվել միայն
 որպես օտարում: Խնդիրը նրանում է, որ իրավական

¹⁶⁴ Տե ս ՝ Научно-практический комментарий к ГК РФ, части первой, Под ред. В.П. Мозолина, М.П. Малеиной, 2004, է ջ 105,
¹⁶⁵ Տե ս ՝ **Կարապետյան Ն.Ա.** Սեփականության անձեռմխելիության սկզբունքը քաղաքացիական իրավունքում: Ատենախոսություններ: Երևան, 2010, է ջ 157,

կարգավորումները (ինչպես առհասարակ, այնպես էլ
ռեկվիզիցիայի դեպքում) էականորեն պետք է
տարբերվեն՝ կախված գույքի բնույթից, ինչպես,
օրինակ, շարժունակությունից: Արտակարգ
իրավիճակներում գույքի օգտագործման
անհրաժեշտության անհետաձգելիությունը և
հրատապությունը հնարավորություն չեն
ստեղծում վերցրած գույքի համար նախնական
փոխհատուցման հարցերը կարգավորել: Ինչպես
ցույց տվեց հայաստանյան փորձը, վերցրած գույքի
դիմաց նախապես վճարելու պայման գործնականում
չէր իրականացվում անգամ հանրային գերակա շահի
հիմքով սեփականության հարկադիր օտարման
գործերով: Այդ իսկ պատճառով, հնարավոր չէ
պատկերացնել ռեկվիզիցիայի դեպքում, երբ
ենթադրվում է միջոցառումների իրականացման
հրատապություն, ավելի հրատապ կարգավորել
անշարժ գույքի նկատմամբ իրավունքի
փոխհատուցման և գույքի նկատմամբ իրային
իրավունքների գրանցման հարցերը, հատկապես այն
դեպքում, երբ անշարժ գույքի նկատմամբ իրային
իրավունքները ծագում են պետական գրանցման
պահից (ԶՅ քաղ. օր-ի 10-րդ, 135-րդ, 176-րդ, 301-րդ հոդվ.):
Գույքը ժամանակավորապես վերցնելը
սեփականատիրոջ օգտագործելու
իրավագործությունը սահմանափակելու իմաստով
մեկնաբանելու և կիրառելու դեպքում, անշուշտ,
վերցնողը հնարավորություն չի ունենա
իրականացնել տնօրինելու իրավագործությունն
այն պարզ պատճառով, որ վերցնողի մոտ գույքի
նկատմամբ սեփականության իրավունքը չի ծագել:
Մինչդեռ, դրա անհրաժեշտությունը կաշարժական
իրերի դեպքում, երբ շարժական գույքի փաստացի
փոխանցումը բավարար է սեփականության
իրավունքի փոխանցումն իրականացնելու համար:

Կարելի է պնդել, որ ռեկվիզիցիայի իրականացման ցանկացած դեպքում տեղի է ունենում մասնավոր կամ համայնքային սեփականության իրավունքի դադարում, սակայն այդպիսի օրենսդրական կարգավորումը որևիցե լուրջ հիմնավորում չի ունենա ռեկվիզիցիայի կիրառման նպատակայնության տեսանկյունից: Բացի այդ, դրա համար չկան բավարար սահմանադրաիրավական հիմքեր և գործնական մեխանիզմներ, ռեկվիզիցիա կիրառելու նպատակը պետությանը հարստահարելը չէ, այլ ծայրահեղ անհրաժեշտ, արտակարգ բնույթ և հրատապ դեպքերում մասնավոր սեփականության «ներուժը»ի օգուտ հասարակության օգտագործելն է: Այս առումով անհրաժեշտ ենք գտնում ռեկվիզիցիայի հետագա իրավակարգավորումն իրականացնելիս ցուցաբերել տարբերակված մոտեցում՝ հաշվի առնելով ռեկվիզիցիայի ենթակա օբյեկտների առանձնահատկությունները, իսկ այդ ինստիտուտը նախատեսել ոչ թե որպես սեփականության իրավունքի դադարման, այլ այդ իրավունքի սահմանափակման հիմք:¹⁶⁶

Ռեկվիզիցիային դիմելու իրավական հիմքերի՝ որպես արտակարգ բնույթ կրող հանգամանքների վերանալու դեպքում, կարծես թե, գույքը պետք է վերադարձման ենթակալիներ: Սակայն, ՅՅ քաղ. օր-ի համապատասխան հոդվածում պետության նման պոզիտիվ պարտականություն և սահմանված չէ: Քննարկվող հոդվածի երկրորդ մասը սահմանում է մի դրույթ, որով սեփականատերը կարող է դատարանում

¹⁶⁶ Ռեկվիզիցիայի՝ որպես սեփականության իրավունքի օգտագործման իրավագործության սահմանափակման հիմք նախատեսելու վերաբերյալ առաջարկը սկզբունքային չէ այն առումով, որ եթե այդ առաջարկություն դեմ առարկություններ ներկայացվի՝ միջազգային պրակտիկայում ռեկվիզիցիայի՝ որպես իրավունքի դադարման հիմք լինելը, ապա հնարավոր է ռեկվիզիցիայից առանձին նախատեսել այլ անվանումով ինստիտուտ, որով կիրականացվի հենց մասնավոր կամ համայնքային սեփականության իրավունքի ժամանակավոր սահմանափակում:

վիճարկել հարկադրաբար վերցված գույքի հատուցման արժեքի չափը, իսկ դրա երրորդ մասը սահմանում է՝ անձը, ում գույքը հարկադրաբար վերցվել է, իրավունք ունի պահանջել, որ իրեն վերադարձվի պահպանված գույքը, եթե վերացել են այն հանգամանքները, որոնց կապակցությամբ կատարվել է ռեկվիզիցիա: Երկրորդ մասի բովանդակությունը լրացնում է հոդվածի առաջին մասի այն դրույթը, որով գույքը կարող է վերցվել դրա արժեքը վճարելու պայմանով: Սակայն, երրորդ մասում սեփականատիրոջ կողմից գույքը հետ վերադարձնելու պահանջն ինքնին հնարավոր է համարում այն կարծիքի գոյությունը, որ ոչ բոլոր դեպքերում է գույքը վերցվում ի սեփականություն, բայց այս դեպքում չի սահմանվում, թե արդյոք պետք է վճարվի սեփականատիրոջ վնասները կամ գույքն օգտագործելու դիմաց պետք է հատուցել սեփականատիրոջը: Սեփականատիրոջ շահերը պաշտպանելու նկատառումներից ելնելով՝ ցանկալի է, որ պեսզի օրենքում նախատեսվի արտակարգ բնույթ կրող հանգամանքների վերացման դեպքում գույքը վերադարձնելու պետության դրական պարտականությունը, իսկ դրա անհնարիսության դեպքում գույքի արժեքը և պատճառված վնասները:¹⁶⁷

Չանրային սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերի շարքը, որոնք իրականացվում են մասնավոր և համայնքային սեփականության իրավունքի հարկադիր դադարման ճանապարհով, համալրում է պետության կողմից անտես սվար

¹⁶⁷ Օրենքում նշվում է, որ սեփականատերը կարող է դատարանում վիճարկել հարկադրաբար վերցված գույքի հատուցման արժեքի չափը: Քանի որ ի.գ.թ. Ն.Կարապետյանն իր ատենախոսությունում արդեն անդրադարձել է ռեկվիզիցիայի համար իրականացված գործողությունների իրավաչափության դատական կարգով վիճարկելու հնարավորության օրենսդրական բացը լրացնելու հարցին, ուստի, համաձայնելով այդ առաջարկության հետ, շրջանցում ենք այդ հարցի քննարկումը:

պահվող մշակութային արժեքները հետվերցնելու
ինստիտուտը: Այս հիմքը սահմանվել է ՀՀ քաղ. օր-ի 284-
րդ հոդվածում, որով, *երբ առանձնապես արժեքավոր և
պետության կողմից պահպանվող մշակութային
արժեքները սեփականատերը դրանք պահում է
անտնտեսվար, ինչը սպառնում է դրանց
նշանակության կորստին, նման արժեքները
դատարանի վճռով կարող են վերցվել
սեփականատիրոջից՝ պետության կողմից դրանց
գինը հատուցելու միջոցով:*

Գործադիր իշխանության պետական մարմիններից
մշակույթի ոլորտի պետական քաղաքականության
իրականացման լիազոր մարմինը ՀՀ մշակույթի
նախարարությունն է, որի խնդիրներից են պաստել
մշակութային ժառանգության ստեղծմանը,
պահպանությանը, պաշտպանությանը,
ուսումնասիրությանը, օգտագործմանը,
հանրահռչակմանն ու ծառայությունների
մատուցմանը:¹⁶⁸ Ի պատասխան ՀՀ մշակույթի
նախարարին հասցեագրված գրությանը՝ 2013 թվականի
հունիսի 18-ին նախարարությունից տեղեկացրել են,
որ մինչ այդ «ՀՀ մշակույթի նախարարության կամ
նրա ենթակա կազմակերպությունների կողմից ՀՀ
քաղաքացիական օրենսգրքի 284-րդ հոդվածի հիմքով
ՀՀ դատարաններում նախարարության կողմից հայց
չի հարուցվել և նախարարությունում առկա չեն
սեփականատերերից մշակութային արժեքները
հարկադիր վերցնելու վերաբերյալ նոր
գործընթացներ կամ ծրագրեր»: Այս հանգամանքը
հաստատում է վերջին շրջանում պատմական
հուշարձանների նկատմամբ իրականացվող

¹⁶⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք:
Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրություն՝ Գ.
Դանիելյանի.- Եր. պետ. համալս., Երևան, 2012, էջեր 579-582,
Մշակույթի ոլորտում պետական գործառնություններ
իրականացնում են նաև գործադիր իշխանության տարածքային
մարմինները:

գործողություններին հաճախ արտահայտվող դժգոհություններն ու ցույցերը, որոնք վկայում են քննարկվող իրավական նորմի գործնականում անկենսունակության մասին:

ՀՀ քաղ. օր-ի 284-րդ հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում իրավաձեռքարարություններին հնարավոր մասնակիցների շրջանակը, ըստ որի՝ դատարանում հայց հարուցելու իրավունք ունի պետությունը, որը կարող է հարուցվել ինչպես ֆիզիկական և իրավաբանական անձանց, այնպես էլ համայնքների դեմ:

Որպեսզան տնտեսվար պահվող գույքը վերցվի սեփականատիրոջից, հայցվորը պարտավոր է դատական կարգով ապացուցել հետևյալ փաստերը՝ գույքն առանձնապես արժեքավոր և պետության կողմից պահպանվող մշակութային արժեք էլիտերը, սեփականատիրոջ կողմից գույքի անտնտեսվար պահելը, ընդ որում՝ անկախ սեփականատիրոջ մեղքից, և որ այդ գույքի այդպիսի անտնտեսվար պայմաններում պահելը դրա նշանակության կորստին ուղղակիորեն սպառնալը:

Օրենքը պետական լիազորված մարմնի կողմից մինչև դատական գործի ավարտն առանձնապես արժեքավոր և պետության կողմից պահպանվող մշակութային արժեքների պահպանությունն ապահովելու և օտարումը բացառելու համար օպերատիվ ներգործության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը չի նախատեսում, հատկապես այն դեպքերում, երբ կա այդպիսի իրական վտանգ կամ հիմնավոր կասկած: Ենթաէ՝ նման կանխարգելիչ միջոցներ կարելի է ձեռնարկել հայցի ապահովման միջոց ընտրելով, սակայն, նման միջնորդություններ կարայացնելը կողմերի իրավունքն է, իսկ միջնորդությունն իր հերթին ենթակա է քննարկման և ոչ՝ անվերապահ ավարտման:

Այն ինչ, հաշվի առնելով, որ օրենքի պահպանության օբյեկտն առանձնապես արժեքավոր և պետության կողմից պահպանվող մշակութային արժեքներն են, ուստի, անհրաժեշտությամբ կանախատեսել անտնտեսվար պահվող մշակութային արժեքները վերցնելու վերաբերյալ դատական վարույթների ընթացքում մշակութային արժեքների օգտագործումն ու տնօրինումը սահմանափակող հատուկ միջոցներ:

ՀՀ քաղ. օր-ի 284-րդ հոդվածի երկրորդ մասով մշակութային արժեքները վերցնելիս պետությանը պարտավորեցնում է սեփականատիրոջը հատուցել միայն դրանց արժեքը: Նման իրավակարգավորումը լիարժեք չէ այն մասով, որ չի նախատեսում մշակութային արժեքների սեփականատիրոջ կողմից պատճառված վնասների հատուցման հարցի կարգավորում: Մինչդեռ, քաղաքացիական իրավունքի արտապայմանագրային պարտավորությունների իրավունքի տեսանկյունից այն դեպքերում, երբ անտնտեսվար օգտագործման արդյունքում մշակութային արժեքներին վնաս է պատճառվել, դրանց օտարման դիմաց փոխհատուցվող արժեքը պետք է նվազեցվի պատճառված վնասի չափին համամասնորեն: Առաջին հայացքից այդ բացը կարելի է լրացնել արտապայմանագրային պարտավորությունների հետ հարաբերությունները կարգավորող իրավական նորմերով: Սակայն այստեղ խոսքը անտնտեսվար պահվող այն գույքի մասին է, որը գտնվում է մասնավոր կամ համայնքային սեփականության ներքո, իսկ սեփականատիրոջն իր գույքը վնասելու համար արտապայմանագրային պարտավորական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը գույքային պատասխանատվություն չեն նախատեսում: Այս է պատճառը, որ քաղաքացիական

օրենսգրքի 284-րդ հոդվածում պետք է լինի մշակույթային արժեքների գինը որոշելիս դրանց պատճառված վնասները հաշվանցելու վերաբերյալ դրույթ: Օրենսդրական բացը լրացնելու նպատակով՝ առաջարկում ենք ՀՀ քաղ. օր-ի 284-րդ հոդվածի 2-րդ մասի վերջի մասում լրացնել «հաշվանցելով գույքին պատճառված վնասները» արտահայտույթամբ:

Ինչպես նշեցվի զիցիան, այնպես էլ անտնտեսվար պահվող մշակույթային արժեքները վերցնելու ինստիտուտները հանրային սեփականության իրավունքի ծագման իրավական յուրահատուկ մեխանիզմներ են, որոնք գործնականում չեն կիրառվում: Դրանց կիրառումը հատկապես պետք է արժևորվի պատերազմական պայմաններում և երկրաշարժային գոտում գտնվող երկրի համար, ուստի, անհրաժեշտ է դրանց հատուկ ուշադրություն սևեռել՝ ապահովելով հստակ իրավական կարգավորում: Այս առումով ներկայացված առաջարկությունները նպատակ ունեն որոշակիորեն հստակեցնել նշեցվի զիցիային անտնտեսվար պահվող մշակույթային արժեքները վերցնելու վարույթներում կողմերի իրավունքներն ու պարտականություններն, իրականացվելիք քայլերի հաջորդականությունը, ինչպես նաև փոխհատուցում տրամադրելու ու պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները:

Հանրային սեփականության իրավունքի ձեռքբերման մյուս առանձնահատուկ հիմքը նախատեսվում է բանկային լիորտոմ, որը, ինչպես նվերոշարադրված հիմքերը, իրականացվում է որոշակի նպատակների իրականացումն ապահովելու համար՝ մասնավոր գույքի սեփականատերերի կամքից անկախ: Այս հիմքին անդրադառնում ենք այն պատճառով, որ այն իրականում հանրային

սեփականությունների ծագման հիմք է, սակայն, գործող ներպետական օրենսդրությամբ իրավական կարգավորման մեխանիզմները բավականաչափ հստակ չեն այդ մեխանիզմի հանրային թեմասնավորչի ներկայացումը:

Հանրային սեփականությունների ծեռքերման յուրօրինակ միջոց է սահմանում «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» 2004 թվականի ՀՀ օրենքը, որը կարգավորում է բանկերում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին պատկանող բանկային դրամային և արժեթղթային ավանդների՝ օրենքով սահմանված չափով հատուցումը երաշխավորելու հետ կապված հարաբերությունները: Նշված օրենքի 11-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ բոլոր բանկերը, բացառությամբ՝ անվճարունակ բանկերի, պարտավոր են Հիմնադրամին վճարել պարբերաբար, միանվագ և լրացուցիչ երաշխիքային վճարներ, որոնք վճարող բանկերի համար համարվում են ծախս և ենթակա չեն վերադարձման (օրենքի 1-ին հոդվ.):

Պատմականորեն այս «երևույթի» նախամոդելն ի հայտ եկավ ԱՄՆ-ում՝ որպես առաջավարություն 1929-1939թթ. Մեծ ճգնաժամը (անգլ. Great Depression) հաղթահարելու համար: 1933 թվականին Ամերիկայի կոնգրեսի կողմից հիմնադրվեց Ավանդների ապահովագրման \$եդերատիվ կորպորացիան (Federal Deposit Insurance Corporation)¹⁶⁹: Գործադիր իշխանության պետական այս կառույցը անկախ պետական այլ մարմիններից:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում առկա է հիմնադրամի սահմանումը,

¹⁶⁹ ԱՄՆ-ի Ավանդների ապահովագրման \$եդերատիվ կորպորացիայի մասին մանրամասն տե՛ս հետևյալ պաշտոնական կայքում <http://www.fdic.gov/> (01.09.2014),

որի համաձայն՝ հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է, որի հիմնադիրը Կենտրոնական բանկն է: Այս դրույթն առաջին հայացքից չի համապատասխանում ՀՀ քաղ. օր-ի 123-րդ հոդվածին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով հիմնադրամը քաղաքացիների և/կամ իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ: Շարադրված երկու հոդվածների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ խոսքը միմյանց հետ որևէ առնչություն չունեցող կազմակերպությունների մասին է, որոնց ընդհանրությունը միայն «հիմնադրամ» եզրույթն է:

Առաջին, քաղ. օր-ում հիմնադրամը \$իզիկական և իրավաբանական անձանց գույքային միավորման արդյունք է, մինչդեռ, քննարկվող օրենքում հիմնադրամի հիմնադիրը կենտրոնական բանկն է, այն էլ ոչ իր կամքով, այլ օրենսդրի:

Երրորդ, ՀՀ քաղ. օր-ում հիմնադրամը կազմակերպություն է, իսկ օրենքինը՝ իրավաբանական անձ:

Երրորդ, ՀՀ քաղ. օր-ով հիմնադրամը պարտավոր է հետապնդել սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ, մինչդեռ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից հիմնադրվող հիմնադրամի համար նշված է, որ չպետք է հետապնդի շահույթ ստանալու նպատակ:

Չորրորդ, ՀՀ քաղ. օր-ի 123-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ հիմնադիրների կողմից հիմնադիրներին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է, այսինքն՝ մասնավոր սեփականություն է, մինչդեռ, կենտրոնական բանկի

կողմից հիմնադրված հիմնադրամի գույքի կարգավիճակի մասին օրենքում նշում չկա:

Չորրորդ դատողություն հետ կապված պետք է նշենք, որ թեպետ օրենքում հիմնադրամի սեփականության վերաբերյալ դրույթ նախատեսված չէ, սակայն, օրենքի 20-րդ հոդվածով բանկի կողմից կատարվող երաշխիքային վճարների գումարները կուտակվում են հիմնադրամի՝ ՀՀ կենտրոնական բանկում գտնվող հատուկ հաշվին, ասել է, թե հիմնադրամի դրամական միջոցները անուղղակիորեն համարվում են հիմնադրամինը: Համեմատության համար նշենք, որ «Ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգի մասին» 21.09.2012 Ուկրաինայի օրենքով¹⁷⁰ ֆիզիկական անձանց ավանդները երաշխավորող ֆոնդը պետական մասնագիտացված հաստատության է: Այն իրականացնում է ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման ոլորտում պետական կառավարչական գործառույթներ, իսկ նրա առանձնացված գույքը պետական սեփականության է:

Նման վճարների պարտադիրության բնույթը և սխնդրահարույց է: Քննարկվող օրենքի 11-րդ հոդվածի ուժով բանկերը պարտավորվում են ֆիզիկական անձանց ավանդները երաշխավորելու համար Հիմնադրամին վճարել պարբերական, միանվագ և Լրացուցիչ երաշխիքային վճարներ (13-րդ հոդվ.),¹⁷¹ կատարել եռամսյակային պարբերականության վճարումներ, ինչպես նաև Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ Լրացուցիչ

¹⁷⁰ Ֆոնդը հիմնադրվել է դեռևս 1998 թվականին Ուկրաինայի նախագահի թիվ 996/98-10.09.1998թ. հրամանով և միայն 2001թ. սեպտեմբերի 20-ին Բարձրագույն ռադայի կողմից ընդունվեց «Ֆիզիկական անձանց ավանդների ֆոնդի մասին» օրենքը: Ֆոնդի հետ կապված հարաբերությունները վերակարգավորվում են 2012 թվականին օրենքով:

¹⁷¹ Նոր ստեղծվող բանկերը, բացառությամբ վերակազմակերպման միջոցով ստեղծվող բանկերի, բանկային գործունեության Լիցենզիա ստանալու պահից տասնօրյա ժամկետում վճարում են միանվագ երաշխիքային վճար՝ 15 միլիոն դրամ գումարի չափով:

վճարումներ այն դեպքում, երբ հիմնադրամի միջոցները բավարար չեն երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնելու համար (14-րդ հոդվ.): Դրանից բացի, երաշխավորված գումարը հատուցելուց հետո Հիմնադրամի փաստացի հատուցած գումարը և հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերի չափով պահանջի իրավունք է ձեռք բերում անվճարունակ բանկի նկատմամբ: Այս առումով Հիմնադրամն ունի գույքի գոյացման աղբյուր, որը պարտադիր ենթակա է վճարման: Հանրային սեփականության իրավունքը ծագում է պետական բյուջե մուտքագրված դրամական միջոցների նկատմամբ, որոնք գանձվում են հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների ձևով: Այնուամենայնիվ, հիմնադրամին պարտադիր փոխանցման ենթակա երաշխիքային վճարները չեն կարող որակվել որպես պարտադիր վճարներ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի իմաստով: Պարտադիր վճարները, բացի պարտադիր լինելուց, բնութագրվում են իրենց անհատուցելի ությամբ, որն իր մեջ ներառում է անվերադարձելի ության և սահմանման միակողմանի ության հատկանիշները:¹⁷² Հիմնադրամն ունի բանկերի կողմից \$իզիկական անձանց ավանդները երաշխավորելու համար երաշխիքային վճարներ կատարելու հանդիպակաց պարտավորություն, այն` հատուցել անվճարունակ բանկերի ավանդատու \$իզիկական անձանց ավանդները: Հետևաբար, երաշխիքային վճարները վերադարձելի են:

Անհրաժեշտ է նաև նշել, որ \$իզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգի առկա

¹⁷² Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբարգոյթյամբ` Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.- Եր.: «Իրավունք», 2010, էջ 533

մեխանիզմը խախտում է սեփական ության իրավունքն
օրենսդրական հարթությունում, քանի որ առանց
ավանդատու-սեփականատերի կամ տնտեսվարող
բանկերի կամահայտնություն երաշխավորվում է
ներանց ավանդները բանկերի՝ ավանդներ ստացված
գումարներից, որի պատճառով բանկերը հարկադրված
են նախապես սահմանել բարձր տոկոսադրույքներ:
Արտասահմանյան երկրների փորձի հետ ազգային
օրենսդրությունը համեմատելիս երևում է, որ
ազգային օրենսդրության մեջ ներդրված
ավանդների երաշխավորման ձևաչափն ամենամոտն է
ուկրաինական մոդելին: Գերակշռող մյուս
երկրներում ավանդների վերադարձը
երաշխավորվում է, որպես կանոն, բանկերի
կանոնադրական կապիտալով և առհասարակ բանկի
գույքով, ինչպես նաև ավանդատուի կողմից
ընտրված այն ապահովագրական
կազմակերպությունների կողմից, որտեղ
ավանդատուն կամավոր ապահովագրել է ավանդի
կորստի ռիսկերը:

Բացի այն, որ հանրային սեփականության
իրավունքը կարող է ծագել մասնավոր գույքի
հարկադիր օտարման հիմքով, ՅՅ քաղ. օր-ը հանրային
սեփականության իրավունքի ծագման համար հիմք է
նախատեսում բոլոր այն հիմքերը, որոնք
նախատեսված են մասնավոր սեփականության
իրավունքի ծագման դեպքում: Ինչպես հայտնի է,
դրանց շարքին է դասվում ձեռքբերման
վաղեմության հիմքը, սակայն, խնդիրն այն է՝
պետությունն ու համայնքը կարող են արդյոք
տիրապետման վաղեմության ուժով ձեռք բերել
սեփականություն:

Ձեռքբերման վաղեմության ինստիտուտը
գոյակցում է տարբեր իրավական համակարգերում,
սակայն նրա սուբյեկտների և օբյեկտների

շրջանակները, վաղեմություն ժամկետները և այլ հանգամանքները տարբեր են:

ՀՀ քաղ. օր-ի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր է, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք:

ՀՀ քաղ. օր-ի 128-րդ հոդվածի տրամաբանությամբ 187-րդ հոդվածի անձանց շրջանակը լայն է, քան ի որ իրավաբանական անձանց առնչվող կանոնները վերաբերելի են նաև հանրային իրավական կազմավորումներին: Թեև քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածը սահմանափակվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց թվարկելով, այնուամենայնիվ, օրենքում դրա մասին հատուկ վերապահում արված է: Հետրաբար, ձեռքբերման վաղեմությունը կարող է առաջին հայացքից ինչպես մասնավոր սեփականության, այնպես էլ հանրային սեփականության ձեռքբերման հիմք լինել:

Տիրապետման վաղեմությունը, լինելով իրավաբանական փաստ, իր բնույթով զգալիորեն տարբերվում է տեսության մեջ ընդունված իրավաբանական փաստերի տեսակներից՝ իրավաբանական գործողությունից և իրադարձությունից: ՀՀ քաղ. օր-ի 187-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակությունից բխում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների միաժամանակյա առկայությունը, մասնավորապես դրանք են՝ տիրապետումը պետք է լինի բարեխղճ (1), փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես

ս Ե փակ ան ը (2), տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ (3), տիրապետումը պետք է լինի բացահայտ (4) (տե՛ս Վոլոդյա և Միշա Նիկոլոսյաններն ընդդեմ Մանվել Սարիբեկյանի և մյուսների, թիվ 3-1435/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը): Այսպիսով, քննարկվող հոդվածի հիպոթեզով տիրապետման վաղեմությունը գուցե չի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման համար պահանջում է ոչ թե մեկ, այլ մի քանի իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի առկայություն:

Իրավագիտական գրականության մեջ այն կենսական, տնական հանգամանքները են, որոնք առաջացնում են իրավական հետևանքներ, անվանում են իրավաբանական վիճակ՝ տարանջատելով իրավաբանական փաստի այլ տեսակներից:¹⁷³ Այդպիսի փաստեր են կենսաթոշակ ստանալու համար աշխատանքային ստաժը, ազգակցական կամ բարեկամական կապը, փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվելը, ինչպես նաև սեփականություն ձեռք բերելու համար գուցե փաստացի, երկարատև, բարեխիղճ և անընդմեջ տիրապետելը:¹⁷⁴ Իրավաբանական վիճակները կարևորվում են ոչ միայն որպես եղելություն - արդյունք, որոնց պատճառով ծագում, փոփոխվում և դադարում են իրավահարաբերությունները, ինչպես որ արարքների ու իրադարձությունների դեպքում է, այլև դրանց տևողականությամբ, որում որպես իրավաբանական փաստ նշանավորվում է ողջ ընթացքը և հատկապես եղելության հետևսկիզբը: Նույն կերպ էլ ձեռքբերման վաղեմության դեպքում

¹⁷³ Юридический энциклопедический словарь / Гл. ред. О.Е. Кутафин. - М.: Большая Российская энциклопедия, 2002, էջ 525,

¹⁷⁴ **Խաչատրյան Մ.Ա.** Իրավահարաբերություն // Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Յեղ. խումբ, գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան. - Եր.: Լուսաբաց հրատարակչատուն, 2016, էջ 411,

կարևորվում է տիրապետման իրավաչափ սկիզբը (*lustum initium possessionis*):

Հռոմեական իրավունքում տիրապետումը ճանաչելու համար պահանջվում է բերկու՝ փաստացի տիրելու (*corpus possessionis*) և տիրապետման ցանկություն ունենալու (*animus possessionis*) նյութական ու հոգեբանական բաղադրատարրերի առկայություն, կամք: Տիրապետումը, ի տարբերություն հասարակ տիրելուց, օժտված էր պաշտպանություն իրավունքով և նույնիսկ չէր ստուգվում տիրապետման հիմնավորվածությունը:¹⁷⁵ Այս երկու տարրերի համադրման արդյունքում էլ հնարավոր է որոշել այն, ինչ արևմտյան եվրոպական երկրների իրավական համակարգերում կոչվում է *domicile*:

Տիրապետման նյութական տարրի առկայությունը չի կարող հաստատված լինել բացառապես գույքի կառավարմամբ, այլև այն հաստատվում է իրի նկատմամբ ֆիզիկական կամ նյութական գործողությունների առկայությամբ, որի դրսևորումը կարող է լինել ինչպես մարմնական, այնպես էլ ոչ մարմնական: Գույքը տիրապետելու տարբերակված հնարավորությունների վերաբերյալ օրենսդրական կարգավորումների դեպքում իրական կլինի հանրային իրավական կազմավորումների կողմից գույքը տիրապետման վաղեմությամբ որպես սեփականություն ձեռք բերելը: Մասնավորապես, մասնավոր սեփականատիրոջ կողմից գույքից հրաժարվելու, գույքն անտնտեսվար պահելու կամ այնպիսի գործողություններ կատարելու, դեպքում, որոնք վկայում են գույքն օտարելու մտադրության մասին, հանրային իրավական կազմավորումները

¹⁷⁵ Ապիյան Ն.Ա., Սաֆարյան Գ.Յ. Հռոմեական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետ, Ե., Երևանի համալս.հրատ., 2002, էջ 121,

կարող են սեփականության իրավունք ձեռք բերել, եթե դրանց գործողությանը բավարարում են տիրապետման վաղեմությանը և երկայացվող պահանջներին:

ՌԴ քաղ. օր-ի 234-րդ հոդվածը, որը կարգավորում է տիրապետման վաղեմությանմբ սեփականությանը ձեռք բերելու հարաբերությանը, տառացի մեկնաբանելու դեպքում սահմանափակվում է միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց թվարկումով: Սակայն, դատական պրակտիկայում տիրապետման վաղեմությանմբ սեփականության իրավունք ձեռք բերել կարող են ինչպես ֆիզիկական և իրավաբանական անձիք, այնպես էլ պետությանը և համայնքները, եթե գույքը տիրապետման վաղեմությանմբ ի սեփականության ձեռք բերելը քաղաքացիաիրավական իրավասուբյեկտության շրջանակներին գույքի ¹⁷⁶ Այսպես, օրինակ, Սանկտ Պետերբուրգի քաղաքային գույքի կառավարման վարչությունը, հիմք ընդունելով ժողովրդական դեպուտատներին շրջանային խորհրդի՝ չորս անդամից բաղկացած ընտանիքին օգտագործելու իրավունքով բնակարան տրամադրելու մասին 1992թ. որոշումը, դիմել էր դատարան հայցով ընդդեմ «Банк Открытие» ՍՊԸ-ի՝ բնակելի տարածքի նկատմամբ ձեռք բերման վաղեմության ուժով Սանկտ Պետերբուրգի պետական սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով: Հայցվորն իր պահանջը հիմնավորում էր նրանով, որ 1992 թվականից սկսած անընդմեջ, բացահայտ և բարեխղճորեն տիրապետել է բնակարանը որպես իրենը: Անդրադառնալով հայցվորի փաստարկներին և հղում կատարելով ձեռք բերման վաղեմության չափանիշները սահմանող ՌԴ գերագույն դատարանի

¹⁷⁶ С т ́ у Теория и практика применения норм гражданского права: учеб. пособие для студентов вузов / [Ю.Н. Андреев, Н.Д. Эриашвили, Н.А. Волкова]; под ред. Н.М. Коршунова, Ю.Н. Андреева. – М.: ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2006, է ջ 13,

ՊԼԵՆՈՒՄԻ ՈՐՈՇՄԱՆ 15-ՐԴ և 16-ՐԴ ԿԵՏԵՐԻՆ ¹⁷⁷ դատական երեք ատյաններն էլ պատճառաբանական մասերում եզրահանգել են, որ հայցվորի կողմից բավարարչափով ապացուցվել է տիրապետման վաղեմության օրենսդրական պահանջների առկայությունը, քանի որ բնակարանի օրդերի հիման վրա ընտանիքով բնակեցումն անվերապահորեն վկայում է գոլթը հանրային իրավական կազմավորմանը պատկանելու մասին: Անգամ համապատասխան ձևով փաստաթղթերի ձևակերպման բացակայության պարագայում իշխանության մարմինները չէին կասկածում, որ իրականացնում են գոլթի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները, իսկ պատասխանող կազմակերպությունը գոլթի մասին հոգ տանելու, գոլթի տիրապետումը վիճարկելու, բնակարան ազատելու պահանջ ներկայացնելու մասին ոչ մի ապացույց դատարանին չէր ներկայացրել: ¹⁷⁸

Ընդհանրացնելով վերոգրյալն ու արտասահմանյան երկրների փորձը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՅՅ քաղաքացիական օրենսդրությունում կատարել հստակեցնող համապատասխան փոփոխություններ տիրապետման վաղեմության ուժով սեփականության ձեռքբերող անձանց շրջանակը ընդլայնելու համար, որպեսզի ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում ապահովվի \$իզիկական և իրավաբանական անձանց հետ իրավական հավասարությունը սեփականության իրավունքի ձեռքբերման գործընթացներում:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ հանրային սեփականության հարաբերությունները կարգավորող քաղաքացիաիրավական նորմերը պետք է հստակեցնել այնպես, որ պետության, համայնքի և այլ

¹⁷⁷ п. 15, 16, Постановления Пленумов Верховного Суда РФ и ВАС РФ от 29.04.2010 № 10/22,

¹⁷⁸ Постановление ФАС СЗО от 01.10.2012 по делу № А56-235/2012,

ս ու բ յ ե կ տ ն եր ի գ ու յ ք ա յ ի ն ի ր ա վ ու ն ք ն եր ի
ձ եռ ք բ եր մ ա ն հ ա ր ց ու մ ա պ ա հ ո վ ի ի ր ա վ ու ն ք ն եր ի
ս ու բ յ ե կ տ ն եր ի ի ր ա վ ա կ ա ն հ ա վ ա ս ա ր ու թ յ ու ն ը :
Ն պ տ ա կ ու ն ե ն ա լ ո վ ա պ ա հ ո վ ե լ հ ա ն ր ա յ ի ն և մ ա ս ն ա վ ո ր
ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի ր ա վ ու ն ք ն եր ի հ ա վ ա ս ա ր
պ ա հ պ ա ն ու թ յ ու ն ը ` առ ա ջ ա ր կ ու մ ե ն ք ս ա հ մ ա ն ե լ
հ ա ն ր ա յ ի ն գ եր ա կ ա շ ա հ ի հ ի մ ք ո վ օ տ ա ր վ ո ղ
ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն բ ա ց առ ա պ ե ս պ ե տ ա կ ա ն
ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ա ն ց ն ե լ ու վ եր ա ք եր յ ա լ
օ ր ե ն ս դ ր ա կ ա ն դ ր ու յ թ ը ` դ ր ա ն ո վ ի ս կ հ ր ա ժ ա ր վ ե լ ո վ
ձ եռ ք բ եր ո ղ ն եր ի ց , ի ս կ գ ու յ ք ի մ ա ս ն ա վ ո ր
ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ա ն ց ն ե լ ու դ ե պ ք ու մ
ս ե փ ա կ ա ն ա տ ի ր ո ջ ն ի ր ա վ ու ն ք վ եր ա պ ա հ ե լ
պ ա հ ա ն ջ ե լ ու վ եր ա դ ա ր ձ ն ե լ ի ր գ ու յ ք ը և հ ա տ ու ց ե լ
պ ա տ ճ առ վ ա ծ վ ն ա ս ն եր ը :

Որ պ ե ս հ ա վ ե լ յ ա լ , բ ա յ ց և կ ա ր և ո ր եր ա շ խ ի ք ,
ա ն հ ր ա ժ ե շ տ է հ ա ն ր ա յ ի ն գ եր ա կ ա շ ա հ ի հ ի մ ք ո վ
ը ն թ ա ց ո ղ ի ր ա վ ա հ ա ր ա ք եր ու թ յ ու ն ն եր ի գ գ ա լ ի
ծ ա վ ա լ ը ք ա ղ ա ք ա ց ի ա ի ր ա վ ա կ ա ն ո լ ո ր տ ի ց տ ե ղ ա փ ո խ ե լ
վ ա ր չ ա ի ր ա վ ա կ ա ն ո լ ո ր տ ` ա յ ս ո լ ո ր տ ու մ վ ա ր չ ա կ ա ն
ի ր ա վ ու ն ք հ ի մ ն ա ր ա ր ս կ գ բ ու ն ք ն եր ի և դ ր ու յ թ ն եր ի
կ ի ր ա ր կ ու մ ն ա պ ա հ ո վ ե լ ու հ ա մ ա ր , ա ն գ ա մ ե թ ե ա յ դ
հ ա ր ա ք եր ու թ յ ու ն ն եր ը մ ի ջ ն ո ր դ ա վ ո ր վ ու մ ե ն
օ տ ա ր մ ա ն պ ա յ մ ա ն ա գ ր եր ո վ :

Ի ր հ եր թ ի ն , հ ա ն ր ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն
ի ր ա վ ու ն ք ի հ ա ր կ ա դ ի ր յ ու ր ա ց մ ա ն հ ի մ ք ը
հ ա ն դ ի ս ա ց ո ղ ռ ե կ վ ի գ ի ց ի ա յ ի ի ր ա վ ա կ ա ն
կ ա ր գ ա վ ո ր ու մ ը խ ն դ ր ա հ ա ր ու յ ց է . խ ն դ ի ր ը
ռ ե կ վ ի գ ի ց ի ա յ ի հ ի մ ք ո վ գ ու յ ք ն առ ա ն ց
ս ե փ ա կ ա ն ա տ ի ր ո ջ հ ա մ ա ձ ա յ ն ու թ յ ա ն օ տ ա ր ե լ ու մ ե ջ է ,
ու ս տ ի , առ ա ջ ա ր կ ու մ ե ն ռ ե կ վ ի գ ի ց ի ա յ ի հ ե տ ա գ ա
ի ր ա վ ա կ ա ր գ ա վ ո ր ու մ ն ի ր ա կ ա ն ա ց ն ե լ ի ս
ց ու ց ա ք եր ե լ տ ա ր ք եր ա կ վ ա ծ մ ո տ ե ց ու մ ` հ ա շ վ ի
առ ն ե լ ո վ ռ ե կ վ ի գ ի ց ա յ ի ե ն թ ա կ ա գ ու յ ք ի
առ ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն եր ը , ի ս կ ա յ դ ի ն ս տ ի տ ու տ ը

նախատեսելու չթեոքոպեսուսեփականության իրավունքի դադարման, այլ այդ իրավունքի սահմանափակման հիմք: Դրանից ելնելով՝ արտակարգ բնույթ կրող հանգամանքների վերանալու դեպքում նախատեսելու սեփականատիրոջ գույքը հետվերադարձնելու և վնասները փոխհատուցելու իրավունքը և դրա իրականացման մեխանիզմները: 2

Բացի այդ, Հասարակության և պետության կարիքների համար գույքն օտարելը պետական սեփականության իրավունքի ծագման, իսկ մասնավոր, երբեմն էլ համայնքային սեփականության իրավունքների դադարման հիմք է: Հետևաբար, հասարակության և պետության կարիքների համար օտարվող գույքի նկատմամբ ծագում է պետության սեփականության իրավունքը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է վերանայել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով հասարակության և պետության կարիքների համար սեփականությանը հօգուտ կազմակերպությանն օտարվելու հնարավորությունը (6-րդ հոդվ., 1-ին մ.):

3.2. Հանրային սեփականության իրավունքի դադարման հիմքերի առանձնահատկությունները

Մասնավոր սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների դադարման ընդհանուր հիմքերը նախատեսված են ՀՀ քաղ. օր-ի 17-րդ գլխում: Այս գլխում նշված հիմքերի մեծ մասը հանրային սեփականության չթեոքոպեսուսեփականության չթեոքոպեսուսեփականության հիմքերն են, մասնավորապես՝ ռեկվիզիցիան, հանրային գերակա շահի հիմքով մասնավոր սեփականության օտարումը, մշակութային արժեքներն անտնտեսվար պահելու պարագայում և այլն: Բացի այդ, հանրային սեփականության

իրավունքի դադարման հիմքերը պետք է փնտրել նաև
ՀՀ քաղ. օր-ի 11-րդ գլխում:

ՀՀ քաղ. օր-ի 279 հոդվածի 1-ին մասի համաձայն՝
սեփականույթյան իրավունքը դադարում է
սեփականատիրոջ կողմից իր գույքն՝

- օտարելու .
- սեփականույթյան իրավունքից հրաժարվելու .
- գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ
սեփականույթյան իրավունքի կորստի՝ օրենքով

նախատեսված այլ դեպքերում:

Սեփականույթյան իրավունքի դադարման
հիմքերից է գույքի ինքնակամ օտարումը: Գույքի
օտարումը սեփականատիրոջ տնօրինման
լիազորույթյան իրականացման ձևերից մեկն է,
հետևաբար, գույքն օտարելու սեփականատիրոջ
իրավունքը սեփականույթյունը տնօրինելու
եղանակներից է: Հոդվածի 1-ին մասում ամրագրված
դրույթը վերաբերում է նաև պետությանը, սակայն,
նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ
պետության սեփականույթյանը պատկանող գույքն
օտարվում է քաղաքացիներին և իրավաբանական
անձանց մասնավորեցման մասին օրենքով սահմանված
կարգով: Մասնավորեցման հատուկ կարգը սահմանվել
է «Պետական գույքի մասնավորեցման
(սեփականաշնորհման) մասին» 1997 թվականի ՀՀ
օրենքով (այսուհետ՝ Մասնավորեցման մասին օրենք),
որի 3-րդ հոդվածով մասնավորեցումը սահմանվել է
որպես պետական գույքի նկատմամբ սեփականույթյան
կամ այլ գույքային իրավունքների օտարում
ֆիզիկական և իրավաբանական անձանց ու
իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող
ձեռնարկույթյուններին:

Մասնավորեցման մասին օրենքը կարգավորում է
պետական գույքի մասնավորեցման
հարաբերույթյունները: Այն չի կարգավորում

համայնքային գույքի մասնավորեցման հարաբերությունները՝ համայնքներին դասելով մասնավորեցման սուբյեկտ ֆիզիկական և իրավաբանական անձանց շարքին (հոդվ. 1-ին, 5-րդ):

Անհետևանգական գտնվելով՝ օրենսդիրը պարտադիր չի համարել համայնքային գույքի ապահանջայնացման համար մասնավորեցման մասին օրենսդրության կանոնները: Մասնավորեցում նշանակում է ապահանջայնացում, իսկ համայնքային սեփականությունը, լինելով հանրային, ևս պետք է մասնավորեցնել պետական սեփականության մասնավորեցման ընդհանուր կանոններով: Բացի այդ, համայնքային գույքի որպես հանրային գույքի տեսակի մասնավորեցման սկզբունքները նույնն են ինչ պետական գույքի մասնավորեցմանը: Մասնավորեցման մասին օրենքի 2-րդ հոդվածով պետական մասնակցությունամբ ընկերությունն այն ընկերությունն է, որի բաժնետոմսերի 50 կամ ավելի տոկոսը պետական կամ համայնքի սեփականությունն է: Իրավաբանական այս անհասկանալի կարգավորման արդյունքում համայնքային գույքի մասնավորեցման հարաբերությունները չկարգավորող օրենքը, այնուամենայնիվ, կարգավորում է համայնքային սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի և բնակելի շենքերում համայնքային սեփականություն համարվող ընդհանուր օգտագործման տարածք չհամարվող ոչ բնակելի տարածքները մասնավորեցնելու իրավահարաբերությունները: Համեմատության կարգով նշենք, որ «Պետական և համայնքային գույքի մասնավորեցման մասին» 2001թ. ՌԴ ֆեդերատիվ օրենքի կարգավորման տիրույթում նաև համայնքային գույքն է:¹⁷⁹

¹⁷⁹ Ф3 «О приватизаций государственного и муниципального имущества» 2001г. // http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_177714/ (01.06.2015)

Մասնավորեցման մասին օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ մասնավորեցման սուբյեկտներ կարող են հանդիսանալ պետական ընկերությունները, որի սահմանումը, անհասկանալի պատճառներով, օրենքը չի տալիս: Մինչև 2002 թվականը մասնավորեցման մասին օրենքի 2-րդ հոդվածով ոչ պետական ընկերություններ համարվում այն ընկերությունը, որի բաժնետոմսերի 50 տոկոսից ավելին քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունն է, իսկ պետական մասնակցությունը ընկերությունն՝ որի բաժնետոմսի 50 կամ ավելի տոկոսը պետական կամ համայնքի սեփականությունն է: Փոխարենը ռուսական օրենսդրությունը սուբյեկտներ-գնորդների (покупатели) ցանկին չի դասում ոչ միայն պետական և համայնքային ունիտար կազմակերպություններին և հաստատություններին, այլև այն իրավաբանական անձանց, որոնց կանոնադրական կապիտալում պետության և/կամ համայնքի մասնակցությունը գերազանցում է քսանհինգ տոկոսը:¹⁸⁰

08.10.02թ. ՅՕ-423-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում հոդվածից հանվեց ոչ պետական ընկերությունները սահմանող իրավական նորմը, որի արդյունքում «պետական ընկերություններ» արտահայտությունն ավելորդությունից վերածվեց անորոշության: Մյուս կողմից, օրենքը չի հստակեցնում, թե մասնավորեցման սուբյեկտարդյոք կարող են լինել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները, ինչպիսիք են, օրինակ, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները: Եթե այո, ապա մասնավորեցման գործընթացը կարող է դառնալ հանրային սեփականության յուրացման ճանապարհ,

¹⁸⁰Նույն տեղում,

քանի որ պետական ոչ առևտրային կազմակերպությունները փաստացիորեն գտնվում են պաշտոնատարան ձևացիչ խանութայիններքո:

Բարձրագույն խնդիրն ավելի է կարևորվում այն պայմաններում, երբ Մասնավորեցման մասին օրենքը պետական գույքի մասնավորեցման հատուցելիությունն ախապայման-դրությամբ չի սահմանում:

Հանրային իրավական կազմավորումների կողմից գույքային գործարքների, հատկապես, օտարման գործարքների հատուցելիությունն սկզբունքորեն վրոպական զարգացած իրավական համակարգերի բոլոր երկրներում, գործող սկզբունք է: Պետական գույքի օտարման գործարքների հատուցելիությունն սկզբունքորեն պետության բյուջետային կառուցվածքի սկզբունքի բաղադրատարրն է: Մասնավորապես, ՌԴ-ի համապատասխան օրենքով պետական և համայնքային գույքի մասնավորեցման (приватизация) ներքո հասկացվում է գույքի հատուցելի օտարումը: Ուստի, թեև օրենքում ուղղակիորեն նշված չէ հանրային գույքը օգտագործելու և տնօրինելու գործարքների հատուցելիությունն սկզբունքորեն, այնուամենայնիվ, այն որպես այդպիսին բյուջետային իրավունքի առանցքային սկզբունքներից մեկն է: ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն պաշտոնական՝ privatization.am, կայքի ուսումնասիրությամբ գույք տվեց, որ վարչության կողմից իրականացվում են անհատույց օտարման նվիրատվության գործարքներ, պետական և համայնքային կազմակերպությունների հիմնադրման դեպքում սեփականության ամրացման և այլ գործարքներ: Հանրային գույքի օտարման հատուցելիությունն սկզբունքորեն շրջանցում է նաև

պետական գույքի կառավարման մասին օրենքի նոր տեքստը:

Գործող քաղաքացիական օրենսդրությամբ հանրային գույքի օտարման հնարավոր հիմք կարող է լինել քաղ. օր-ի 627-րդ հոդվածը: Ըստ այդ հոդվածի՝ օրենքով կամ վարձակալության պայմանագրով հնարավոր է նախատեսել, որ □վարձակալած գույքը, վարձակալության ժամկետը լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալը, անցնում է վարձակալի սեփականությանը՝ վարձակալի կողմից պայմանագրով պայմանավորված ամբողջ գումարը վճարելու պայմանով □: Հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վարձակալության պայմանագրում վարձակալած գույքը գնելու պայման նախատեսված չլինելու դեպքում, այդպիսի դրույթ կարող է սահմանվել կողմերի միջև կնքվող լրացուցիչ համաձայնությանը:

Քաղ. օր-ում հատուկ դրույթ, որը կբացառեր հանրային գույքի մասով սույն նորմի կիրառումը, սահմանված է: ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածը նախատեսում է պետության և համայնքային սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ դրույթ, սակայն, այդ դրույթը չի կարող դիտվել որպես բացառություն ընդհանուր կանոնից: Նման բացառության գոյությունը ենթադրվում է պետական գույքը միայն մասնավորեցնելու ճանապարհով օտարելու իրավական դրույթից՝ սողանցք թողնելով համայնքային գույքի համար: Այդ իսկ պատճառով, իրավական որոշակիության պահանջն ապահովելու համար անհրաժեշտ է հստակ վերապահում նախատեսել ինչպես պետական, այնպես էլ համայնքային գույքի վարձակալության դեպքում հանրային գույքի առանց մասնավորեցման գործընթացի իրավական

Երաշխիքներին ապահովման օտարուժը կանխելու համար:

Սեփականության իրավունքի դադարման մյուս հիմքը գույքից հրաժարվելն է: ԶՅ քաղ. օր-ի 280-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության, իսկ օրենսգրքի 275-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ գույքը հետ չպահանջելով: Գույքի նկատմամբ սեփականության իրավունքը դադարում է նաև այն դեպքում, երբ այդ գույքի սեփականատերը ոչնչացնում է այն (Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3032/02/09 քաղ. գործով 2011թ. որոշում): Անդրադառնալով սեփականատիրոջ կարևորագույն իրավագործություններից մեկին՝ *jus abutendi*-ին, նշենք, որ պետական և համայնքային մարմինները լիազորված չեն իրենց հայեցողությամբ պետական գույքից հրաժարվելու կամ ոչնչացնելու մասին որոշում կայացնելու՝ բացառությամբ օրենքով վերապահված դեպքերում: Այդպիսի բացառությունը կարող է նախատեսվել բացառապես հանրային շահի ապահովման շրջանակներում, օրինակ, զինամթերքի ոչնչացման դեպքում: Գույքից հրաժարվելը միակողմանի գործարք է, որը, բնականաբար, անհատույց է, իսկ հանրային սեփականության իրավունքի կարևորագույն սկզբունքներից է օտարման գործարքների հատուցելիությունը: Բացի այդ, հաշվի առնելով գույքի պետական սեփականության լինելու կանխավարկածի մասին

դրույթը՝ պետությանը նման իրավագործության շնորհելը իմաստագուրկ է: Ավելին, սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք է գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքներն ու պարտականությունները դադարելու համար, մինչև այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը:

Հանրային գույքի օտարման գործարքների հատուցելիության սկզբունքի ճանաչումն ինքնին չի բացառում ընդհանուր հատուցելիության կանոնից բացառություններ սահմանելու հնարավորությունը: Պարզապես այդ բացառությունները պետք է նախատեսվեն բացառապես ի իրականացումն հանրային շահի և, բնականաբար, սպառիչ կերպով ու հստակ սահմանվեն օրենքով: Այսպես, ՀՀ քաղ. օր-ի 180-րդ հոդվածի 2-րդ կետով կորցրած գույքը գտնողը պարտավոր է այդ մասին անհապաղ հայտնել գույքը կորցրած անձին կամ գույքի սեփականատիրոջը կամ իրեն հայտնի որևէ այլ անձի, որն իրավունք ունի ստանալ այդ գույքը և վերադարձնել այն: Ի տարբերություն \$իզիկական անձանց՝ համայնքն իրավունք չունի հրաժարվել գտնված գույքն ի սեփականություն ընդունելուց. այն դեպքում, երբ գույքը գտնողը հրաժարվում է գտնված գույքը վերածել իր սեփականության, այն նորմատիվ իրավական ակտի հիման վրա դառնում է համայնքի սեփականությունը՝ անկախ համայնքի կամքից: Նույն կերպ կարգավորված են նաև առանց հսկողության թողնված կենդանիների նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման հարցերը (ՀՀ քաղ. օր-ի 183-րդ հոդվ.), անժառանգ գույքի բացման վայրի համայնքի սեփականության դեպքում (ՀՀ քաղ. օր-ի 1224-րդ հոդվ. 2-րդ մ.) և այլն:

Այս դեպքերում համայնքի համար գույքից հրաժարվելու հրավույնք չնախատեսելը խնդրահարույց է քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների հավասար հնարավորությունների և կամքի ինքնավարություն սկզբունքների իրականացումն ապահովելու տեսանկյունից: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվություն ամբողջ տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի սեփականությունը տնօրինելու և համայնքային նշանակություն հարցերը լուծելու հրավույնքնուկարողություն է: Համայնքների ինքնավարությունն ամրապնդվում է 4-րդ հոդվածով, որն ամրագրում է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության վերաբերյալ դրույթը: Համայնքների համար հրաժարվելու հրավույնքի բացառումը զգալի կլինի հատկապես այն ժամանակ, երբ սեփականությունն ընկալվի ոչ միայն որպես հրավույնք, այլև սոցիալական գործառույթ, երբ գույքի պահպանման հոգսը կարող է անհամեմատ մեծ կամ ոչ անհրաժեշտ հոգսեր պատճառի սեփականատիրոջը: Օրինակ, սկսած 2004 թվականից Ֆրանսիայում թվարկված դեպքերում համայնքները գտնվում են առաջին գծում, իսկ պետությունը ստանձնում է սեփականատիրոջ իրավունքներն ու պարտականությունները միայն համայնքների կողմից գույքից հրաժարվելու դեպքում: Սրանով Ֆրանսիական իրավունքն ապահովում է իշխանության իրականացման սուբսիդիարություն սկզբունքը, որով պետությունը գործում է այն դեպքում, երբ

համայնքները ի գործու չեն քայլեր ձեռնարկելու :¹⁸¹
Այս նկատառումներից ելնելով՝ կարծում ենք, որ
որոշակի մասնավոր դեպքերում անհրաժեշտ է
նախատեսել համայնքի՝ գույքից հրաժարվելու
իրավագործության իրականացման մեխանիզմները :

Քաղաքացիական օրենսգրքը սահմանում է
հանրային գույքի ինչպես ինքնակամ ու հարկադիր
դադարման հիմքեր, այնպես էլ այնպիսի հիմքեր, երբ
այդ իրավունքը դադարում է միայն մասնավոր
անձանց միակողմանի գործողությունների
արդյունքում :

ՀՀ քաղ. օր-ը նախատեսում է «հանրամատչելի
գույք» հասկացությունը՝ որպես սկզբնական
եղանակով սեփականության իրավունքի առաջացման
հիմք: Ըստ օրենսգրքի 175-րդ հոդվածի՝ այն
դեպքերում, երբ սեփականատիրոջ
համաձայնությունով կամ տեղական սովորույթներին
համապատասխան անտառներում, ջրավազաններում
կամ այլ տարածքներում թույլատրվում է բույսեր,
հատապտուղներ հավաքել, ձկնորսությունը զբաղվել
կամ այլ իրեր և կենդանիներ հայթայթել, այդպիսի
գույքի նկատմամբ սեփականության իրավունք է
ձեռքբերում հավաքողը կամ հայթայթողը :¹⁸²

Այս ինստիտուտն ի հայտ է եկել դեռևս
հռոմեական իրավունքի ժամանակներից : *Res nullius cedit primo
occupant* հռոմեական ասույթի տրամաբանությանը
տիրազուրկ գույքը հետևում է առաջին զավթողին,
իսկ *res communes* իրավական դրույթի դեպքում նման
«զավթման» օբյեկտ ձեռք է բերվել միայն
որսորդության, ձկնորսության միջոցով :
Հանրամատչելի գույքը չի կարող ձեռք բերվել և
իրացվել ձեռնարկատիրական կամ առևտրային

¹⁸¹ Տե՛ս *BioyX*. La propriété éminente de l'Etat // http://credo-multimedia.com/Bib_num/Articles%20New/La%20propr%C3%A9t%C3%A9%20%C3%A9minente%20de%20l%27Etat.pdf

¹⁸² Տե՛ս *S. Քարսեղյան*, նույն տեղում, էջ 290,

գործունեության շրջանակներում: Այն և ավագույն դեպքում կարող է իրականացվել տնտեսական գործունեության շրջանակներում: Հանրամատչելի գույքը կարող է լինել ցամաքային և ջրային այն տարածքներում, որոնք սեփականության իրավունքով պատկանում են պետությանը, համայնքին և մասնավոր անձանց¹⁸³: Արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրություններում այս երևույթն ի հայտ է գալիս «շրջելու ազատություն» հասկացության շրջանակներում: Ֆրանսերենում այն հայտնի է «droit d'accès à la nature», իսկ անգլերենում՝ «freedom to roam» և «right of public access to the wilderness», որը բառացի թարգմանվում է անմշակ հողերի հանրամատչելիության իրավունք: Անմշակ հողերում ազատ շրջելու իրավունքի ներքո, որպես սկանոն, հասկանում ենք յուրաքանչյուրի իրավունքը որոշակի հանրային կամ մասնավոր գույքի տիրապետության տակ գտնվող հողի հանգստի կամ որոշակի պայմաններով օգտագործելու համար:

Ժամանակակից իմաստով այս ինստիտուտն ի հայտ է եկել սկանդինավյան երկրներում (Չվեդերեն՝ allemansrätt, նորվեգերեն՝ allemannsretten, ֆիններեն՝ jokamiehenoikeus կամ jokamiehenoikeudet) և այդ մշակույթի մոտ երկրներում, ինչպիսին են Իսլանդիան, Շոտլանդիան և բալթյան երկրներ՝ Էստոնիան, Լատվիան, Լիտվան: Այս երկրներում, հատկապես, Չվեդիայում այս իրավունքը սովորույթային իրավունքի հիմնարար և գործող իրավունք էր, որի օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը բացակայում էր: Այնուհանդերձ, Չվեդիայում այդ իրավունքն իր ամրագրումը գտավ սահմանադրությունում, մասնավորապես՝ Չվեդիայում սահմանադրորեն սահմանվել է, որ «յուրաքանչյուր ոք allemansrätt-ի ուժով

¹⁸³ Տե՛ս **Андреев В.К.** О праве частной собственности в России (критический очерк). – М.: Волтер Клувер, 2007, էջ 54,

պէտք է ազատ մուտք ունենա բնական հարստություններին»:¹⁸⁴

Այս իրավունքը ներառում է հիմնական երեք իրավագործությունները՝ անցման իրավունքը, ժամանակավոր կացութային իրավունքը և բնութային բարիքներինց սահմանափակ օգտվելու իրավունքը: Մասնավորապէս, այն ներառում է վառելանյութ, վայրի հատապտուղներ, սուսկ հայթայթելու և ընտանի կենդանիներին արածացնելու, ջրային գոտիներում նավարկելու, բացօթյա կամ ճամբարային հանգիստ կազմակերպելու հնարավորությունները (Շվեդիայում, օրինակ, սահմանվում է երկօրյա ժամկետով բնակավայրի համար կամ այլ կերպ հանգիստ կազմակերպելու համար), սակայն չի ներառում անտառահատումներ, որսորդություններ իրականացնելու հնարավորություններ: Արգելվում է նաև մոտենալ նաև սեփականատերերի կացարաններին:

Անգլիայում և Ուելսում բնութային տարածքների հանրամատչելիութային իրավական ռեժիմը կիրառվում է միայն անմշակ հողերի նկատմամբ, մասնավորապէս. լեռների, ճախճախուտերի, զառիթափերի, տափաստանների և այլ նմանատիպ հողերի նկատմամբ, իսկ մշակովի հողերը, արոտավայրերն ու այգիները և նմանատիպ այլ տարածքներն այդ իրավունքի գործողութային տիրույթից դուրս են գտնվում:

Ազատ շրջելու իրավունքը հանդուրժողականութային դրսևորում է, որը գուցե իրավունք չէ, այնուամենայնիվ, դրա իրացման համար արգելք սահմանել օրենսդրորեն դժվար է: Ֆրանսիայի օրենսդիրը դիրքորոշմամբ, ով չի ճանաչում այդպիսի սուբյեկտիվ իրավունքը,

¹⁸⁴ *Plauen V. Fr.* L'allemansträtt ou une conception particulière du droit de propriété en droit suédois // http://www.persee.fr/web/revues/home/prescript/article/ridc_0035-3337_2005_num_57_4_19384,

որևիցե դրույթ չի կարող քրեականացնել կամ արգելել անձին ուրիշի սեփականության տարածքով ոտքով երթնելը, եթե չկա տեղաշարժման ազատությանը սահմանափակող ցանկապատ կամ զգուշացնող ցուցանակ այն մասին, որ այդ ազատության իրացումն իրավախախտ բնույթ ունի: Այս օրինակը ավելի քան ընդգծում է հանրային գույքի տեսակները դրանց օգտագործման կարգի հիմքով տարանջատելու գործնական նպատակահարմարությունը:

Այդ իրավունքից օգտվելը նաև պարտավորեցնում է անձին պահպանել, չփչացնել, չվնասել բնության բարիքները, պահպանել բնությանը: Բացի այդ, հանրային գույքից օգտվելու իրավունքին զուգահեռ անձն ունի նաև պարտականություն չխոչընդոտել այլ անձանց նույն այդ իրավունքից օգտվելուց: Նման գործնական լուծումը, որով անմշակ, ուշադրությունից դուրս մնացած հանրային հողատարածքներին կտրվի իրավական ռեժիմ տալով, ապահովում է գույքի հավանական վերադարձը տնտեսական շրջանառության:

Յանրայի սեփականությունն հանդիսացող հողամասերի համար սահմանված է հանրամատչելի գույք լինելու կանխավարկածը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ նորմատիվ կամ վարչական ակտով: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն՝ առանց որևէ թույլտվության, գտնվելու պետության կամ համայնքի սեփականությունն հանդիսացող բոլորի համար բաց հողամասերում և օգտվելու դրանցում եղած բնական օբյեկտներից՝ պահպանելով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերը:

Յանրամատչելի գույքի հետ կապված կարևորում ենք համայնքային և պետական շահերի հավասարակշռման հարցը: Ելնելով սեփականության

բ ո լ ո թ ռ ձ կ ե թ ի հ ա վ ա ս ար ու թ յ ա ն դ թ ու յ թ ի ց`
պ ե տ ու թ յ ու ն ը պ ար տ ա վ ո թ է ա պ ա հ ո վ ե լ մ ա ս ն ա վ ո թ և
հ ա ն թ ա յ ի ն շ ա հ ե թ ի , ի ն չ պ ե ս ն ա ն հ ա ն թ ա յ ի ն տ ար բ ե թ
մ ա կ ար դ ա կ ն ե թ ի` պ ե տ ա կ ա ն և հ ա մ ա յ ն ք ա յ ի ն շ ա հ ե թ ի
հ ա վ ա ս ար ա կ շ ռ ու մ ը : Ա յ ս պ ե ս , Ս կ ա ն ա լ ճ ի ֆ լ ո թ ա ն
պ ա շ տ պ ա ն ե լ ու հ ա մ ար լ ճ ու մ ար գ ե լ վ ե լ է
ձ կ ն ո թ ս ու թ յ ու ն ը , ի ն չ ը լ ճ ա մ ե թ ձ Ծ ո վ ա գ յ ու ղ
հ ա մ ա յ ն ք ի հ ա մ ար գ ո յ ու թ յ ու ն ը պ ա շ տ պ ա ն ե լ ու մ ի ա կ
մ ի ջ ո ց ն է թ : Ա յ լ կ ե թ պ ա ս ա ծ` ձ կ ն ո թ ս ու թ յ ու ն ն ա յ ս
հ ա մ ա յ ն ք ի տ ն տ ե ս ա կ ա ն մ շ ա կ ու յ թ ի է ա կ ա ն
բ ա ղ ա դ թ ա տ ար թ ն է : Ձ կ ն ո թ ս ու թ յ ու ն ն ար գ ե լ ե լ ու
վ ե թ ա բ ե թ յ ա լ ո թ ո շ ու մ կ ա յ ա ն ց ե լ ն ի ն ք ն ի ն չ ի
խ ա խ տ ու մ գ յ ու ղ ա կ ա ն հ ա մ ա յ ն ք ի ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն
ի թ ա վ ու ն ք ը , ք ա ն ի ո թ հ ե տ ա պ ն դ ու մ է ի թ ա վ ա չ ա փ
ն պ ա տ ա կ , ս ա կ ա յ ն դ թ ա ար գ ե լ ու մ ը վ տ ա ն գ ե լ է
հ ա մ ա յ ն ք ի գ ո յ ու թ յ ու ն ը . ա յ ն ն պ ա ս տ ե ց գ յ ու ղ ա կ ա ն
հ ա մ ա յ ն ք ի ար ա գ դ ա տ ար կ մ ա ն ը , ո թ ի բ ն ա կ ի չ ն ե թ ի մ ե ծ
մ ա ս ն ար տ ա գ ա ղ թ ե լ ե ն` մ շ տ ա կ ա ն բ ն ա կ ու թ յ ու ն
փ ն տ թ ե լ ո վ ե թ լ ա ն ու մ կ ա մ Ռ ու ս ա ս տ ա ն ու մ : Յ ա մ ա յ ն ք ի
ա ն դ ա մ ն ե թ ի ն գ թ կ ե լ ո վ գ ո յ ու թ յ ա ն պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն
մ ի ա կ մ ի ջ ո ց ի ց` պ ե տ ու թ յ ու ն ը ն թ ա ն ց չ ի տ թ ա մ ա դ թ ե լ
փ ո խ հ ա տ ու ց ու մ` դ թ ա ն ո վ ի ս կ խ ա խ տ ե լ ո վ պ ե տ ա կ ա ն և
հ ա մ ա յ ն ք ա յ ի ն շ ա հ ե թ ի հ ա վ ա ս ար ա կ շ ռ ու թ յ ու ն ը :
Ո թ պ ե ս գ ի հ ա ն թ ա յ ի ն տ ար բ ե թ մ ա կ ար դ ա կ ն ե թ ի շ ա հ ե թ ը
պ ա շ տ պ ա ն վ ե ն , ա ն հ թ ա ժ ե շ տ է ն ա խ և ա ռ ա ջ ա մ թ ա գ թ ե լ
հ ա մ ա յ ն ք ա յ ի ն և պ ե տ ա կ ա ն շ ա հ ե թ ի հ ա վ ա ս ար ա կ շ ռ մ ա ն
ս կ գ թ ու ն ք ը , ա յ ն ու հ ե տ ն , կ ա ռ ու ց ե լ հ ա ն թ ա յ ի ն
ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի թ ա վ ու ն ք ի ի թ ա վ ա կ ա ն
կ ար գ ա վ ո թ ու մ ը` ե լ ն ե լ ո վ ա յ դ ս կ գ թ ու ն ք ի
տ թ ա մ ա բ ա ն ու թ յ ու ն ի ց :

Պ ե տ ա կ ա ն և հ ա մ ա յ ն ք ա յ ի ն շ ա հ ե թ ի
հ ա վ ա ս ար ա կ շ ռ մ ա ն և ա ն մ շ ա կ հ ո ղ ե թ ի օ գ տ ա գ ո թ մ ա ն
ն կ ա տ մ ա մ բ հ ա ն թ ա մ ա տ չ ե լ ու թ յ ա ն ի թ ա վ ա կ ա ն ռ ե ժ ի մ
ս ա հ մ ա ն ե լ ու հ ար ց ե թ ի ք ն ն ար կ ու մ ը կ ար ն ո թ ե ն
հ ա ն թ ա յ ի ն ս ե փ ա կ ա ն ու թ յ ա ն ի թ ա վ ու ն ք ի դ ա դ ար մ ա ն

մյուս հիմքին՝ ձեռքբերման վաղեմությանը անդրադառնալու համար: Ձեռքբերման վաղեմությունն օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ու ժողովեկան ձեռքբերման իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց է (ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0987/02/09 քաղ. գործով 2013թ. որոշում):

Սեփականության իրավունքի առաջացման համար անհրաժեշտ է օրենքով նախատեսված այն պայմանների առկայությունը, որոնք ներկայացվում են ձեռքբերող սուբյեկտին, ձեռքբերվող գույքին և վաղեմությամբ տիրապետելու և դրա ժամանակին: Քաղաքացիական օրենսդրությունը չի պարունակում որևէ այնպիսի նորմ, որը կարգել էր պնդել, թե ձեռքբերման վաղեմության պայմանները վերաբերելի են նաև հանրային սեփականությանը: Այնուամենայնիվ, ձեռքբերման վաղեմության ու ժողով հանրային գույքը մասնավորեցնելու հարաբերությունները կարիք են զգում հատուկ և մանրակրկիտ իրավական կարգավորման՝ չմոռանալով, որ ձեռքբերման վաղեմությունը սեփականության ձեռքբերման հիմնական միջոցը չէ:

Հանրային գույքն ապահանրայնացնելու գործընթացում մասնավոր սեփականության ձեռքբերման հիմքը կերպարանափոխվում է հանրային սեփականության սուբյեկտի վրա իրավունքի դադարման հիմքի: ՀՀ քաղ. օր-ի 11-րդ գլխի համաձայն՝ ձեռքբերման վաղեմությունը սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերից է, որն ուղղված է քաղաքացիական շրջանառությունից դուրս մնացած իրերը կրկին

շրջանառությունը վերադարձնելու ն¹⁸⁵ Այն հայտնի էր դեռևս Յիս Արևելքի իրավունքին և իր գոյությունը պահպանում է ժամանակակից եվրոպական զարգացած այնպիսի երկրների ազգային իրավական համակարգերում, ինչպիսիք են Ավստրիան¹⁸⁶, Գերմանիան¹⁸⁷, Շվեյցարիան¹⁸⁸, Ֆրանսիան¹⁸⁹ և այլն: Ձեռքբերման վաղեմությունը գոյություն ունի ԱՄՆ մի շարք նահանգների քաղաքացիական օրենսգրքերում, օրինակ Կալիֆոռնիայում¹⁹⁰ ՍՍՀՄ քաղաքացիական օրենսգրքում, հայտնի դրդապատճառներից ելնելով, նման ինստիտուտ չէր նախատեսում: Խորհրդային կարգերի փլուզումից հետո ՅՅ նոր քաղաքացիական օրենսգրքը վերականգնեց ձեռքբերման վաղեմության ինստիտուտը:

Ձեռքբերման վաղեմության ինստիտուտի գաղափարախոսությունը և արդի գործառույթները հասկանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ նրա ծագմանը: Իրավունքի հիմքում տրամաբանությունից բացի ընկած է նաև փորձը¹⁹¹,

¹⁸⁵ Տե՛ս **Մովսիսյան Կ.** Ձեռքբերման վաղեմությունը. տեսություն, օրենսդրություն, կիրառման պրակտիկա // Դատական իշխանություն, 2009, N 12/125, էջ 96,

¹⁸⁶ §§ 1432, 1451, Ավստրիայի քաղաքացիական օրենսգրք, // <http://www.ibiblio.org/ais/abgb1.htm> (01.09.2014),

¹⁸⁷ §§ 937-945 Գերմանիայի քաղաքացիական օրենսգրք, 1900 // Гражданское уложение Германии / научн. редакторы В. Бергман и др. – 3 изд., перераб. – М.: Волтерс Клувер, 2008, էջեր 350-351,

¹⁸⁸ § 872, Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրք, 1907// <http://www.admin.ch/ch/f/rs/2/210.fr.pdf>,

¹⁸⁹ հոդվ. 2229, 2262 - 2270-1, Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրք, 1804 // Французский гражданский кодекс / Научн. редактирование канд. юрид. наук Д.Г. Лаврова. – СПб.: Изд-во “Юридический центр Пресс”, 2004, էջեր 1084, 1092-1094:

Ֆրանսիական և անգլիական օրենսդրությամբ ձեռքբերման վաղեմությամբ կարող է ձեռքբերվել միայն անշարժ գույքը, իսկ գերմանական ու շվեյցարական օրենսդրությամբ՝ շարժական: Յաշվի առնելով, որ ՅՅ օրենսդրությամբ ձեռքբերման վաղեմության օբյեկտ նախատեսված է անշարժ գույքը, իսկ մասնավոր իրավական ավանդույթների առումով հայ իրավունքն ավելի մոտ է ֆրանսիական իրավական համակարգին, ապա նպատակահարմար ենք համարում անդրադառնալ ֆրանսիական իրավունքին:

¹⁹⁰ § 1007, Կալիֆոռնիայի քաղաքացիական օրենսգրք, 1872 // <http://www.leginfo.ca.gov/cgi-bin/calawquery?codesession=civ&codebody=&hits=20>,

¹⁹¹ Յայտնի է իրավագետ Օ.Յոլմսի «իրավունքի հիմքում փորձն է» արտահայտությունը: Տե՛ս Holmes O.W., The common law, 1881,

պատմական փորձը: Իր հերթին պատմական մեթոդի հրամայականն է՝ իմանալ հռոմեական իրավունքը նոր օրենսդրությունը գրագետկառուցելու համար:

Դեռևս հին Յոնի իրավաբան Գայոսը նշել է, որ ձեռքբերման վաղեմությունը (*usucapio*) դուրս է բերվել հասարակական բարիք (*bono publico*) ըմբռնումից, որը նպատակ ուներ երկարատև կամ մշտապես սեփականատիրական հարաբերությունները գերծպահել անվստահություններից և անորոշություններից: Գավառներում հռոմեական ղեկավարները, իսկ այնուհետև ևս կայսրական օրենսդրությունը, հողօգտագործման անկման և հողերի լքման դեմ պայքարում ներմուծեցին ձեռքբերման վաղեմությունը: Այն հիմնված էր հելլենիստական այն սկզբունքի վրա, ըստ որի՝ չի կարելի պահպանել այն իրավունքը, որը երկար ժամանակ մատնված է եղել արհամարհանքի: Նոր ինստիտուտին տրվել է դատավարական *praescriptio longi temporis* անվանումը¹⁹²:

Մխիթար Գոշի «Գիրք դատաստանին» և սահմանում էր, որ շեներնու հողերը կդառնան ժառանգական, եթե շինականներն իրենց միջոցներով ու սեփական աշխատանքով ավերակները շեն դարձնեն («աւերւշինեսցեն») և հողը մաքրեն մայրիներից (վայրի անտառներից)¹⁹³: Նման ինստիտուտը ծանոթ էր և Օսմանյան կայսրության հպատակներին: Օսմանցին, ինչպես գրում է Խաչիկ Դաշտենցը, մի օրենք ուներ. եթե մեկը տաստարի օգտագործում էր մի արոտավայր, այդ արոտավայրը կամ կալվածքը դառնում էր նրա սեփականությունը¹⁹⁴: Յետևաբար, իսկզբանես ույն ինստիտուտն առաջացել է առավելապես որպես

¹⁹² Տե՛ս *Новицкий И.Б.* Римское право: Учебник, М., 2002, էջ 210,

¹⁹³ Տե՛ս *Խաչատրյան Մ.Ա.* Հողի սեփականության իրավունքը Գոշի դատաստանագրքում // Դատական իշխանություն, 2007, N 8/97 (օգոստոս), էջ 71,

¹⁹⁴ Տե՛ս *Դաշտենց Խ.* Ռանչպարների կանչը: Վիպասք հայ շինականների կյանքից: Առաջաբանը Ս. Աղաբաբյանի: Վերջաբանը Մ. Գալշոյանի: Եր.: Սովետգրող, 1984, էջ 18,

հանրային գոլթի դադարման հիմք: Այս ինստիտուտի զարգացման պատմությունը վկայում է, որ դրա պահանջարկը մեծանում է հանրային գոլթի արդյունավետ և համաչափ կառավարելու անհրաժեշտության դեպքում: Ձեռքբերման վաղեմությունը սեփականության սոցիալական գործառույթի դրսևորումներին է, որը նախապատվություն է տալիս նրան, ով հարգում է գոլթի գործառույթները՝ խրախուսելով դրա շահագործումը պասիվ սեփականատիրոջ ունից: Այսինքն, այն երաշխավորում է սոցիալական խաղաղությունը՝ խրախուսելով այն անձի կողմից հաստատված իրավիճակի պահպանությունը, ով ներկայանում է որպես գոլթի սեփականատեր, ընդհուպ այն անձի իրավունքներին դեմ, ով իրապես գոլթի սեփականատեր է, սակայն երբևէ կամ օրենքով նախատեսված ժամանակահատվածում այդ մասին չի բարձրաձայնել ¹⁹⁵: Ձեռքբերման վաղեմության ճանապարհով սեփականատիրոջ ունի հաստատելը մարդու հոգեբանական ներաշխարհին հարազատ ներդաշնակ է: Ավելին, այս ինստիտուտը մասնավոր, հետևաբար և քաղաքացիական իրավունքի էությունն ու փիլիսոփայությունը բովանդակող դասական նմուշներին է:

Իրավաբանական գրականության մեջ ձեռքբերման վաղեմության՝ որպես մասնավոր սեփականության իրավունքի դադարման հիմքի վերաբերյալ առկա կարծիքները բացասական են, իսկ հանրային սեփականության հարցում նման քննարկումները գրեթե բացակայում են:

Այն դեպքում, երբ Յայաստանի Յանրապետությունում առկա է հողի գերխնդիր (իսկ

¹⁹⁵ Այն ունի նաև ապացուցողական նշանակություն՝ հնարավորություն տալով հարթեցնել probation diabolica («devil's proof») իրավիճակը:

Երբեմն այդ խնդիրը ծայրահեղ լուծումներ է
 ստանում, ինչպես, օրինակ, դիահրկիզումը
 /կրիմատորիան /, սրվել է աղքատությունն ու
 սոցիալական անապահովության հարցը,
 սահմանամերձ տարածքների լքումը, արտագաղթը և
 այլն, հանրային սեփականության նկատմամբ
 ձեռքբերման վաղեմության ինստիտուտի
 տարածումն ավելի քան անվնաս է, եթե ոչ օգտակար:
 Այն կնպաստի շրջանառությունից դուրս մնացած
 գույքը վերադարձնել շրջանառություն, լուծել
 գույքի տիրազրկության, սեփականատիրոջ
 սոցիալական ապահովության հարցերը, գույքը
 կհանձնի նրան, ում այն ավելի պետքական կլինի՝
 դրանով իսկ նպաստելով սոցիալական արդարության
 իրականացմանը: Սեփականության ձևերի հավասար
 իրացումն ապահովելու նկատառումից ելնելով՝
 ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային
 գույքը տիրապետման վաղեմությամբ ձեռքբերելու
 հնարավորությունն պետք է նախատեսել:
 Օրենսդրական նման կարգավորմանն ուղղված
 առաջարկը, բնականաբար, պետք է իրականացվի
 որոշակի վերապահմամբ: Ենթադրելով սկզբունքային
 առումով հանրային գույքը կարող է
 մասնավորեցվել ձեռքբերման վաղեմությամբ,
 սակայն անհրաժեշտ է ՅՅ քաղաքացիական
 օրենսդրությամբ սահմանել հանրային
 սեփականության այն սպառնիչ շրջանակը, որը ձեռք
 բերվել չի կարող: Մասնավորապես, դեռևս 12
 աղյուսակները բացառում էին ձեռքբերման
 վաղեմության գործողությունը գերեզմանների
 նկատմամբ (Forum sepulcri): Այս վերապահումը վերաբերում է
 հողերին, պատմամշակութային արժեքներին,
 արգելոցներին, վարչական գույքին: Նման

վերապահում սահմանել է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածը ¹⁹⁶:

Հիմնավոր է նաև ձեռքբերման վաղեմության չարաչափի մտավախությունը. ձեռքբերման վաղեմության գործառնությունը քաղաքացիական շրջանառությունից դուրս մնացած իրերը կրկին շրջանառություն վերադարձնելն է ¹⁹⁷, բայց ոչ որպես հարստահարման աղբյուր: Հանրային գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմությամբ սեփականության իրավունքը ճանաչելիս որոշ

¹⁹⁶ Արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել հանրային (պետական և համայնքային) սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք (1) պատմական մշակութային արժեքների օբյեկտներ են, (2) բնության հատուկ պահպանվող տարածքներից պետական բնական արգելոցներ են, բնության պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ, ազգային զբոսայգիներ, ծառաբանական զբոսայգիներ, բուսաբանական այգիներ, ինչպես նաև այդ նպատակների համար պահեստավորված տարածքներ, (3) օրենքով պաշտպանվող սանիտարական պահպանության տարածքների սահմանների շրջանում բուժիչ-առողջարանային վայրեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը, (4) զբաղեցված են պետական սեփականություն հանդիսացող անտառով, (5) պետական մելիորատիվ համակարգերի կամ ջրային ֆոնդի կազմի մեջ մտնող ջրային օբյեկտների հողեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը, (6) բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ), (7) պետության կողմից հաշվառված և գրանցված օգտակար հանածոների տեղադրվածություններ են, (8) ենթարկված են նախնական տիվ և քիմիական աղտոտման, կենսածին վարակման, (9) կառավարության սահմանած ցանկով տրամադրված են պետական գիտահետազոտական կազմակերպություններին (կրթական, սելեկցիոն և այլն)՝ մինչև սահմանված կարգով դրանց լուծարումը, (10) զբաղեցված են համայնքի վարչական սահմաններից դուրս ընդհանուր օգտագործման արոտավայրերով, անասունների անցատեղերով, ճանապարհներով, բնական ջրհորներով, աղբյուրներով և տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, այլ օբյեկտներով, (11) ջրային օբյեկտների և ավազանների առափնյա շերտերի, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային, երկաթուղային ճանապարհների, խողովակաշարային և այլ տրանսպորտի համար առանձնացված շերտերի, էլեկտրահաղորդիչ գծերի, մայրուղային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, գազատարների, ջրանցքների, ինչպես նաև դրանց հեռանկարային զարգացման համար առանձնացված (պահեստավորված) հողեր են, (12) վիճելի տարածքներ են՝ մինչև վեճերի լուծումը, (13) հատուկ նշանակության հողեր, գինվորական և քաղաքացիական գերեզմանոցներ են, (14) օրենքով սահմանված այլ հողամասեր:

¹⁹⁷ **Սովսիսյան Վ.** Ձեռքբերման վաղեմություն. տեսություն և օրենսդրություն, կիրառման պրակտիկա // Դատական իշխանություն, 2009, N 12/125, էջ 96,

դեպքերում, ելնելով հանգամանքների առանձնահատկություններին, պետք է հաշվի առնել ոչ միայն բարեխիղճ, երկարատև տիրապետելու հանգամանքները, այլև ձեռք բերողի սոցիալական վիճակն ու դրա օգտագործման նպատակները: Ձեռքբերման վաղեմությունը կարող է լինել պետական գույքի մասնավորեցման (ապահանջայնացման) հնարավոր արդյունավետ միջոցներից մեկը, որի շնորհիվ յուրաքանչյուրը կարող է ձեռք բերել այնքան, որքան կարող և անհրաժեշտ է իրեն՝ նպաստելով պարարտ հողերի և չօգտագործվող գույքի արդյունավետ օգտագործմանը:

ՀՀ քաղ. օր-ի 202-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման նպատակով կարող են փոխանցվել այլ անձանց միայն սեփականության իրավունքով, բացառությամբ օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին դիվանագիտական և ներկայացուցչական նպատակների համար տրամադրելու դեպքերի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերի, որոնց փոխանցումը սեփականության իրավունքով արգելված է:

Հանուն արդարության անհրաժեշտ է մասնավոր սեփականության օբյեկտների տեսակների նկատմամբ տարբերակված իրավակարգավորում սահմանել և ընդհանուր կանոնից բացառություններ նախատեսել. անթույլատրելի է բնակարանի և հողի նկատմամբ ձեռք բերման վաղեմության միանման կանոնների կիրարկումը: Հողի սեփականատիրոջ սոցիալական

գործառույթներին քիսոք պարտականություններով
բեռը ծանր է ավելի, քան բնակարանինը, բացի այդ,
բնակարանը մարդու հիմնական կացարան է, որն ունի
անձի համար կենսական կարևոր նշանակություն և
կապվածություն, հատկապես, օտար երկրում գտնվող
գաղթական հայի համար:

Այս պիսով, ցանկացած գույքը ստեղծության կարող
է ձեռք բերվել տիրապետմամբ: Տեսականորեն
հնարավոր է սեփականության իրավունքի
ճանաչումը հանրային իրավական
կազմավորումների կողմից տիրազուրկ թողնված
գույքի նկատմամբ, բայց ՀՀ օրենսդրությունը չի
նախատեսում տիրազուրկ, այդ թվում՝ տիրազուրկ
անշարժ գույքը, պետական սեփականություն
դարձնելու հնարավորություն:¹⁹⁸

ՀՀ քաղ. օր-ի 168-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝
քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ
համայնքներին չպատկանող հողը և բնական այլ
պաշարները պետական սեփականություն են: Այդ
սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ
հողային օրենսգրքի 55-րդ հոդվածում:
Օրենսդրական այս դրույթը կոչվում է
կանխավարկած: Կանխավարկածի ասելով՝
իրավունքում հասկանում են փաստի իրավաբանորեն
հավաստի ճանաչումը, քանի դեռ չի ապացուցվել
հակառակը: Չհաստատված երևույթները կամ փաստերը
ենթադրվում են հաստատված և գոյություն
ունենցող, որոնց հետ կապվում են իրավական
հետևանքները: Գործող օրենսդրությունում
կանխավարկածների օրինակները բազմաթիվ են՝
անմեղություն կանխավարկածը, դատավարական
իրավունքում դատարանի կողմից օրենքի պատշաճ

¹⁹⁸Տե՛ս **Բարսեղյան Տ.**, նույն տեղում, էջ 292,

ի մաց ու թյան կանխավարկածը (juria novit curia)¹⁹⁹ և այլն: Քաղաքացիական իրավունքում գործում է շարժական գույքը տիրապետողի սեփականու թյան իրավունքի կանխավարկածը (հակառակ դեպքում, հնարավոր կլինեի կասկածի տակ առնել շարժական գույքի ցանկացած տիրապետում): Կանխավարկածը ելնում է հավանականու թյան և ճշմարտացի ու թյան ավելի բարձր աստիճանից և կլինել ով ենթադրվող՝ հերքման ենթակա ճշմարտություն է:

Վճռաբեկ դատարանը, ընդունելով պետական հողը տիրազուրկ ճանաչելու ինստիտուտ գոյություն չունենալու փաստը, իր նախադեպային իրավունքում ընդգծում է, որ *հողի նկատմամբ սեփականու թյան կանխավարկածի սկզբունքի բովանդակությունը կայանում է նրանում, որ սեփականատեր չունեցող բոլոր հողերը համարվում են պետության սեփականությունը: Այսինքն, ըստ դատարանի, եթե գործում բացակայում են ապացույցներ հողի՝ քաղաքացու, իրավաբանական անձի կամ համայնքի սեփականություն կլինելու վերաբերյալ, ապա այն համարվում է պետական սեփականություն (Վճռաբեկ դատարանի թիվ 3-340(ՎԴ)2007 և թիվ 18,3-1835(Ա) քաղ. գործերով 2007թ. որոշումներ):*

Իրավանորմի նման մեկնաբանման արդյունքում այն դրույթը, որ անշարժ գույքը փոխանցված է համարվում սեփականու թյան իրավունքի գրանցման պահից, կրում է բացառություն ընդհանուր կանոնից, իսկ մասնավոր կամ համայնքային հողը տիրազուրկ ճանաչելու պարագայում այն մեխանիկորեն ճանաչվում է պետական սեփականություն: Իրականում, պետության սեփականու թյան իրավունքի ծագման համապատասխան իրավական նորմից բացի անհրաժեշտ

¹⁹⁹ 5-րդ սկզբունք, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 13.10.1994 թվականի թիվ 9412 հանձնարարական:

